ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստան 2020

Բաց Հասարակության
Հիմնադրամներ
Հայաստան

ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ 2020

2019թ. ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկում են իրականացրել դիտորդների խմբի հետևյալ անդամներն ու փորձագետները՝ Անահիտ Մկրտչյանը, Արա Ղարագյոզյանը, Արայիկ Զալյանը, Զարուհի Հովհաննիսյանը, Լիլիթ Ղաբուզյանը, Լուիզա Վարդանյանը, Կարինե Կիրակոսյանը, Հայկ Հակոբյանը, Հասմիկ Հարությունյանը, Նարե Հովհաննիսյանը, Նարինե Շելելենկյանը, Շուշան Խնկոյանը, Ռոբերտ Ռևազյանը, Ռուբեն Սարգսյանը, Սերգեյ Գաբրիելյանը, Սիրանուշ Դավթյանը, Սուրեն Նազինյանը, Տիգրան Դովլաթյանը, Օֆելյա Զալյանը:

Զեկույցի հեղինակներն են՝ Անահիտ Մկրտչյանը, Արման Սահակյանը, Զարուհի Հովհաննիսյանը, Լուիզա Վարդանյանը, Հասմիկ Հարությունյանը, Նարե Հովհաննիսյանը, Ռոբերտ Ռևազյանը:

Սույն հաշվետվությունում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական Խումբն է, և նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն Դիտորդական Խումբը: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքն և հաստատված չեն Բաց Հասարակության հիմնադրամ-Հայաստանի կամ խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բաց Հասարակության հիմնադրամ-Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն հաշվետվության բովանդակությունը կարող է չհամընկնել «Բաց Հասարակության հիմնադրամ Հայաստան»-ի տեսակետներին: Սույն հաշվետվության թողարկումը հնարավոր է դարձել Բաց Հասարակության հիմնադրամ-Հայաստանի ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ «Իրավունք և քրեական արդարադատություն» ծրագրի շրջանակում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ 4

1. ՆԱԽԱԲԱՆ 5

2. ԽՄԲԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

3. ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 11

4. ՄՆՆԴԻ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ 26

5. ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՄԱՀՎԱՆ ԵՎ ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԸ 2019Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ 29

6. ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ 33

6-1. Արտաքին աշխարհի հետ կապը 39

6-2. Ազատազրկված անձանց նկատմամբ կիրառված խրախուսանքները և տույժերը 46

7. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ 53

7-1. Կանանց և անչափահասների իրավունքները Աբովյան ՔԿՀ-ում 53

7-2. Պահման պայմաններ, պատշաճ կացարան 54

7-3. Պատժախուց և կարանտինային խցեր 61

7-4. Կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ 62

7-5. Կրթություն և զբաղվածություն 64

7-6. ՔԿՀ աշխատակազմի աշխատանքային պայմանները 66

7-7. Խտրականության դրսևորումները ԼԳԲՏ ազատազրկված անձանց նկատմամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 67

8. ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄՆԵՐԸ 71

9. ԱՄՓՈՓՈՒՄ 73

10. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 74

11-1 Հավելված 1 79

11-2 Հավելված 2 87

Հապավումներ

ՀՀ ԱՆ *– Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն*

ՔԿՀ *- Քրեակատարողական հիմնարկ*

ՊՈԱԿ *- Պետական ոչ առևտրային կազմակերպություն*

ՔԿԲՀ *- Քրեակատարողական բժշկության կենտրոն*

ԽԿԿ *- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտե*

ՏԲ *- Տուբերկուլյոզ*

ՔԿԾ *- Քրեակատարողական ծառայություն*

ԱԱԾ *- Ազգային անվտանգության ծառայություն*

1. ՆԱԽԱԲԱՆ

Սույն հաշվետվությամբ ներկայացվում են 2019 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի գործունեության հիմնական ուղղությունները, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ ընթացիկ և պլանային այցերի արդյունքում վեր հանված խնդիրներն ու ոլորտում արձանագրված դրական փոփոխությունները:

Մասնավորապես, Խմբի աշխատանքները կրկին կենտրոնացել են համակարգում առավել կարևորություն ունեցող հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ ազատազրկված անձանց բժշկական օգնության տրամադրումն ու առողջության պահպանումը, քրեական ենթամշակույթի հիմնախնդիրները ՔԿՀ-ներում, ազատազրկված անձանց ինքնավնասումների և ինքնասպանությունների արատավոր պրակտիկան, դրանց չբացահայտված պատճառներն ու հետևանքները, ՔԿՀ-ների պահման պայմանները, սննդի որակն ու մատակարարման փոփոխությունները, ազատազրկված անձանց վերասոցիալականացման հեռանկարները և այլն: Հարկ է նշել, որ առաջին երեք հարցերի վերաբերյալ Խումբը իրականացրել է առանձին ուսումնասիրություն, որոնք հասանելի են Խմբի կայքում[1]:

2019 թվականին կրկին խնդրահարույց են հանդիսացել ՔԿՀ-ների պահման պայմանները, ինչը, չնայած ձեռնարկված քայլերի և հիմնարկների առանձին հատվածների վերանորոգումների, շարունակում է մնալ խիստ մտահոգիչ՝ ինչպես ազատազրկված անձանց իրավունքների, այնպես էլ ՔԿՀ աշխատակիցների իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Նմանապես, դեռևս բավարար չէ ազատազրկվածների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքներն, ինչը հանգեցնում է մի շարք խնդիրների՝ կրկնահանցագործություն, ինքնավնասումներ,ինքնասպանություն և այլն:

Սրան զուգահեռ, սակայն, պետք է արձանագրել ոլորտում տեղի ունեցած դրական փոփոխությունները նույնպես: Մասնավորապես, ՔԿՀ-ներում 2019 թվականի տարեվերջին փորձարկված մասնավոր ընկերության կողմից սննդի մատակարարման գործընթացը դրական է գնահատվում ինչպես

[1]ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի կայք՝ www.pmg.am

ազատազրկվածների, այնպես էլ Խմբի կողմից: Նմանապես, օրենսդրական մակարդակում քայլեր են ձեռնարկվել պատժի կրումից ազատման ինստիտուտների արդյունավետ գործարկման առնչությամբ, ինչի արդյունքում նվազել է ազատազրկվածների թիվը: Այս հանգամանքը արձանագրվել է նաև Եվրոպայի խորհրդի քրեական վիճակագրության մասին ամենամյա զեկույցով, համաձայն որի՝ 2019թ. հունվարի դրությամբ Հայաստանում եղել է 2,266 բանտարկված՝ 2,965,269 բնակչության պարագայում, ինչը նշանակում է, որ երկրում ազատազրկվածների թիվը նվազել է 35.9%-ով՝ 2018-ի համեմատ (3,536)[2]:

Պետք է փաստել, սակայն, որ առանձին մեխանիզմների արդյունավետությունը, ինչպիսին է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատումը, էականորեն կապված է նախատեսվող ընթացակարգերի ու չափորոշիչների հստակությունից ու կանխատեսելիությունից, ինչի ուղղությամբ դեռևս նկատելի են լուրջ անելիքներ:

Վերոնշյալ և այլ ոլորտային հարցեր առանձին հանգամանալից ներկայացվում են ստորև:

[2] https://www.aravot.am/2020/04/07/1104797/

2. ԽՄԲԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի ընթացքում Խումբը շարունակել է այդ ժամանակաշրջանում գործող սահմանված կարգով իրեն վերապահված իրավասությունների ու գործառույթների իրականացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում, ի տարբերություն 2018 թվականի, Խմբին ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներից ստացվել է ավելի քիչ թվով ահազանգեր, ըստ այդմ, ՔԿՀ-ներ կատարված այցերի թիվը փոքր-ինչ ավելի քիչ է: Մասնավորապես, 2019 թվականին Խմբին ստացվել է թվով ընդհանուր 72 ահազանգ, կատարված այցերի թիվը եղել է 63: Պետք է նշել, որ 2018 թվականին ստացվել է 99 ահազանգ և կատարվել է 82 այցելություն:

Ստացված ահազանգերի, կատարված այցերի և ոլորտային ուսումնասիրությունների համար Խմբի կողմից ՀՀ ԱՆ և ոլորտը համակարգող այլ մարմիններ ներկայացվել է թվով 87 գրություն: Հատկանշական է, որ բուժսպասարկման ոլորտի և ազատազրկված անձանց առողջական վիճակի վերաբերյալ գրություններն էական մաս են կազմել՝ թվով 29: Թվով 25 գրությամբ Խումբը ներկայացրել է տարբեր առաջարկություններ վեր հանված խնդիրների վերաբերյալ, ներկայացրել է նաև օրենսդրական փոփոխությունների կոնկրետ առաջարկներ[3]:

Նախորդ տարիներին բարձրաձայնված մի շարք խնդիրներ արձանագրվել են նաև 2019 թվականին՝ կրկին հանդիսանալով Խմբի գործունեության և ուսումնասիրությունների առարկա:

Մասնավորապես, 2019 թվականի ընթացքում նույնպես Խմբի գործունեության և այցերի առանցքում եղել են ազատազրկված անձանց **առողջության պահպանման և որակյալ բուժօգնություն ստանալու հիմնահարցերը**, պատահական չէ, որ ահազանգերի գերակշիռ մասը վերաբերել է այդ հարցին: Խնդրի ուղղությամբ վերջին տարիներին անընդհատ ձեռնարկվել են քայլեր, իրականացվել մասնագետների վերապատրաստումներ և ՔԿՀ-ները հնարավորինս հագեցվել են անհրաժեշտ

[3] Օրենսդրական խնդիրների և առաջարկների հակիրճ ամփոփումը ներկայացվում է հաշվետվությանը կից հավելվածով 1-ով

տեխնիկայով: Սակայն, ինչպես ցույց են տալիս դիտորդների այցերը, բուժսպասարկումը դեռևս շարունակում է մնալ ոլորտի համակարգային խնդիրներից:

Այսպես, ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 1-ի 204-Ն որոշմամբ ՀՀ Արդարադատության Նախարարության ենթակայությամբ ստեղծվեց «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ «ՔԿԲԿ» ՊՈԱԿ), որի գործունեության առարկան, ըստ կառավարության վերոնշյալ որոշման, քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների առողջության պահպանումն ու վերականգնումն է, իսկ գործունեության նպատակը՝ ՔԿՀ-ներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին պատշաճ բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների մատուցումը: ՊՈԱԿ-ի ստեղծմամբ բժշկական ծառայության ենթակայությունը հանվեց քրեակատարողական ծառայության ենթակայությունից, ինչը կարևոր քայլ էր, քանի որ վերջինիս նպատակն է քրեակատարողական համակարգում բժշկական ծառայության անկախության ապահովումը քրեակատարողական ծառայությունից, միևնույն ժամանակ, սակայն դեռևս բավարար չէ համակարգում որակյալ և արդյունավետ բուժսպասարկում ապահովելու համար:

ՊՈԱԿ-ի ստեղծման դրական կողմերը, դրա ազդեցությունը բժշկական ոլորտի վրա և դեռևս առկա խնդիրները Խմբի կողմից ուսումնասիրության են ենթարկվել Բուժսպասարկման ոլորտի հիմնահարցերն ու բարեփոխման հեռանկարները ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում վերտառությամբ զեկույցում, որի մեջ ամփոփված են նաև 2019 թվականին արձանագրված հիմնական խնդիրները[4]:

Տարիներ շարունակ համակարգի կենտրոնական խնդիրներից է եղել **քրեական մշակույթի առկայությունը**, որը շղթայական ազդեցությամբ հանգեցրել է մի շարք այլ խնդիրների: Քրեական ենթամշակույթի հաղթահարման և դրա նկատմամբ զրո հանդուրժողականություն ցուցաբերելու նպատակով ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների փոփոխությունները, որոնցով քրեական աստիճանականության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու

[4] Հասանելի է Խմբիկայքի հետևյալ հղումով՝ http://pmg.am/images/PMG-Health_service.pdf

կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանականության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու համար նախատեսվում է քրեական պատասխանատվություն: Խնդրի վերաբերյալ Խումբը բազմիցս հանդես է եկել առաջարկներով[5]:

Օրենսդրական փոփոխությունների առնչությամբ նույնպես Խումբը ներկայացրել է իր կարծիքն ու առաջարկները՝ քրեական մշակույթի դեմ պայքարը պետք է լինի համալիր՝ ներառելով ինչպես օրենսդրական կարգավորումները, այնպես էլ պրակտիկայում պատժի կրման ընթացքում ազատազրկված անձանց հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը, ազատազրկված անձանց տեղաբաշխման սկզբունքների ու մոտեցումների վերանայումը, ռիսկերի և կարիքների գնահատման գործուն և արդյունավետ մեխանիզմների ներդրումը, քրեակատարողական ադմինիստրացիայի կարողությունների ուժեղացումն ու կադրերի ընդլայնումը, ինչպես նաև վերջիններիս սոցիալական երաշխիքների բարձրացումը [6] : Քրեական մշակույթի դեմ պայքարի օրենսդրական փոփոխությունների արդյունավետությունը հնարավոր կլինի գնահատել առանձին գործերի ուսումնասիրության, տրվող որակումների և պատասխանատվության միջոցների արդյունավետության համատեքստում[7]:

Խմբի աշխատանքի կենտրոնում է եղել նաև **պատժի կրումից ազատման ինստիտուտների պրակտիկ արդյունավետության ուսումնասիրությունը**: Այս առնչությամբ առանձնակի կարևորություն է ներկայացնում պատժի կրումից **պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի հարցը**: Գործընթացի կանխատեսելիությունն ապահովելու նպատակով հաշվետու տարում տեղի են ունեցել օրենսդրական կարգավորումների փոփոխություններ, մասնավորապես՝

---

[5] Հասանելի է Խմբիկայքի հետևյալ հղումով՝ http://pmg.am/hy/news/successful-cases/2018-09-03-10-45-39

[6] Հասանելի է Խմբիկայքի հետևյալ հղումով՝ http://pmg.am/hy/news/successful-cases/2019-10-02-14-03-18

[7] Հարցի առնչությամբ Խումբը անդամ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացրել է առանձին ուսումնասիրություն, ինչը կներկայացվի առանձին

ազատման հիմքում դրվող զեկույցի կազմումն իրականացնում է գնահատման չափորոշիչների հիման վրա (0-5 միավոր), որի պարագայում զեկույցը դրական է գնահատվում, երբ չափորոշիչների գումարման արդյունքը 28 և ավելի միավոր է կազմում (առավելագույն 43-ից)[8]: 2019 թվականի ընթացքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հարցի քննարկման վերաբերյալ դիմում է ներկայացրել 1138 դատապարտյալ: 273-ի վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան: Պայմանական վաղաժամկետ ազատվել է 212 դատապարտյալ[9]:

Չնայած ազատ արձակվածների թվին, ազատման ինստիտուտը ուղեկցվում է դեռևս լուրջ խնդիրներով՝ կապված կիրառվող չափորոշիչների հետ: Մասնավորապես, չափորոշիչները չեն կարող լինել վերացական (օրինակ՝ վերաբերմունքը քրեական ենթամշակույթի նկատմամբ, վերաբերմունքը կատարած հանցանքի նկատմամբ) և թույլ չտալ իրականացնել ազատազրկված անձի իրական գնահատումը: Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախատեսված չափորոշիչները հաճախ թույլ չեն տալիս անձի գնահատում իրականացնել, և եթե համակարգը չի ապահովում վերականգնողական միջոցառումները և դրանց արդյունավետ ներգրավվածություն, ապա հետագայում անձը այդ չափանիշի ներքո չի կարող գնահատվել:

Խմբի գործունեության մաս կազմող այլ հարցեր առավել մանրամասնությամբ ներկայացվում են ստորև:

---

[8] Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.irtek.am/views/act.aspx?aid=96966

[9] Հասանելի է Խմբիկայքի հետևյալ հղումով՝ http://pmg.am/hy/news/successful-cases/2019-9

3. ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2019թ. խմբի կողմից իրականացված պլանային և ընթացիկ այցելությունների ժամանակ ուսումնասիրվել են նաև ՔԿՀ-ներում պահման պայմանները, մասնավորապես՝ խցերը, կացարանները, սանհանգույցները, տեսակցության սենյակները, զբոսահրապարակները: Այցելությունների ընթացքում Դիտորդների Խմբի անդամները պահման պայմանների վերաբերյալ ունեցել են առանձնազրույցներ ինչպես ազատազրկված անձանց, այնպես էլ ՔԿՀ-ների վարչակազմերի և պետերի հետ՝ ստանալու համար ամբողջական պատկեր:

Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում շարունակում են առկա լինել խցի մակարդակով գերբնակեցման և խցերում անհավասարաչափ բաշխման խնդիրներ, պատժախցերում և կարանտինային բաժանմունքներում անբավարար պահման պայմաններ, ազատությունից զրկված անձանց հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի և մարմնամարզությամբ զբաղվելու իրավունքի իրացման, պատշաճ պայմաններում և ժամանակին տրամադրվող տեսակցությունների, ինչպես նաև հեռախոսակապի ապահովման խնդիրներ:

Վերը նշված խնդիրների, մասնավորապես՝ ազատազրկված անձանց պահմանն առնչվող հարցերի պարզաբանման նպատակով խումբը պարբերաբար ուղարկել է տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումներ ՀՀ արդարադատության նախարարություն: Խմբի դիտարկմամբ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահման պայմանների էական փոփոխություններ չեն եղել, սակայն կատարվել են որոշակի միջամտություններ՝ վերանորոգումների, սարքավորումների համալրման տեսքով:

Ստորև ներկայացվում են մի շարք մասնավոր խախտումների օրինակներ, որոնք 2019թ.-ին արձանագրվել են Դիտորդների Խմբի կողմից.

ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ-ի հանձնուքների ստուգման սարքը չի աշխատում, ինչը հանգեցնում է մի շարք խնդիրների: Հանձնուքների ստուգումն իրականցվում է ձեռքով և անզեն աչքով: Համապատասխան պայմանների բացակայության պատճառով ստուգման ընթացքում հնարավոր չէ ապահովել նաև հիգիենայի կանոնները:

Ի պատասխան Խմբի թիվ 19-68 ընթացիկ հաշվետվությանը՝ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ աշխատանքներ են

իրականացվում «Հրազդան» ՔԿՀ-ի հանձնուքների ստուգման սարքի վերանորոգման ուղղությամբ:

ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ-ի մսամթերքի պահման համար նախատեսված սառնարանները տևական ժամանակ չեն գործում, ինչը սննդամթերքը պահելու համար խնդիրներ է առաջացնում: Որպես ժամանակավոր լուծում՝ օգտագործվում է հիմնարկի վարչական հատվածում գտնվող սառնարանը, որը չափերով փոքր է, և գործնականում առաջանում են բազմաթիվ խնդիրներ:

Ի պատասխան խմբի գրությանը նախարարությունից տեղեկացրել են, որ նշված սառնարանների խափանման և մնացյալ բոլոր քրեակատարողական հիմնարկներում առաջացած տեխնիկական անսարքությունները վերացնելու նպատակով հայտարարվել է մրցույթ՝ էլեկտրական սարքերի և սարքավորումների վերանորոգման ու պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով:

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ Դիտորդները արձանագրել են, որ ազատազրկված անձանցից մեկը տեղաշարժվում է սայլակով: Ազատազրկված անձը նշել է, որ չի կարողանում նստել ուղեկցող մեքենան, քանի որ նման մեքենաները հարմարեցված չեն հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար, որի պատճառով ունենում է սուր ցավեր: Այդ պատճառաբանությամբ վերջինս չի մասնակցում նույնիսկ իր գործով դատական նիստերին:

Հարցը նաև համակարգային տեսանկյունից դիտարկելով՝ խումբը նախարարությանն առաջարկել է քայլեր ձեռնարկել քրեակատարողական հիմնարկներում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար համապատասխան պայմաններ ստեղծելու ուղղությամբ՝ սանհանգույցների հարմարեցումից մինչև խնամքի հնարավորություն: Ինչպես նաև նման ազատազրկված անձանց տեղափոխումը ՔԿՀ-ից կազմակերպել հատուկ հարմարեցված մեքենաներով:

Այդ առումով հարկ է նշել, որ ԽԿԿ-ն նույնպես դեռևս 2015 թվականին Հայաստան կատարած այցի շրջանակներում կազմված զեկույցի շրջանակներում նշել է, որ անհրաժեշտ է պատշաճ կերպով հաշվի առնել մեծահասակ և/կամ հաշմանդամություն ունեցող ազատազրկված անձանց իրավունքները:

Նախարարությունից պարզաբանել են, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների մեծամասնությունը կառուցվել են ԽՍՀՄ տարիներին և ֆիզիկապես գտնվում են մաշված վիճակում՝ շենք-շինությունների մեծամասշտաբ փոփոխություններ այդ պահի դրությամբ իրականացնել հնարավոր չէ:

Միևնույն ժամանակ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում վերանորոգումներ իրականացնելու նպատակով 2018 թվականի նոյեմբեր ամսին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից կազմվել են նախագծա-հաշվարկային փաստաթղթեր, որտեղ, օգտագործելով առկա մասնաշենքերի կոնստրուկտիվ տարրերը, կիրառվել է սանհանգույցների ձևափոխում՝ հենաշարժողական խնդիր ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց համար հնարավորինս հարմարավետություն ստեղծելու համար: Այս համատեքստում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից նախագծա-հաշվարկային փաստաթղթեր են կազմվել նաև ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ-ում նորոգումներ իրականացնելու նպատակով: Շինարարական աշխատանքներ են իրականացվում նաև ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, որտեղ նույնպես նախատեսված է սանհանգույցների ձևափոխում՝ հենաշարժողական դատապարտյալների և կալանավորված անձանց համար հնարավորինս հարմարավետ պայմաններ ստեղծելու համար: ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» և «Աբովյան» ՔԿՀ-ների վերանորոգման աշխատանքների ֆինանսավորման համար անհրաժեշտ գումարի հայտը ներկայացվել է ՀՀ կառավարություն և վերջինիս կողմից հավանության է արժանացել 2019 թվականի սեպտեմբերի 5-ին:

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի ռենտգեն սարքը չի աշխատում արդեն մեկ ու կես տարի: Ըստ ստացված տվյալների՝ վերանորոգման համար անհրաժեշտ են բավականին մեծ գումարներ, ինչի պատճառով խնդիրը մինչև օրս մնում է չլուծված: Ռենտգեն սարքը շատ կարևոր է, քանի որ այդ դատապարտյալների մոտ հատկապես շնչառական համակարգի հիվանդություններ (ՏԲ, թոքաբորբեր, բրոնխիտներ) ձեռք բերելու հավանականությունը միշտ խիստ բարձր է: Ռենտգեն սարքի միջոցով հնարավոր է նաև վերահսկել օտար մարմինների ընթացքը մարսողական համակարգում: Դիտորդները ՀՀ արդարադատության նախարարությանը առաջարկել են քայլեր ձեռնարկել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի ռենտգեն սարքը շահագործելու ուղղությամբ:

2019 թվականի հուլիսի 29-ին ՀՀ արդարադատության նախարարությունը խմբին տեղեկացրել է, որ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի ռենտգեն սարքի անսարքությունը վերացնելու համար հրավիրվել են համապատասխան մասնագետներ, որոնք ներկայացրել են գնային նախահաշիվ՝ վերանորոգումն իրականացնելու համար: Վերոնշյալ գնային նախահաշիվը տրամադրվել է ՀՀ արդարադատության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ վերանորոգման գործընթացը կազմակերպելու համար:

ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ -ում չկան երկարատև տեսակցության սենյակներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքում վերջերս կատարված օրենսդրական փոփոխությունների համաձայն կալանավորված անձինք նույնպես երկարատև տեսակցության իրավունք ունեն, սակայն պրակտիկայում չեն ապահովվել պայմաններ տվյալ իրավունքի իրացման համար:

Դիտորդները ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկել են «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում կառուցել երկարատև տեսակցության սենյակներ: Նախարարությունից պարզաբանել են, որ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում նախկինում երկարատև տեսակցությունների սենյակների անհրաժեշտություն չի եղել, սակայն առաջիկայում նախատեսվում է իրականացնել կառուցապատումներ, որի շրջանակներում կներառվի նաև երկարատև տեսակցության սենյակների կառուցումը: Ըստ գրության՝ երկարատև տեսակցության սենյակների բացակայությունը, այդուհանդերձ, երբևէ դատապարտյալին ընտանիքի անդամների հետ երկարատև տեսակցություն տրամադրելու իրավունքից զրկելու պատճառ չի հանդիսացել: Ցանկություն ունեցող անձինք տեղափոխվել և այդ իրավունքն իրացրել են «Նուբարաշեն» ՔԿՀ-ում առկա երկարատև տեսակցության սենյակի պայմաններում:

ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում լուրջ խնդիր է օդափոխության համակարգի բացակայությունը: Դեռևս 2018թ.-ին Դիտորդների խումբը առաջարկել էր քննարկել հիմնարկում օդափոխության համակարգ տեղադրելու հարցը՝ այն դիտարկելով որպես համակարգային խնդիր: Ի պատասխան Դիտորդների խմբի առաջարկի ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել էին, որ քրեակատարողական ծառայությունում քննարկվում է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում օդափոխության կենտրոնացված համակարգ տեղադրելու հնարավորությունը:

Ընդ որում, 2020թ.-ի հունիսի 18-ին ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը հայտարարել էր[10], որ «Արմավիր» ՔԿՀ-ն օդափոխության համակարգ կունենա.- «Եվ այսօր՝ ներկայիս բարդ պայմաններում արված խնայողությունների հաշվին, այդ խնդիրը լուծելու և «Արմավիր» ՔԿՀ-ում կիսաբաց ռեժիմ ունենալու որոշում ենք կայացրել՝ Կառավարության նիստում հաստատելով «Արմավիր» ՔԿՀ-ի օդափոխության նախագծահաշվային փաստաթղթերով մրցույթ հայտարարելու և կիսաբաց ռեժիմ ունենալու շինարարական աշխատանքների նախագիծը»:

ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի 1-ին և 2-րդ մասնաշենքերում աշխատողների համար սանհանգույցներ նախատեսված չեն, և աշխատողները օգտվում են կողքի մասնաշենքի սանհանգույցից: Արդյունքում, ՔԿՀ-ում խախտվում են աշխատողների աշխատանքային իրավունքները, մասնավորապես ՀՀ աշխատանքային օրենսգրքի աշխատողների անվտանգության և առողջության վերաբերյալ դրույթները (գլուխ 23).

«Աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է ստեղծվեն օրենքով սահմանված՝ պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ:

Գործատուն պարտավոր է ապահովել աշխատանքի նորմալ պայմաններ, որպեսզի աշխատողները կարողանան կատարել աշխատանքի նորմաները»:

Սանհանգույցի բացակայությունն առաջացնում է լուրջ խնդիրներ, այդ թվում՝ անվտանգության հետ կապված: Խնդիրն ավելի է սրվում գիշերային հերթափոխի ժամանակ, երբ հսկողություն իրականացնում է ընդամենը մեկ հսկիչ: Մնացած մասնաշենքերում այդ խնդիրը լուծվել է՝ դեպի երկրորդ հարկ տանող աստիճանավանդակների տակ սանհանգույցներ կառուցելով:

Խումբն առաջարկել է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի 1-ին և 2-րդ մասնաշենքերում աշխատողների համար կառուցել սանհանգույցներ: Պատասխան գրությամբ Խմբին հայտնել են, որ կարևորելով նշված ոլորտում բարեփոխումների իրականացման

---

10 https://www.1lurer.am/hy/2020/06/18/%C2%AB%D4%B1%D6%80%D5%B4%D5%A1%D5%BE%D5%AB%D6%80%C2%BB-%D5%94%D4%BF%D5%80-%D5%B6-%D6%85%D5%A4%D5%A1%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3-%D5%AF%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B6%D5%A1-%D4%B2%D5%A1%D5%A4%D5%A1%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6/261430

անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում իրականացվող շինարարական աշխատանքների շրջանակում «Արմավիր» ՔԿՀ-ի 1-ին և 2-րդ մասնաշենքերում աշխատակիցների համար նախատեսված սանհանգույցների կառուցման ծավալներն արդեն իսկ ընդգրկված են 2019թ. ընթացիկ վերանորոգման ծրագրում: ՀՀ կառավարության կողմից համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման դեպքում աշխատակիցների համար նախատեսված սանհանգույցները կկառուցվեն:

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի՝ դեպի 6-րդ մասնաշենք տանող միջանցքն անցնում է առաջին հարկով, որի առաստաղից կոյուղաջրեր են թափվում: Այդ հատվածում ամբողջությամբ գարշահոտություն է տարածված: Հարցը քննարկվել է հիմնարկի աշխատակիցների հետ, վերջիններս խնդրի լուծման ուղղությամբ որևէ տարբերակ չեն նշել: Խումբն առաջարկել է քայլեր ձեռնարկել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի՝ դեպի 6-րդ մասնաշենք տանող միջանցքի առաստաղից թափվող կոյուղաջրերի հոսքը դադարեցնելու ուղղությամբ: ՀՀ արդարադատության նախարարությունը մեկնաբանել է, որ 2019 թվականի հունվար ամսից ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ընթանում են կապիտալ շինարարական աշխատանքներ, որի ընթացքում հիմնովին վերանորոգվելու են սանհանգույցները, արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցերը, ներքին ջրահեռացման համակարգը, էլեկտրալուսավորության ցանցերը: Արդյունքում կվերանա առաստաղից կոյուղաջրերի հոսքը, ինչպես նաև դեպի 6-րդ մասնաշենք գնացող միջանցքի գարշահոտությունը, կվերանորոգվեն սանհանգույցները, կներկվեն պատերը: Կապիտալ վերանորոգման արդյունքում լուծվելու է նաև խցերի և միջանցքների լուսավորության խնդիրը:

Դիտորդների խումբը բազմիցս պնդել է, որ «Նուբարաշեն ՔԿՀ-ն ենթակա է փակման և, որ ծախսատար ու անիմաստ է դրա հիմնովին վերանորոգումը: ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ների փակումը և դրա արդյունքում Երևան քաղաքի տարածքում՝ Սիլիկյան թաղամասում շուրջ 1200 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկի կառուցումը նախատեսված է նաև ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների միջոցառումների ծրագրի 11-րդ կետով[11]:

[11] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2019/12/19-1717.pdf

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի 6-րդ մասնաշենքի 2-րդ հարկի՝ աշխատակիցների համար նախատեսված սանհանգույցն անմխիթար վիճակում է, պատերի ծեփը թափված է, գտնվում է հակահիգիենիկ վիճակում: Աշխատակիցների համար նախատեսված սենյակում չկա անհրաժեշտ կահույք, աթոռները ջարդված են, սեղանը և այլ գույքը հին են ու մաշված: Հարցը քննարկվել է հիմնարկի աշխատակիցների հետ: Վերջիններս ընդունել են, որ առկա են նման խնդիրներ, սակայն հարցի լուծման վերաբերյալ առաջարկ չի ներկայացվել: Խումբն առաջարկել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի 6-րդ մասնաշենքի 2-րդ հարկի՝ աշխատակիցների համար նախատեսված սանհանգույցը վերանորոգել, իսկ սենյակը կահավորել նոր գույքով: ՀՀ արդարադատության նախարարությունը մեկնաբանել է, որ Քրեակատարողական ծառայության կողմից կազմվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ գրասենյակային գույք (կահույք, սեղան, աթոռ և այլն) ձեռք բերելու նպատակով հոդվածային վերաբաշխում իրականացնելու վերաբերյալ: Համապատասխան ֆինանսավորում ստանալու պարագայում կլուծվի նաև հիմնարկի գրասենյակային գույքի խնդիրը:

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի 1-ին՝ կիսանկուղային հարկում գտնվող թիվ 04 խցում Դիտորդների խումբը արձանագրել է պահման անմարդկային պայմաններ: Մասնավորապես, խցի պատերը, հատակը և առաստաղը խոնավ են, պատերի և առաստաղի ծեփը թափված է: Խցում առկա են խավարասերներ: Պատուհանը ամրացված է մեխով, այն բացել հնարավոր չէր, օդափոխությունը բացակայում էր, ուստի խցի օդը ծանր էր, հեղձուցիչ: Դիտարկման պահին խցում պահվում էին 2 կալանավորված անձինք:

Դիտորդների խումբը ՀՀ արդարադատության նախարարությանը առաջարկել է ընդհանրապես փակել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի 1-ին հարկում գտնվող խցերը, իսկ թիվ 04 խցում պահվող անձանց տեղափոխել այլ խուց: Պատասխան գրությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից մեկնաբանել են, որ հիմնարկում ընթացող վերանորոգման աշխատանքները իրականացնելու նպատակով հիմնարկի բազմաթիվ խցերից դատապարտյալներ և կալանավորված անձինք

ժամանակավորապես տեղափոխվել են այլ խցեր՝ առավելագույնս պահպանելով վերջիններիս հատկացվող բնակելի տարածության նվազագույն չափը:

Ազատազրկված անձանց լոգանքի, հագուստի ու անկողնային պարագաների վերաբերյալ դիտորդների ուղարկած հարցմանը ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանել են, որ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձի և դատապարտյալի՝ յուրաքանչյուր շաբաթ առնվազն 1 անգամ ցնցուղով առնվազն 15 րոպե տևողությամբ լոգանք ընդունելն ապահովված է:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 13-րդ կետի համաձայն՝ բաղնիքի սարքավորումները և ցնցուղների քանակը պետք է բավականաչափ լինեն, որպեսզի յուրաքանչյուր բանտարկյալ կարողանա և պարտավոր լինի լողանալ կամ ջրցնցուղ ընդունել ամեն մի կլիմայի համապատասխան ջերմաստիճանում և այնքան հաճախ, որքան պահանջում են ընդհանուր հիգիենայի պայմանները՝ հաշվի առնելով տարվա եղանակը և աշխարհագրական շրջանը, այսինքն՝ չափավոր կլիմայում առնվազն շաբաթը մեկ անգամ:

Կալանավորված անձի կամ դատապարտյալի հագուստի և անկողնային պարագաների լվացումը կազմակերպվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից, որը իրականացվում է լվացքատներում առկա համապատասխան կենցաղային տեխնիկաների միջոցով: Նշված լվացքատներում կալանավորված անձանց կամ դատապարտյալների հագուստի և անկողնային պարագաների լվացումը իրականացնելու ընթացքում պահվում են գրանցումների մատյան, որտեղ գրանցվում են լվացքատանը կատարված համապատասխան աշխատանքների քանակական ցուցանիշները:

ԽԿԿ-ի Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում ներկայացված առաջարկների համաձայն՝ լոգանք ընդունելու հնարավորություն պետք է ընձեռվի առնվազն շաբաթն երկու անգամ:

Այսպիսով, ազատությունից զրկված անձանց լոգանքի պատշաճ կազմակերպման նպատակով անհրաժեշտ է՝ վերանորոգել Քրեակատարողական հիմնարկների

լողասենյակները և սանհանգույցներն՝ ապահովելով ազատությունից զրկված անձանց համար շաբաթական առնվազն 2 անգամ լոգանքի հնարավորություն.

Ի պատասխան Դիտորդների խմբի կողմից գրություններով բարձրաձայնված մի շարք այլ հարցերի ՀՀ արդարադատության նախարարությունը 2019 թվականի փետրվարի 8-ին տեղեկացրել է, որ՝ արևային մարտկոցներ են տեղադրվել ՀՀ ԱՆ թվով 11 քրեակատարողական հիմնարկներում՝ «Սևան», «Կոշ», «Արթիկ», «Աբովյան»
«Դատապարտյալների հիվանդանոց», «Նուբարաշեն», «Վանաձոր», «Վարդաշեն», «Հրազդան», «Արմավիր» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի էրեբունի տեղամաս: Նախարարությունը տեղեկացրել է նաև, որ էներգախնայողության ծրագրի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում արևային մարտկոցները տեղադրվել են «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Նախարարությունը, սակայն, չի տիրապետում այն տեղեկատվությանը, թե որ ընկերություններից են ձեռք բերվել արևային մարտկոցները, երբ են հիմնադրվել այդ ընկերությունները, ներկա դրությամբ այդ ընկերությունները գործում են, թե ոչ:

Խմբին տեղեկացրել են նաև, որ արևային մարտկոցների ձեռքբերման և դրանց շահագործման համար ծախսված ֆինանսական միջոցների վերաբերյալ առանձին տեղեկատվություն առկա չէ:

Այնուհանդերձ, էներգախնայողության ծրագրի շրջանակներում բոլոր քրեակատարողական հիմնարկներում ամբողջական ծավալով ներդրումային աշխատանքների իրականացման համար ընդհանուր առմամբ ծախսվել է 2458233,0 հազար դրամ:

Ընթացիկ վերանորոգումների և սպասարկման աշխատանքների կապակցությամբ նշվել է, որ տեղակայված էներգետիկ համակարգերի համար պայմանագրով ամրագրված է եղել մեկ տարվա երաշխիքային ժամկետ: Ներկայումս սակայն չկա որևէ մասնագիտացված կազմակերպություն, որն անհրաժեշտության դեպքում կիրականացնի ընթացիկ վերանորոգման և սպասարկման աշխատանքներ:

Ըստ այդմ՝ ՀՀ արդարադատության նախարարությունը նշել է, որ նախատեսում է ավելացնել պայմանագրային աշխատակիցների թիվը, ովքեր կներգրավվեն նաև նման աշխատանքներում:

Այնուամենայնիվ, չնայած արևային մարտկոցների տեղադրման փաստին, ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանմամբ, քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձի և դատապարտյալի համար ապահովված է յուրաքանչյուր շաբաթ առնվազն 1 անգամ ցնցուղով առնվազն 15 րոպե տևողությամբ լոգանք ընդունելը:

Դիտորդների խումբն իր գրություններում ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկել է նաև մեծացնել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի այն խցերի պատուհանների չափերը, որտեղ դրանց մեծությունը չի բավարարում բնական լուսավորության համար: Միջոցներ ձեռնարկել խցերի օդափոխությունը և սանիտարական վիճակը բարեկարգելու ուղղությամբ:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 11-րդ կետի համաձայն՝ այն կառույցներում, ուր ապրում և աշխատում են բանտարկյալները,

ա) լուսամուտները պետք է ունենան բավարար չափեր, որպեսզի բանտարկյալները կարողանան կարդալ և աշխատել ցերեկային լույսով, և պետք է նախագծված լինեն այնպես, որ ապահովեն թարմ օդի մուտքը, անկախ այն բանից, գոյություն ունի օդափոխման արհեստական համակարգ, թե ոչ:

բ) արհեստական լուսավորությունը պետք է բավարար լինի, որպեսզի բանտարկյալները կարողանան կարդալ կամ աշխատել առանց տեսողության համար վտանգի:

Վերը նշվածի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը մեկնաբանություն չի ներկայացրել: Միայն նշել են, որ հիմնարկի տարածքում ամսվա կտրվածքով առնվազն երեք անգամ իրականացվում են դեռատիզացիայի և մեկ անգամ դեզինֆեկցիայի աշխատանքները:

Ի դեպ, ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի

կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1717-Լ որոշման համաձայն՝ նախատեսվում է փակել «Նուբարաշեն», «Դատապարտյալների հիվանդանոց» և «Գորիս» քրեակատարողական հիմնարկները, և դրանց փոխարեն կառուցել շուրջ 1200 (200 մահճակալ նախատեսվել է բուժման կարիք ունեցող անձանց համար) և 350 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկներ: Նախատեսվում է նաև լուծարել «Հրազդան» քրեակատարողական հիմնարկը և «Սևան» քրեակատարողական հիմնարկի վարչական տարածքում կառուցել «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի համար սահմանված լրակազմով՝ փակ, կիսափակ ռեժիմների և կալանավորվածների պահելու վայր, այդ թվում՝ կալանք պատժատեսակի համար նախատեսված մասնաշենք:

Այնուամենայնիվ 2019թ.-ի ընթացքում ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում իրականացվել են հետևյալ շինարարական աշխատանքները[12].

«Նուբարաշեն» ՔԿՀ

Քրեակատարողական հիմնարկի ներքին կոյուղու ցանցի, արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցի, սանհանգույցների, բաղնիքների, խոհանոցի, ներքին և արտաքին էլեկտրահամակարգի կապիտալ շինարարական աշխատանքներ և էլ. ենթակայանի վերանորոգման աշխատանքները: Ներկայումս աշխատանքներն ընթացքի մեջ են: Շինարարական աշխատանքներն ավարտվել են միայն ճաշարանի մասնաշենքում, որն հանձնվել է շահագործման: Մնացած աշխատանքները կասեցվել են շինարարական աշխատանքների ժամանակ ի հայտ եկած տեխնոլոգիական բարդությունների պատճառով:

[12] Հասանելի է հետևյալ հղումով՝

https://www.penitentiary.am/2019-%D5%A9%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

Իրականացվել են նաև քրեակատարողական հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքներ:

«Սևան» ՔԿՀ

Իրականացվել են հիմնարկի արտաքին ջրահեռացման համակարգի շինարարական աշխատանքներ:

«Վարդաշեն» ՔԿՀ

Կապիտալ վերանորոգվել է քրեակատարողական հիմնարկի 143մ երկարությամբ պարիսպը, ինչպես նաև իրականացվել են հիմնարկի արտաքին կոյուղու ցանցի վերակառուցման աշխատանքներ:

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ

Իրականացվել են քրեակատարողական հիմնարկի արտաքին և ներքին ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի, սանհանգույցների և բաղնիքների վերանորոգման աշխատանքներ:

«Վանաձոր» ՔԿՀ

Մասնակի վերանորոգվել են լողասենյակները:

«Արթիկ» և «Գորիս» ՔԿՀ

Մասնակի վերանորոգվել են կացարանները:

«Երևան-Կենտրոն» ՔԿՀ

Իրականացվել է բաղնիքի տաք ջրամատակարարման համակարգի վերանորոգում:

«Աբովյան» ՔԿՀ

Իրականացվել է քրեակատարողական հիմնարկի արտաքին ջրահեռացման համակարգի վերանորոգում:

Վերանորոգվել են նաև հիմնարկի երկու ենթակայանների միջև ընկած հատվածի ցածր լարման մալուխը, մոտ 500 քմ մակերեսով պահեստային տնտեսության տանիքը:

«Հրազդան» ՔԿՀ

Վերանորոգվել է հիմնարկի արտաքին ջրահեռացման համակարգը:

«Արմավիր» ՔԿՀ

Վերանորոգվել է հիմնարկի երկարատև տեսակցության մասնաշենքն, աշխատանքների ավարտից հետո սենյակները կահավորվել և համալրվել են կենցաղային տեխնիկայով:

Իրականացվել են նաև շենք-շինությունների սեյսմակայունության ստուգման ծառայություններ, որի վերաբերյալ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը տրամադրվել է դրական եզրակացություն:

Իրականացվել են հիմնարկում նախատեսվող կիսաբաց մասնաշենքի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ:

«Կոշ» ՔԿՀ

Համաձայն 25.10.2019թ.-ի թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-19/6 պայմանագրի՝ «Բիդեք» ՍՊԸ-ն իրականացրել է հիմնարկի արտաքին ջրահեռացման համակարգի և ճաշարանի վերանորոգման շինարարական աշխատանքներ: ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահման պայմանների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է նաև Դիտորդների խմբի նախորդ զեկույցներում[13]:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահման պայմանների վերաբերյալ լուսանկարներ.

«Հրազդան» ՔԿՀ

[13]Հասանելի է Խմբիկայքի հետևյալ հղումով՝ http://pmg.am/hy/library/annual-reports/2018
Հասանելի է Խմբիկայքի հետևյալ հղումով՝ http://pmg.am/hy/library/annual-reports/2017
Հասանելի է Խմբիկայքի հետևյալ հղումով՝ http://pmg.am/hy/library/annual-reports/2013-3

«Աբովյան» ՔԿՀ

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ

«Վանաձոր» ՔԿՀ

«Նուբարաշեն» ՔԿՀ

«Արմավիր» ՔԿՀ

4. ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ

Ազատազրկված անձանց արժանապատիվ սննդով ապահովելու հարցը քրեակատարողական համակարգի հիմնական մարտահրավերներից և Խմբի մշտական ուսումնասիրության հարցերից է եղել: Խումբը այս առնչությամբ դրական է գնահատում 2019 թվականին նախաձեռնված սննդի ոլորտի փոփոխությունները:

2019թ.-ի հոկտեմբերի 15-ից սկսած՝ սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման փորձնական ծրագիր է իրականացվել ՀՀ-ում ամենամեծ լրակազմն ունեցող ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ-երում: Սնունդ է մատակարարվել ընդհանուր հաշվարկով 1090 անձանց համար:

Վերոգրյալի համար ՀՀ ԱՆ ՔԿԾ-ի կողմից կազմակերպվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգ: Արդյունքում 24.09.2019թ-ին կնքվել է «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ-երում սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/9 պայմանագիրը:

ՀՀ ԱՆ ՔԿԾ ծառայության կողմից ուղարկված թիվ 40/11-1272 գրության հիման վրա Խմբի կողմից ուսումնասիրվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգը [14], որի շրջանակներում է կատարվել է ծանոթություն գնումների մրցույթի 10.09.2019թ.-ի հայտարարությանը (ANNOUNCEMENT On Request for

[14] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://armeps.am/epps/cft/prepareViewCfTWS.do?resourceId=5223235

Quotation) և տենդերին մասնակցելու կառուցվածքային չափորոշիչներին15: Խումբը վեր է հանել հետևյալը՝

Ընթացակարգը տեղի է ունեցել.

Ընթացակարգ	Գնահատման մեխանիզմ	Միափուլ կամ երկփուլ ներկայացում
Գնանշման Հարցում 17	Ամենացածր գին	Մեկ փուլ

Ըստ վերոնշյալ չափանիշների, գնանշման հարցման արդյունքում ամենացածր գին է առաջարկել «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն, որի հետ 24.09.2019թ.-ին կնքվել է ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/9 սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պայմանագիրը 107,964,500 (մեկ հարյուր յոթ միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: Արդյունքում հաշվարկային տնտեսման ընդհանուր արժեքը կազմել է 1,907,500 (մեկ միլիոն ինը հարյուր յոթ հազար հինգ հարյուր): Մեկ անձին տրամադրվող սննդի օրական գումարը կազմում է 1415 ՀՀ դրամ, ներառյալ բոլոր ծախսերը, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարումները:

Խումբը սննդի մատակարարման գործընթացի համար կազմակերպված մրցույթի արդյունքների առնչությամբ գտել է, որ Պատվիրատուն, պահպանելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի դրույթները, կազմակերպել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-19/9» ծածկագրով գնման ընթացակարգը, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Նուբարաշեն» ՔԿՀ-երում 1090 անձանց սնունդ մատակարարելու համար:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Գնումների ընթացակարգի մասին տեղեկատվության հասանելիության ապահովման մասին այլ ուսումնասիրություններ

[15]Հասանելի է հետևյալ հղումով՝ https://armeps.am/epps/cft/listContractDocuments.do?resourceId=5223235#

չեն եղել: Նմանապես, Գնումների ընթացակարգում և կնքված պայմանագրում խախտումներ չեն նկատվել:

Ինչ վերաբերում է սննդի բազմազանությանն ու որակին, 2019 թվականի վերջին Խմբի կողմից կատարված այցերը և ազատազրկված անձանց հետ առանձնազրույցները թույլ են տալիս արձանագրել դրական գնահատական և հիմնականում սննդից գոհունակություն: Նույն իրավիճակը շարունակվել է նաև 2020 թվականի առաջին կիսամյակում: Ճաշացանկը փոխվում է յուրաքանչյուր շաբաթ՝ ապահովելու համար սննդի զանազանությունը, պահպանելով նաև սննդակարգի որակը, կալորիականությունը և այլ օգտակար հատկությունները:

Պետք է նշել նաև, որ հաշվետվության ներկայացման պահին «Արտ Լանչ» ապրանքանիշը ներկայացնող «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից ազատազրկված անձանց համար նախատեսված սննդի ապահովման համակարգն արդեն գործում է ԱՆ քրեակատարողական բոլոր 12 հիմնարկներում:

5. ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՄԱՀՎԱՆ ԵՎ ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԸ 2019Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ոլորտի առավել մտահոգիչ հարցերից շարունակել է հանդիսանալ ՔԿՀ-ներում մահվան, ինքնասպանությունների և ինքնավնասումների պրակտիկան:

Այսպես, 2019 թվականին քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է մահվան 21 դեպք, որից 15-ը՝ բնական մահ, 1-ը՝ դժբախտ պատահար, և 5-ը՝ ինքնասպանություն: Անազատության մեջ պահվող բոլոր հինգ անձինք ինքնասպանություն են գործել կախվելու միջոցով:

Արձանագրված 21 դեպքերից 10-ը գրանցվել է հետևյալ քրեակատարողական հիմնարկներում. «Նուբարաշեն»՝ 3 մահ, «Արմավիր»՝ 5 մահ, «Դատապարտյալների հիվանդանոց»՝ 1 մահ, «Գորիս»՝ 1 մահ (Աղյուսակ 1): 11 մահ արձանագրվել է քաղաքացիական հիվանդանոցում:

Ինքնասպանության արձանագրված դեպքերից 2-ը գրանցվել է «Նուբարաշեն», 2-ը՝ «Արմավիր», իսկ 1-ը՝ «Գորիս» ՔԿՀ-ում:

Հատկանշական է սակայն այն, որ արձանագրված դեպքերի վերաբերյալ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ծառայողական քննություններ չեն անցկացվել:

ՀՀ ԱՆ տեղեկացմամբ՝ մահվան յուրաքանչյուր դեպքի կապակցությամբ իրականացվում է նյութերի նախապատրաստում: Պետք է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարությունը այդ դեպքերի կապակցությամբ քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժելու, ինչպես նաև հետագա դատավարական ընթացքին չի հետևում և մշտադիտարկում չի իրականացնում: Այս պատճառով ՀՀ ԱՆ-ն չունի ամբողջական տեղեկատվություն ՀՀ ՔԿՀ-ներում տեղի ունեցած մահվան դեպքերի քննության մասին: Կարծում ենք՝ այդպիսի դիտարկման իրականացումը կօգնի ձեռք բերել այնպիսի տվյալներ, որոնք հետագայում կարող են օգտագործվել ՔԿՀ-ներում մահերի և ինքնասպանությունների դեպքերի նվազեցման քաղաքականության մշակման ընթացքում:

Պետք է նաև նշել, որ 2019թ. մահվան դեպքերն ավելացել են համեմատած նախորդ տարիների հետ. 2018թ. արձանագրվել է մահվան 18 դեպք (որից 7-ը՝ քաղաքացիական հիվանդանոցում), 2017թ.՝ 17 դեպք:

Ցավով պետք է արձանագրել, որ քրեակատարողական հիմնարկներում մահացության ցուցանիշով Հայաստանը տարիներ շարունակ ՝՝առաջատարն՝՝ է եղել Եվրոպայում, ինչը հաստատվել է նաև միջազգային կառույցների կողմից[16]:



Աղյուսակ 1

2019թ. Արձանագրվել է ինքնավնասման 604 դեպք 182 անձի կողմից: Հատկանշական է, որ դեպքերի քանակը նախորդ տարիների համեմատ նվազել է: 2018թ. Արձանագրվել է ինքնավնասման 612 դեպք, իսկ 2017թ.՝ 607 դեպք:

Ինքնավնասման ամենաշատ դեպքերը գրանցվել են «Վարդաշեն» ՔԿՀ-ում՝ 157 դեպք, «Նուբարաշեն»-ում արձանագրվել է 146 դեպք: Ազատազրկված անձինք 114 անգամ ինքնավնասում են կատարել «Արմավիր» ՔԿՀ-ում, 58 անգամ՝ «Հրազդան»-ում, 30 անգամ՝ «Արթիկ»-ում, 29-ական անգամ՝ «Դատապարտյալների

[16]https://hetq.am/hy/article/86848

հիվանդանոց»-ում և «Վանաձոր»-ում: 18-ական անգամ՝ «Աբովյան» և «Գորիս» ՔԿՀ-ներում: Նշված ՔԿՀ-ների համեմատությամբ առավել քիչ ինքնավնասման դեպքեր են իրականացվել «Սևան»-ում և «Կոշ»-ում՝ 2ական անգամ և 1 անգամ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում (Աղյուսակ 2):

Ինքնավնասման դեպքերը հիմնականում դրսևորվել են աջ և ձախ նախաբազուկների, որովայնի, պարանոցի վնասումով, երբեմն էլ ոտքերը գամել են հատակին:

Ըստ ՀՀ ԱՆ տեղեկությունների՝ ինքնավնասման պատճառները կապված են եղել ազատազրկված անձանց քրեական գործերի, տեղաբաշխման, անձնական, առողջական խնդիրների հետ: Որոշ դեպքերում ինքնավնասում կատարել են հոգեկան հավասարակշիռ վիճակում: Քրեակատարողական ծառայողների պատճառով ինքնավնասման դեպքեր չեն արձանագրվել:

Դեպքերի կապակցությամբ ԱՆ-ից տեղեկացրել են, որ ինքնավնասման յուրաքանչյուր դեպքով կազմվել են նյութեր, անցկացվել է հետաքննություն, իրականացվել են սոցիալական, հոգեբանական բնույթի աշխատանքներ, մասնավորապես՝ ՔԿՀ հոգեբանի կողմից կատարվել է հոգեբանական աշխատանք, ինչի արդյունքում կազմվել է հոգեբանական եզրակացություն ինքնավնասման հնարավոր պատճառների և ինքնավնասում կատարած անձի վարքի հետագա կանխատեսումների վերաբերյալ: Իրականացվել են նաև այլ աշխատանքներ՝ հետագայում նույն անձի կողմից ինքնավնասման փորձերը կանխելու ուղղությամբ: 1 տարվա ընթացքում 2 և ավելի անգամ ինքնավնասում կատարած անձիք վերցվել են հաշվառման՝ որպես ինքնավնասման հակում ունեցող, և նրանց հետ իրականացվել են համալիր սոցիալ-հոգեբանական և իրավական աշխատանքներ: Չնայած ձեռնարկված քայլերին, կանխարգելիչ նման միջոցառումները դեռևս բավարար չեն: Ինքնավնասման դեպքերի վերաբերյալ նույնպես, սակայն ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ծառայողական քննություններ չեն անցկացվել:

Հաշվի առնելով ՔԿՀ-ներում պահվող անձանց կողմից ինքնավնասումների պատճառների բացահայտման և ինքնավնասումների նվազեցման կարևորությունը՝ Խումբը առանձին փորձագետների ներգրավմամբ 2019թ. Իրականացրել է խնդրի

վերաբերյալ խորքային ուսումնասիրություն[17]: Հետազոտությունն իրականացվել է «Նուբարաշեն» և «Արմավիր» ՔԿՀ-ներում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների (ՍՀԻԱ) բաժնի աշխատակիցների հետ նախօրոք մշակված հարցաշարի միջոցով, ուսումնասիրվել են նաև մի շարք փաստաթղթեր և ՀՀ ԱՆ-ից ձեռք են բերվել անհրաժեշտ տեղեկություններ:

Ըստ հետազոտության ստացած տվյալների՝ ինքնավնասումների հիմնական պատճառներն են քրեական գործի և դրա հետ կապված խնդիրները, տեղափոխվելու և տեղաբաշխման հետ կապված խնդիրները, ցուցադրական վարքը, շանտաժը, հոգեկան առողջության խնդիրները և օրգանական խանգարումները, թմրանյութերի կախվածությունները, անձնական, հոգեբանական կամ ընտանեկան խնդիրները:

Ուսումնասիրված ՔԿՀ-ների հոգեբաններին բաժին է ընկնում 150 և ավելի ազատազրկված անձանց հետ աշխատանք, ինչն ոչ միայն հակասում է մասնագիտական էթիկային, այլ նաև անհնար է: ՍՀԻԱ բաժնի լիարժեք աշխատանքը խոչընդոտվում է մի շարք այլ հանգամանքներով ևս, օրինակ՝ աշխատակիցները իրականացնում են թղթաբանության հետ կապված ծավալուն աշխատանք, որը հստակ ժամանակային սահմանափակումներ ունենալու պատճառով դիտարկվում է հրատապ և շահառուների/այցելուների հետ տարվող աշխատանքը փաստացի երկրորդվում է դրան, օտարերկրացիների հետ մասնագիտական աշխատանքի կազմակերպումը չի իրականանում թարգմանչի մասնակցությամբ, այլ ՔԿՀ-ում այդ լեզուն տիրապետող մեկ այլ դատապարտյալի/կալանավորի օգնությամբ, ինչն իր հերթին ունի մի շարք էթիկային խնդիրներ:

Հետազոտության ընթացքում պարզվել է, որ ՔԿՀ-ների հոգեբանները, սոցիալական աշխատողը հիմնարկի նախաձեռնությամբ մոտ երկու տարի և ավել չեն անցել համապատասխան նեղ մասնագիտական վերապատրաստումներ դատապարտյալների հետ աշխատանք իրականացնելու համար: Դիտարկումները ցույց են տվել նաև, որ ՍՀԻԱ բաժնի հոգեբաններն ու սոցիալական աշխատողը չեն ստացել համապատասխան նեղ մասնագիտական հմտություններ ինքնավնասումներ կատարած անձանց հետ հոգեթերապեվտիկ և կանխարգելիչ աշխատանքներ իրականացնելու համար:

[17] Ամբողջական տարբերակը հասանելի է Խմբիկայքի հետևյալ հղումով http://pmg.am/hy/news/successful-cases/2020-04-15-08-30-08

Ինքնավնասում կատարող անձանց հետ նրանց սպասարկող աշխատակիցների գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու համար առաջարկում ենք հաճախակի կազմակերպել նեղ մասնագիտական վերապատրաստումներ վերջիններիս համար, ապահովել մասնագիտական աշխատանքի համար անհրաժեշտ պայմանները, առանձնացնել ինքնավնասում կատարած անձանց վիճակագրական տվյալները, ինչը հնարավորություն կտա առանձնացնել ինքնավնասման ռիսկային գործոնները և ունենալ ինքնավնասման հետ աշխատանքի հստակ մշակված ռազմավարություն մասնագիտական թիմի կողմից:

6. ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ

Քրեակատարողական համակարգում իրավիճակը բարելավելու և ոլորտի շարունակական զարգացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության, որդեգրել է վերականգնողական արդարադատության սկզբունքների ներդնումը և վերասոցիալականացման գործուն համակարգի կայացումը:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը ևս կարևորում է միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական և պրոբացիայի համակարգի կայացումը, պատժողական քաղաքականությունից անցումը վերականգնողական արդարադատության, քրեական պատիժների ոլորտում վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորումը, պատժի նպատակների արդյունավետ իրացումը, քրեական ենթամշակույթի հաղթահարումը և կրկնահանցագործության նվազեցումը[18]:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական e-draft.am կայքում հանրային քննարկման դրված նախագծի վերաբերյալ Խումբը

[18]«ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1717-Լ որոշում, http://bit.do/fpNqa:

առաջարկություններ է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարությանը՝ դրական գնահատելով այն, որ ռազմավարության 20-ամյա ժամկետը կրճատվել է՝ որպես ժամկետ սահմանվելով 2019-2023 թվականները: Նմանապես, Խումբը դրական է գնահատել նաև վերանայված ռազմավարությամբ ռազմավարական ուղղությունների համալրման ու առավել ընդգրկուն դարձնելուն ուղղված մոտեցումը: Այնուհանդերձ, հրապարակված ռազմավարական նախագիծը, Խմբի գնահատմամբ, լրացուցիչ լրամշակման և կատարելագործման կարիք ուներ:

Այս համատեքստում Խումբը կարծիք է արտահայտել այն մասին, որ վերականգնողական արդարադատության սկզբունքներից բխում է, որ քրեական պատիժների ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ենթադրեն ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությանը, այնուհանդերձ, ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը վերականգնողական արդարադատության անցման առումով բավարար հստակություն չունեն:

Մասնավորապես, Խմբի գնահատմամբ հստակ չեն վերականգնողական արդարադատության ուղղությամբ որդեգրված մոտեցումները, կոնկրետ քայլերն ու դրանց պրակտիկ կիրառման երաշխիքները, ինչպես նաև անհրաժեշտ ծրագրերը:

Ուսումնասիրության ընթացքում Խումբը պարզել է, որ 2019թ. քրեակատարողական հիմնարկներում պահվող 437 անձ ընդգրկվել է տարաբնույթ աշխատանքներում՝ քրեակատարողական հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման (վարձատրվող և չվարձատրվող հիմունքներով), «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամում, իսկ բաց ուղղիչ հիմնարկի պայմաններում պատիժ կրող դատապարտյալները՝ այլ գործատուների մոտ: Քրեակատարողական հիմնարկներում վարձատրվող տեխնիկատնտեսական աշխատանքներում ներգրավելու վերաբերյալ անազատության մեջ պահվող անձանց մերժված դիմումների հաշվառում չի իրականացվում, ուստի մերժված դիմումների վերաբերյալ Խմբին տեղեկատվություն չի տրամադրվել:



Աղյուսակ 2

Չնայած ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքներին և պաշտոնական վիճակագրությանը՝ Խումբը մշտադիտարկման ժամանակ արձանագրել է մի շարք խնդիրներ: Այսպես, որոշ դատապարտյալներ ուղղիչ հիմնարկի կամ պատժի տեսակի պատճառով չեն կարող կատարել վարձատրվող աշխատանք, նույնիսկ եթե կա աշխատատեղ, ինչպես օրինակ՝ սպանության համար դատապարտված անձինք կամ կենսաթոշակային տարիքի հասած դատապարտյալները: Խումբը պարզել է, որ նմանատիպ անձինք աշխատում են կամավորության հիմունքներով՝ վճարովի աշխատանք կատարելու օրենսդրական արգելքի պատճառով:

Այս համատեքստում Խումբը առաջարկել է քննարկել օրենսդրական փոփոխություններ կատարելու հարցը, որպեսզի նշված կարգավիճակով անձինք նույնպես կարողանան կատարել վճարովի աշխատանք:

Խմբի առաջարկության վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ այն ընդունվել է ի գիտություն:

Դեռևս 2018թ. Խմբի անդամները ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ այցելության ժամանակ արձանագրել են, որ մեկ տարի առաջ փակվել է «Աբովյան» ՔԿՀ-ի կրթական

կենտրոնը՝ անչափահաս դատապարտյալներին զրկելով հանրակրթություն ստանալու հնարավորությունից: Կրթական կենտրոնի առկայությունը կարևոր է նաև կանանց համար, որոնք հաճախ հայտնվում են անբարենպաստ վիճակում՝ անհրաժեշտ կրթություն ու հմտություններ չունենալու պատճառով: Բացի այդ, կրթության առկայությունը մեծապես նպաստում է անձի ուղղվելուն:

Վերոգրյալի հիման վրա Խումբը 2018թ. փետրվարի 7-ին թիվ 18-13 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկել է քայլեր ձեռնարկել «Աբովյան» ՔԿՀ-ի կրթական կենտրոնի վերաբացման ուղղությամբ: 2018թ. փետրվարի 23-ին պատասխան գրությամբ նախարարությունից հայտնել են, որ ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության միջև ընթանում են քննարկումներ կալանավորված անձանց և դատապարտյալների՝ այդ թվում նաև անչափահաս և կին դատապարտյալների կրթության իրավունքի ապահովման և արդյունավետ իրացման խնդրի լուծման նպատակով:

Միաժամանակ, ազատազրկված անձանց կրթության իրավունքի ապահովման և իրացման հարցով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը ներկայացվել է համապատասխան վիճակագրություն կալանավորված անձանց և դատապարտյալների՝ այդ թվում նաև անչափահասների կրթության հանրակրթական մակարդակի (հիմնական, միջնակարգ), նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճանի, նախընտրելի վերապատրաստման կարճաժամկետ ծրագրերի և կրթական մակարդակի ուսումնառություն անցնելու պահանջների վերաբերյալ՝ առաջարկ ներկայացնելու նպատակով:

Նաև նշել են, որ 2018թ. հունվարի 11-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի հավելված 2-ի ՀՀ կառավարության 2018թ. գերակա խնդիրների շարքում ներառված է նաև անչափահաս դատապարտյալների հանրակրթության իրավունքի ապահովումը:

2019թ. քրեակատարողական հիմնարկներում մշտադիտարկում իրականացնելու ընթացքում Խումբը արձանագրել է, «Իրավական կրթության և վերականգնողական

ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2019թ. սեպտեմբերի 1-ից կազմակերպում է մինչև 19 տարեկան ազատազրկված անձանց հանրակրթական ծրագրերով ուսուցումը:

2019թ. ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ կատարած այցելությունների ընթացքում Խմբի անդամները անչափահաս կալանավորված անձանց հետ զրույցից հետո եզրահանգել են, որ հիմնարկում գտնվող բոլոր անչափահասները հակում ունեին հարելու քրեական ենթամշակույթին, և իրենց արարքները որոշ մասամբ նաև պայմանավորված էին այդ ենթամշակույթին առնչվելու ցանկությամբ (անչափահասներից մեկը նշեց, որ մի անգամ գողություն է կատարել, ինքնակամ գնացել է ոստիկանություն և խնդրել, որ իրեն տանեն բանտ, որպեսզի «արագ հայտնվի գաղութում»): Ճիշտ է, անչափահաս կալանավորված անձանց համար կազմակերպվում են անգլերենի և համակարգչի դասընթացներ, սակայն, անհրաժեշտ է ավելացնել նրանց զբաղվածությունը:

Ուստի Խումբը ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկել է անչափահաս կալանավորված անձանց հետ տանել ուղղորդված աշխատանք՝ քրեական ենթամշակույթից հետ պահելու համար, ինչպես նաև անչափահաս կալանավորված անձանց համար նախատեսել լրացուցիչ զբաղվածություն:

Ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանել են, որ անչափահաս կալանավորված անձանց և դատապարտյալների վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումների իրականացումը ՀՀ արդարադատության նախարարության ուշադրության կենտրոնում է: Որպես առանցքային ռազմավարական ուղղություն՝ այն նախատեսվել է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությամբ:

Այսպես, ռազմավարության շրջանակներում նախատեսվում է ապահովել ազատությունից զրկված անչափահասների կրթություն ստանալու իրավունքի շարունակականությունը (2020-2023 թվականներ, շարունակական), ներդնել ազատությունից զրկված անչափահաս անձանց ռիսկերի և կարիքների գնահատման գործիք (2020 թվականի տարեվերջ), բարելավել անչափահաս ազատազրկված անձանց պահման պայմանները (2023 թվականի տարեսկիզբ)[19]:

[19] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137161

ՀՀ ԱԾՆ «Աբովյան» ՔԿՀ-ի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի մասնագետների մշտական ուշադրության կենտրոնում են գտնվում հատկապես անչափահաս կալանավորված անձանց և դատապարտյալների հետ տարվող աշխատանքները: Մասնավորապես, անչափահաս կալանավորված անձանց և դատապարտյալների օգտակար զբաղվածությունն ապահովելու նպատակով շաբաթական 2 օր կազմակերպվում են «Դեկորատիվ կիրառական արվեստ», 2 օր՝ «Անգլերեն լեզու», 1 օր՝ «Համակարգչային հմտություններ» դասընթացներ, ինչպես նաև վերջիններս օգտվում են գրադարանից, ամենօրյա առնվազն 1 ժամ զբոսանքից և կալանավորված անձանց պահելու վայրում առկա մարզասենյակից, որտեղ կազմակերպվում են մարզական միջոցառումներ, մասնավորապես՝ ձեռքի ուժի, շախմատի և շաշկու մրցումներ: Բացի այդ, շաբաթական մեկ անգամ հոգևոր թեմաներով զրույցներ են անցկացվում նաև Հայ-առաքելական եկեղեցու սպասավորի կողմից:

Անչափահասների հետ տարվող վերոնշյալ աշխատանքները, նախարարության պարզաբանմամբ, նպաստում են նրանց մասնագիտական կողմնորոշմանը, միջանձնային դրական փոխհարաբերությունների ձևավորմանը, հասարակություն վերաինտեգրման նպատակով անհրաժեշտ հմտությունների և ունակությունների ձևավորմանը: Հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի մասնագետների կողմից այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Դիտորդները միևնույն ժամանակ արձանագրել են, որ մեկուսարանի մարզասրահի վազքուղին այցի պահին չէր աշխատում: Կալանավորված կանանց և անչափահասների զբաղվածության միջոցները առանց այդ էլ քիչ են, ուստի անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել վազքուղին վերանորոգելու համար: Նշվածի կապակցությամբ դիտորդները առաջարկել են վերանորոգել մեկուսարանի մարզասրահի վազքուղին: Արդարադատության նախարարությունից պարզաբանել են, որ մարզասրահի վազքուղու վերանորոգման հնարավորությունն ուսումնասիրվում է: Նաև տեղեկացրել են, որ «Աբովյան» ՔԿՀ-ի մարզասրահում ներկայումս առկա է նաև 3 հեծանիվ, ուժային ձգումներ կատարելու միջոցներ՝ այդպիսով ապահովելով ազատությունից զրկված անձանց կողմից դրանցից օգտվելու հնարավորությունը:

2019 թվականին զբոսանք տրամադրված ազատազրկված անձանց օրական միջին թիվը

Խումբը ուսումնասիրել է 2019թ. քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների՝ զբոսանքից հրաժարվելու հիմնական պատճառները: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ այդ պատճառներն են՝ եղանակային պայմանները, ազատազրկված անձանց առողջական վիճակը, ինչպես նաև անձնական ցանկությունը:

ՀՀ	ՔԿՀ	Զբոսանք տրամադրված կալանավորված անձանց և դատապարտյալների օրական միջին թիվը
1.	«Նուբարաշեն»	230-260
2.	«ԴՀ»	4-6
3.	«Վարդաշեն»	50-60
4.	«Աբովյան»	19
5.	«Սևան»	Կիսաբաց ուղղիչ հիմնարկ / 123
6.	«Կոշ»	Կիսաբաց ուղղիչ հիմնարկ / 137
7.	«Գորիս»	60-70
8.	«Վանաձոր»	90-100
9.	«Արթիկ»	136
10.	«Երևան-Կենտրոն»	20
11.	«Հրազդան»	140
12.	«Արմավիր»	636-650

Աղյուսակ 3

6-1. Արտաքին աշխարհի հետ կապը

Ինչպես կալանավորված անձինք, այնպես էլ դատապարտյալները ունեն արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունք: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պարտավոր է համապատասխան պայմաններ նախատեսել ընտանիքի և արտաքին աշխարհի հետ ազատազրկված անձանց կապն ապահովելու համար՝ այդ նպատակով ստեղծելով կարճատև և երկարատև տեսակցությունների

սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ և լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ:

Խումբն ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ 2019թ. կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվել է 1403 երկարատև և 14476 կարճատև տեսակցություն: Տրամադրված լրացուցիչ տեսակցությունների վերաբերյալ հաշվառում չի իրականացվում, ուստի ՀՀ արդարադատության նախարարությունը այդ մասով Խմբի հարցմանը տեղեկատվություն չի տրամադրել[20]:



Աղյուսակ 4

2019թ. ՀՀ ԱԾՆ քրեակատարողական հիմնարկներ կատարած այցելությունների ընթացքում Խումբը արձանագրել է մի շարք ընթացակարգային բացթողումներ:

Այսպես, 2019թ. հունիսին ՀՀ ԱԾՆ «Աբովյան» ՔԿՀ կատարած այցի ընթացքում Խումբը արձանագրել է, որ հիմնարկի կարճատև տեսակցությունների սենյակների դռների վրա առկա են քառակուսի անցքեր, որոնք բաց են, որևէ ապակիով փակված չեն, ինչը խախտում է ազատազրկված և նրանց տեսակցության եկած անձանց

[20]Տե՛ս«Կարճատև և երկարատև տեսակցությունների 2019թ. վիճակագրությունը», ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կայք, http://pmg.am/hy/news/successful-cases/2019-10:

խոսակցության գաղտնիությունը[21]: Հարցը քննարկվել է հիմնարկի աշխատակիցների հետ: Վերջիններս Խմբին տեղեկացրել են, որ այդ անցքերը չեն փակվել անվտանգության նկատառումներից ելնելով, որպեսզի խոսակցության բնույթից ելնելով՝ անհրաժեշտության դեպքում կարողանան միջամտել:

Այդուհանդերձ, Խմբի գնահատմամբ՝ տեսակցությունները կարող են կազմակերպվել քրեակատարողական հիմնարկի աշխատակցի տեսողության, սակայն անպայմանորեն լսողության սահմաններից դուրս: Ուստի թիվ 19-34 ընթացիկ հաշվետվությամբ Խումբը ՀՀ արդարադատության նախարարությանը առաջարկել է «Աբովյան» ՔԿՀ-ի կարճատև տեսակցությունների սենյակների դռների անցքերը փակել ապակիով (կամ այլ կերպ)՝ խոսակցության գաղտնիությունը ապահովելու համար:

Նշվածի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ անցքերը ապակեպատել են, և տեսակցող անձանց խոսակցությունները որևէ կարգով լսելի չեն հսկողություն իրականացնող քրեակատարողական ծառայողներին:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած պաշտոնական վիճակագրության վերլուծության արդյունքում Խումբը պարզել է, որ 2019թ. ընթացքում երկարատև տեսակցություն չի տրամադրվել «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի ազատազրկված անձանց: Ավելին, 2019թ. հուլիսին «Երևան-Կենտրոն» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ Խումբը արձանագրել է, որ հիմնարկում չկան երկարատև տեսակցության սենյակներ[22]: 2019թ. օրենսդրական փոփոխությունների համաձայն կալանավորված անձինք նույնպես երկարատև տեսակցության իրավունք ունեն[23]: Ըստ այդմ, երկարատև տեսակցության սենյակների բացակայության հարցը խիստ խնդրահարույց է:

---

[21]Տե՛ս «ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ-ի վարչակազմը քայլեր է ձեռնարկում Դիտորդների խմբի արձանագրած խնդիրները վերացնելու ուղղությամբ», Խմբի կայք, http://pmg.am/hy/news/successful-cases/2019-07-01-12-42-29:

[22]Տե՛ս «ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ն չունի երկարատև տեսակցության սենյակներ», Խմբի կայք, http://pmg.am/hy/news/successful-cases/2019-09-04-08-35-26:

[23] «Ձերբակալվածնկալանավորվածանձանցպահելումասին» օրենքումլրացումներևփոփոխություններկատարելումասին» ՀՀօրենք, http://bit.do/fpPg3, հոդված 2:

Խումբը թիվ 19-40 ընթացիկ հաշվետվությամբ ՀՀ արդարադատության նախարարությանը առաջարկել է «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում կառուցել երկարատև տեսակցության սենյակներ:

Պատասխան գրությամբ նախարարությունից պարզաբանել են, որ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում նախկինում երկարատև տեսակցությունների սենյակների անհրաժեշտություն չի եղել, սակայն առաջիկայում նախատեսվում է իրականացնել կառուցապատումներ, որի շրջանակներում կներառվի նաև երկարատև տեսակցության սենյակների կառուցումը:

Պարզաբանման մեջ նախարարությունը նաև նշել է, որ երկարատև տեսակցության սենյակների բացակայությունը երբևէ դատապարտյալին ընտանիքի անդամների հետ երկարատև տեսակցություն տրամադրելու իրավունքից զրկելու պատճառ չի հանդիսացել: Ցանկություն ունեցող անձինք տեղափոխվել և այդ իրավունքը իրացրել են «Նուբարաշեն» ՔԿՀ-ում առկա երկարատև տեսակցության սենյակի պայմաններում:

Բացի այդ, «ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսվում է «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ն ՀՀ ազգային անվտանգության վարչական շենքից տեղափոխել նախկին «Էրեբունի» ՔԿՀ-ի մասնաշենք, որի արդյունքում կերաշխավորվեն ազատությունից զրկված անձանց պահման պատշաճ պայմանները: Ըստ այդմ՝ ազատությունից զրկված անձանց համար կապահովվի տեղում երկարատև տեսակցություն ունենալու իրավունքի իրացման հնարավորությունը:

2019թ. հունիսին ՀՀ ԱԾՆ «Աբովյան» ՔԿՀ կատարած մեկ այլ այցի ընթացքում Խումբը նաև արձանագրել է, որ Հիմնարկում տեղակայված հեռախոսակապից օգտվելու մեկ քարտը արժե 1000 դրամ, սակայն հիմնարկում գտնվող անչափահասների ընտանիքները հիմնականում սոցիալապես անապահով վիճակում

են, իսկ անչափահասները չեն աշխատում[24]:Ուստի նրանց համար շատ դժվար է լինում քարտ ձեռք բերելը, ինչն էլ հանգեցնում է ընտանիքի հետ կապի թուլացմանը՝ առաջ բերելով հոգեբանական այլ խնդիրներ ևս: Ավելին, շաբաթ և կիրակի օրերին հիմնարկում չի թույլատրվում օգտվել հեռախոսներից:

Խմբի գնահատմամբ այս սահմանափակումը անթույլատրելի է անչափահասների և կանանց դեպքում՝ հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ ազատազրկված կանանցից շատերն ունեն անչափահաս երեխաներ, և նրանց կապն ընտանիքի հետ շատ կարևոր է:

Հերթական գրությամբ Խումբը ՀՀ արդարադատության նախարարությանը առաջարկել է անչափահաս կալանավորված անձանց հեռախոսակապից օգտվելու համար պարբերաբար տրամադրել անվճար քարտեր, ինչպես նաև շաբաթ և կիրակի օրերին հիմնարկում թույլատրել օգտվել հեռախոսներից:

Նշվածի կապակցությամբ նախարարությունից պարզաբանել են, որ հեռախոսակապից օգտվելու գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշմամբ, որով նախատեսվում է բացառապես սեփական միջոցներով կամ հանձնուքներով կամ ծանրոցներով քարտեր ձեռք բերելու՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի հնարավորությունը: Բացի այդ, քրեակատարողական հիմնարկում հեռախոսակապից օգտվելու հնարավորությունը տրամադրվում է ըստ հիմնարկի պետի կողմից հաստատված ժամանակացույցի, իսկ անհրաժեշտության դեպքում հեռախոսակապից օգտվելը տրամադրվում է նաև շաբաթ և կիրակի օրերին:

Նախարարությունը նաև տեսակետ է արտահայտել, որ օրենսդրությամբ կալանավորված անձանց և դատապարտյալներին անվճար քարտեր տրամադրելու հնարավորություն նախատեսելու հարցը կարող է դիտարկվել քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարության՝ արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումների շրջանակներում:

---

[24]Տե՛ս «ՀՀԱՆ «Աբովյան» ՔԿՀ-ումառկախնդիրներիարդյունավետկարգավորումըԴիտորդներիխմբիուշադրությանկենտրոնումէ», Խմբի կայք, http://pmg.am/hy/news/successful-cases/2019-08-05-09-17-13:

2019թ. հունիսին ՀՀ ԱՃՆ «Նուբարաշեն» ՔԿՀ կատարած այցելության ընթացքում Խումբը արձանագրել է, որ օտարերկրյա քաղաքացիների դեպքում, ովքեր չեն տիրապետում հայերենին, լուրջ խնդիրներ են առաջանում աշխատակիցների հետ հաղորդակցվելու, ինչպես նաև նրանց դիմումներին ծանոթանալու և պատասխանելու կապակցությամբ: Խնդիրն ավելի է բարդանում, երբ դատապարտյալները չեն տիրապետում անգլերեն և ռուսերեն լեզուներին: Այս հարցում ազատազրկված անձանց հետ համակարծիք էին նաև հիմնարկի աշխատողները: Նրանք ևս նշել են, որ առկա է թարգմանչի պակաս[25]:

ՄԱԿ-ի՝ բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 51-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ տվյալ հիմնարկի տնօրենը, նրա տեղակալը և աշխատակիցների մեծամասնությունը պետք է իմանա այն լեզուն, որով խոսում է բանտարկյալների մեծամասնությունը կամ այն լեզուն, որը հասկանալի է նրանց մեծ մասին: 2-րդ կետի համաձայն այնտեղ, ուր անհրաժեշտ է, պետք է օգտվել թարգմանչի ծառայություններից:

Արձանագրված խնդրի կապակցությամբ Խումբը 2019թ. հունիսի 26-ին թիվ 19-35 ընթացիկ հաշվետվությամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ առաջարկելով «Նուբարաշեն» ՔԿՀ-ին միջոցներ հատկացնել որոշակի պարբերականությամբ հիմնարկ թարգմանիչ հրավիրելու համար կամ այլ եղանակով լուծել թարգմանության հետ կապված խնդիրները:

Արդարադատության նախարարությունից մեկնաբանել են, որ քրեակատարողական հիմնարկներ մուտք գործած օտարերկրյա քաղաքացիները հնարավորինս իրենց հասկանալի լեզվով ծանոթացվում են իրենց իրավունքներին և պարտականություններին, հիմնարկի ներքին կանոնակարգին: Բացի այդ, կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքները և պարտականությունները թարգմանվել են ռուսերեն, պարսկերեն և անգլերեն, փակցվել տեսանելի վայրերում, ինչպես նաև տրամադրվել վերջիններիս: Ընդ որում, Հայաստանում օտարերկրյա պետությունների դեսպանատների և հյուպատոսական

[25] Տե՛ս «ԴիտորդներիիխումբըհետամուտէՀՀԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ումարձանագրվածխնդիրներիվերացմանը», Խմբի կայք, http://pmg.am/hy/news/successful-cases/2019-07-31-09-26-37:

ծառայությունների հետ առկա է համագործակցություն և նրանց ներկայացուցիչների հետ համատեղ իրականացվում են ստացված դիմումների թարգմանությունները:

Խմբի անդամները 2019թ. նոյեմբերին ՀՀ ԱՃՆ «Արմավիր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ զրուցել են հիմնարկի 5-րդ մասնաշենքում գտնվող մի քանի ազատազրկված անձանց հետ: Վերջիններս նշել են, որ իրենց նամակները և գրությունները գրաքննության են ենթարկվում: Հիմնարկի պետը կարդում է և զտում նամակները, անհաճո նամակ-բողոքները չեն ուղարկվում, իսկ տաքսաֆոններից զրուցելու ժամանակ աշխատակիցները լսում են իրենց խոսակցությունները: Դիտորդները պետի աշխատասենյակում անձամբ են արձանագրել, որ, իսկապես, դատապարտյալների նամակները բացված, դրված էին սեղանին, և պետը ազատ ընթերցում էր դրանք:

Վերոգրյալի հիման վրա Խումբը 2019թ. 25-ին դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ առաջարկելով քայլեր ձեռնարկել նամակագրության և հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը ապահովելու ուղղությամբ:

Խմբի առաջարկությանն ի պատասխան՝ նախարարությունից տեղեկացրել են, որ «Արմավիր» ՔԿՀ-ի 5-րդ մասնաշենքում պահվում են փակ, կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալները և կալանավորված անձինք, որոնք նամակագրություն վարելու իրենց իրավունքն իրականացնում են հիմնարկի վարչակազմի միջոցով: Մասնավորապես, հիմնարկի 5-րդ մասնաշենքում պահվող կալանավորված անձինք և դատապարտյալները վարչակազմի ներկայացուցչի, տվյալ դեպքում՝ հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական բաժնի ներկայացուցչին են փոխանցում իրենց նամակներն ու դիմումները՝ փակ ծրարով կամ առանց ծրարի՝ ըստ իրենց ցանկության: Վերջինս դրանք հանձնում է ընդհանուր աշխատանքների խմբին, որտեղ հիմնարկի վարչակազմին հասցեագրված դիմումներն առանձնացվում և հանձնվում են հիմնարկի պետին՝ ընթացքը լուծելու համար համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով:

Այլ անձանց հասցեագրված դիմումներն ու նամակները հասցեատերերին ուղարկելու համար առանց դրանց բովանդակությանը ծանոթանալու ընդհանուր աշխատանքների խմբի կողմից պատրաստվում են ուղեկցող գրությունների նախագծեր և նամակների հետ միասին ներկայացվում են հիմնարկի պետի ստորագրմանը: Վերջինս կրկին առանց նամակի կամ դիմումի բովանդակությանը

ծանոթանալու ստորագրում է ուղեկցող գրությունը, որից հետո սահմանված կարգով ընդհանուր աշխատանքների խմբի կողմից ուղարկվում են համապատասխան հասցեատերերին:

Բացի այդ, նշված մասնաշենքում 2019թ. նոյեմբերի 5-ին տեղադրվել է դիմումների արկղ, որտեղ կալանավորված անձինք և դատապարտյալները կարող են գցել իրենց նամակները և դիմումները: Յուրաքանչյուր աշխատանքային օր դիմումների արկղում առկա նամակները պատասխանատու հերթապահի կողմից հանձնվում են ընդհանուր աշխատանքների խմբին, որը սահմանված կարգով իրականացնում է նամակների առաքումը: Դիմումների, նամակների առաքումը հավաստող գրությունները հաշվառվում են այդ նպատակով վարվող համապատասխան մատյանում, որի մեջ դիմումների և նամակների բովանդակությունը չի նշվում, իսկ գրությունների պատճենները պահվում են կալանավորված անձանց և դատապարտյալների անձնական գործերում:

6-2. Ազատազրկված անձանց նկատմամբ կիրառված խրախուսանքները և տույժերը

Խումբը ուսումնասիրել է նաև 2019թ. կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ կիրառվող խրախուսման ու կարգապահական տույժերի պրակտիկան:

Այսպես, 2019թ. քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ, ընդհանուր առմամբ կիրառվել է 93 խրախուսանքի միջոց, որից 40-ի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից ներկայացվել է միջնորդություն՝ կասեցնելու և վերանայելու պահանջով: Վերոնշյալի համատեքստում ՀՀ ԱՃՆ քրեակատարողական հիմնարկների պետերի որոշումներով վերացվել է 37 խրախուսանքի միջոց:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած պաշտոնական վիճակագրության վերլուծության արդյունքում Խումբը պարզել է, որ 2019թ.

խրախուսանքի չեն արժանացել «Աբովյան» և «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ների ազատազրկված անձինք:

2019թ. ՀՀ ԱՃՆ ՔԿՀ-ներում կիրառված խրախուսանքները



Աղյուսակ 5

Ինչ վերաբերում է տույժերին, ապա կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ, ընդհանուր առմամբ կիրառվել է 2219 տույժ, որից 691-ը՝ նկատողություն, 426-ը՝ խիստ նկատողություն, 1102-ը՝ պատժախուց: Քրեակատարողական ծառայությունում ազատազրկված անձանց նկատմամբ կիրառված տույժերի բողոքարկման և կատարված արարքի բովանդակության վերաբերյալ կենտրոնացված հաշվառում, սակայն չի իրականացվում: Տույժի միջոց կիրառելու որոշումները կասեցնելու և վերանայելու վերաբերյալ ՀՀ դատախազության կողմից ստացվել է 3 միջնորդություն («Կոշ» ՔԿՀ՝ 1 և «Արմավիր»՝ 2 միջնորդություն), որոնք բավարարվել են:

2019թ. ՀՀ ԱՃՆ ՔԿՀ-ներում կիրառված տույժերը



Աղյուսակ 6

Այսպիսով, ըստ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ 2019թ. ազատազրկված անձանց նկատմամբ կիրառվել է 2219 կարգապահական տույժի միջոց: Նույն ժամանակահատվածում ազատազրկված անձանց նկատմամբ կիրառվել է 93 խրախուսանքի միջոց[26]:

Այսինքն՝ տույժեր կիրառելու վերաբերյալ որոշումներն ավելի քան 20 անգամ ավելի շատ են, քան խրախուսանքի միջոց կիրառելու որոշումները: Ավելին, ազատազրկված անձանց նկատմամբ կիրառված տույժերի և խրախուսանքի միջոցների ուսումնասիրության ընթացքում Խումբը պարզել է, որ 2019թ. օրինականության ստուգման արդյունքում կասեցվել և վերանայման միջնորդություններ են ներկայացվել տույժի կիրառման 3 որոշումների վերաբերյալ, որոնք բավարարվել են, և խրախուսանքի 40 որոշումների վերաբերյալ, ինչի

[26]Տե՛ս «Ազատազրկված անձանց նկատմամբ կիրառվող խրախուսանքների և տույժերի 2019թ. վիճակագրությունը», Խմբի կայք,http://pmg.am/hy/news/successful-cases/2019-11-18-09-33-27:

արդյունքում հիմնարկների պետերի որոշումներով վերացվել է 37 խրախուսանքի միջոց:

Խմբի գնահատմամբ՝ նշված վիճակագրությունը խիստ մտահոգիչ է և թույլ է տալիս եզրահանգել, որ քրեակատարողական հիմնարկներում ուղղիչ գործառույթը գրեթե բացակայում է, տարվում է պատժողական քաղաքականություն, ինչը չի նպաստում դատապարտյալների ուղղվելուն: Միևնույն ժամանակ Խմբի դիրքորոշմամբ դատախազության կողմից խրախուսանքների վիճարկման վերաբերյալ միջնորդությունները օրինական չեն:

Այսպես, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է դատախազական հսկողությունը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: Նույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն, իր լիազորություններն իրականացնելիս դատախազն իրավունք ունի ստուգելու ՀՀ ԱՃՆ քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին: Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած մարմին կամ ակտը վերացնելու միջնորդագիր է ներկայացնում ակտն ընդունած մարմնի համապատասխան վերադաս մարմին կամ պաշտոնատար անձին, իսկ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը՝ նաև իրավասու հանրապետական գործադիր մարմնի ղեկավարին:

Հոդվածի բովանդակությունից հետևում է, որ դատախազությունը կարող է ստուգման ենթարկել իրավական ակտերի որոշակի շրջանակ, մասնավորապես նրանք, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների

ենթարկված անձի հիմնական իրավունքներին, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին: Նույն կետով դատախազությանն իրավունք է վերապահում վերանայել ու միջնորդել իրավական ակտը, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները.

1) լրացուցիչ կարճատև կամ երկարատև տեսակցության տրամադրում, բայց տարվա ընթացքում երկու կարճատև կամ երկու երկարատև տեսակցությունից ոչ ավելի,

2) փակ տեսակի ուղղիչ հիմնարկում պահվող դատապարտյալի զբոսանքի տևողության ավելացում մինչև երկու ժամ՝ մեկ ամիս ժամկետով,

3) նախկինում նշանակված տույժի վաղաժամկետ հանում:

Տվյալ դեպքում Խումբը գտնում է, որ նույնիսկ տեսականորեն դժվար է պատկերացնել մի իրավիճակ, երբ խրախուսանքի միջոցը կարող է առաջացնել ծանր հետևանքներ, հետևաբար դատախազության կողմից խրախուսանքի միջոցների կասեցումը դիտում ենք ոչ իրավաչափ:

Մյուս կողմից, Խմբի գնահատման քննարկման առարկա է այն հանգամանքը, թե արդյոք դատախազությունն իրավունք ունի՞ վիճարկել խրախուսանքի միջոց կիրառելու վերաբերյալ որոշումը, թե՞՝ ոչ: Օրինակ՝ խրախուսանքի միջոց կիրառելու որոշումը, որով նախկինում նշանակված տույժը վաղաժամկետ հանվել է, արդյո՞ք նշված իրավական ակտը վերաբերում է պատժի ենթարկված անձի հիմնական իրավունքներին (որը նախատեսված է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածով) կամ պատժի կրման օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին: Այդ իրավական ակտը չի մտնում այն ակտերի շրջանակի մեջ, որոնք կարող են վիճարկվել դատախազության կողմից:

Մյուս կողմից, եթե նույնիսկ դատախազությունն ունի այդ իրավունքը, ապա տվյալ դեպքում օրենսդրորեն պետք է հստակեցվեն այն ժամկետները, երբ դատախազությունը կարող է ներկայացնել համապատասխան միջնորդությունը,

պետք է հստակ սահմանվի այն անձի (տվյալ դեպքում դատապարտյալի) իրավունքների շրջանակը, որի վերաբերյալ որոշումը վիճարկում է դատախազությունը, որպեսզի վերջինս հնարավորություն ունենա դատախազության դիրքորոշման վերաբերյալ ներկայացնել իր փաստարկները:

Նշվածից բացի, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով դատախազությանը տրված լիազորությունները հակասում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջներին և դատախազության գործունեությունը չի տեղավորվում նշված օրենքի շրջանակների մեջ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին, իսկ «Դատախազության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է ավելի ուշ՝ 2017թ. նոյեմբերի 17-ին: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝

1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը,

2) ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը, սակայն եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, ապա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը,

3) ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը,

4) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

Սույն հոդվածի տրամաբանությունից ելնելով՝ Խումբը գտնում է, որ խրախուսանքի միջոց կիրառելու որոշումը վիճարկելու դեպքում չի կարող կիրառվել «Դատախազության մասին» ՀՀ օրենքը: Պետք է կիրառելի լինի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթները («Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի հիմքով):

Վերոգրյալի հիման վրա Խումբը ՀՀ արդարադատության նախարարությանը կոչ է արել քրեակատարողական ռազմավարության պրակտիկ իրագործման փուլում հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկել՝ քրեակատարողական ոլորտում իրականացվող քաղաքականությունը բարելավելու նպատակով, և առաջարկել է դատախազության կողմից ներկայացվող միջնորդություններին ընթացք չտալ և թողնել անհետևանք:

Հարցի առնչությամբ նախարարության դիրքորոշումն այն է, որ թե՞ խրախուսանքի, թե՞ տույժի միջոցները մեկ տրամաբանական ամբողջություն են, որի հիմքում դրված է դատապարտյալի վարքագիծը, և դրանք, կախված վերջինիս դրական կամ բացասական լինելուց, համապատասխանաբար կիրառվում են ՀՀ քրեակատարողական օրենսգրքով սահմանված կարգով: Այլ կերպ՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17-րդ գլխում սահմանվում են այն բոլոր հիմքերը, որոնց դեպքում կիրառվում են խրախուսանքի կամ տույժի միջոցները, ինչպես նաև այն պայմանները, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատապարտյալի վարքագիծը խրախուսելու կամ օրինապահ դարձնելու համար: Հետևաբար, թե՞ խրախուսանքի, թե՞ տույժի միջոցների կիրառման գործընթացն իրականացվում է պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին համապատասխան:

Արդարադատության նախարարության մեկնաբանությամբ՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված իրավունքների շրջանակներում դատախազը իրավասու է ստուգելու, վերանայելու միջնորդություն ներկայացնելու, ակտի գործողությունը կասեցնելու և այն ընդունած մարմին վերանայելու միջնորդագիր ներկայացնելու կամ ակտը վերացնելու միջնորդագիր ներկայացնելու ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի կողմից ընդունված ցանկացած իրավական ակտ, որն առնչվում է խրախուսանքի և տույժի միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին և պայմաններին:

7. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ

7-1. Կանանց և անչափահասների իրավունքները Աբովյան ՔԿՀ-ում

Կանայք և անչափահասները ազատազրկման վայրերում կարիք ունեն առավել մեծ ուշադրության՝ պայմանավորված նրանց առանձնահատկություններով ու հատուկ կարիքներով: Այդ առնչությամբ պետության պարտավորությունն է անել հնարավորը, որպեսզի կանայք և անչափահասները՝ գտնվելով անազատության մեջ չկորցնեն իրենց ֆիզիկական և հոգեկան առողջությունը:

Ըստ ԽԿԿ-ի հաշվետվություններում արտահայտված ձևակերպման՝ ազատազրկված կանայք, այնուամենայնիվ, կազմում են ազատազրկված անձանց համեմատաբար փոքր մասը:Կանանց կալանքի տակ պահելու համար առանձին հատկացումներ կատարելը պետությունների համար կապված է մեծ հատուկ ծախսերի հետ: Կանայք հաճախ պահվում են ի սկզբանե տղամարդկանց համար նախատեսված ոչ մեծ թվով շինություններում: Այս պարագաներում անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել ազատազրկված կանանց անվտանգ և բարվոք միջավայրում պահելու համար:

2019 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների խմբի կողմից «Աբովյան» ՔԿՀ կատարվել են ինչպես պլանային, այնպես էլ ընթացիկ այցելություններ: Ըստ այդմ, պլանային այցի ժամանակ Աբովյան ՔԿՀ-ում գտնվող 81 ազատազրկված անձանցից 5-ը եղել է անչափահաս կալանավոր և 1-ւ հանդիսացել չափահաս /19 տարեկան/, 42 կալանքի տակ գտնվող և 39 դատապարտյալ կին

7-2. Պահման պայմաններ, պատշաճ կացարան

Դիտորդների խումբը մշտադիտարկման արդյունքում դիտարկել է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի մասնաշենքը, որտեղ պահվում են կալանավորված կանայք, փակ ուղղիչ հիմնարկ տեղաբաշխված ազատազրկման դատապարտված կանայք, ինչպես նաև կալանավորված և դատապարտված անչափահասներ, կանանց տեղամասը, որը կացարանային տիպի երկհարկ շինություն է, ինչպես նաև պատժախցերն ու կարանտինային հատվածը:

Ինչպես նախորդ զեկույցներում, այնպես էլ այս տարի, Խումբն արձանագրել է, որ մեկուսարանի շենքը գտնվում է անմխիթար վիճակում, խոնավ է, թե՛ խցերում, թե՛ միջանցքների պատերին առկա են պատի արտաքին շերտի քայքայումներ և խոնավության հետևանքով առաջացած բորբոսի հետքեր:

Չնայած որ փորձ է արվել վերանորոգել մարմնամարզության համար նախատեսված տարածքը, սակայն խոնավությունը դարձյալ ներթափանցել է տարածք:

Դիտարկելով սանհանգույցները, Խումբն արձանագրել է, որ խցերում բացակայում է տաք ջրի հասանելիությունը, ավելին, կա հոսող ջրի հետ կապված խնդիր:

ԽԿԿ դիրքորոշումը կանանց հիգիենայի առնչությամբ հաստատում է, որ ազատազրկված կանանց պահանջները, այդ առումով, զգալիորեն տարբերվում են տղամարդկանց պահանջներից: Կանանց հիգիենայի յուրահատուկ պահանջները պետք է բավարարվեն համապատասխան ձևով: Կարևոր նշանակություն ունեն սանիտարական և լվացվելու միջոցներից անմիջապես օգտվելու հնարավորությունը,

արյունով աղտոտված իրերի անվտանգ նետումը, հիգիենիկ միջոցների ապահովումը:

Դիտարկման ընթացքում Խմբի անդամները արձանագրել են նաև խցերում կրծողների առկայության խնդիրը, որոնք առաջացնում են ճեղքեր հատակի վրա, ինչպես նաև շրիշակների ու պատերի ստորին հատվածներում:

Հատկապես անմխիթար են անչափահասների համար նախատեսված խցերի գույքին, լույսի, խոնավության, ինչպես նաև հիգիենայի վերաբերող իրավիճակը, բացակայում են պահարանի և, նույնիսկ, զուգարանի դռան փականները:

Մշտադիտարկման ընթացքում Խմբին ահազանգ է ստացվել մինչև երեք տարեկան երեխա ունեցող կնոջ կողմից, ում, ցավոք, տեսակցել և զրուցել Խումբը չի կարողացել՝ քննիչի կողմից արգելանքի առկայության պատճառով: Սակայն, ինչպես և նախորդ տարիներին, այնպես էլ այժմ, խումբն արձանագրում է, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում չկան համապատասխան պայմաններ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց համար: Թե՞ խցերը, թե սանհանգույցները հարմարեցված չեն երեխաների խնամքը ապահովելու համար:

ԽԿԿի դիրքորոշումը սրա առնչությամբ այն է, որ երեխայի բարեկեցությունը պետք է լինի ղեկավար սկզբունք: Սա, մասնավորապես ենթադրում է, որ ազատազրկման վայրում նախածննդյան և հետծննդյան խնամքը պետք է համարժեք լինի տվյալ հասարակության մեջ ազատության պայմաններում տրվող խնամքին:



Այսպիսի պայմաններում նորածինների և մանուկների նկատմամբ վարվեցողությունը պետք է վերահսկվի սոցիալական աշխատանքի և երեխաների զարգացման հարցերով զբաղվող մասնագետների կողմից: Նպատակը պետք է լինի երեխայի համար այնպիսի միջավայր ստեղծելը, որը զերծ է բանտին բնորոշ հատկանիշներից, ինչպիսիք են, օրինակ՝ համազգեստը, բանալիներից առաջացած աղմուկը: Անհրաժեշտ է նաև այնպիսի միջոցներ ձեռնարկել, որոնք կապահովեն ուղղիչ հիմնարկներում երեխաների շարժողական և ճանաչողական ունակությունների բնական զարգացումը:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կանանց կացարանային շինության վիճակը համեմատաբար բարվոք է, թեև այստեղ էլ առկա է վերանորոգման և թարմացման կարիք, հատկապես սանհանգույցում, որտեղ առկա է նաև ծորակների անսարքություն և տաք ջրի բացակայություն:

Դեռևս խնդրահարույց է նաև կանանց լոգանքի ապահովման խնդիրը, որը իրականացվում է շաբաթը մեկ անգամ, ինչը բավարար չէ: Խումբը բազմիցս դիմել է

ՀՀ ԱՆ խնդրի լուծման համար, սակայն ԱՆ կողմից մատնանշվել է ջրահեռացման համակարգի ոչ բարվոք վիճակը, որի պատճառով լոգանքի հաճախականության ավելացում հնարավոր չէ:

Կարևոր է ընդգծել, որ, վերջապես, իրականացվել է քրեակատարողական հիմնարկի ջրահեռացման համակարգի վերանորոգում, որը հնարավորություն կտա վերանայել նաև կանաց լոգանքի հարցը:

7-3. Պատժախուց և կարանտինային խցեր

Խումբը մշտադիտարկման ընթացքում դիտարկել է նաև «Աբովյան» ՔԿՀ պատժախուցն ու կարանտինային խցերը, բայցի այդ, ստացել է ահազանգ կնոջից, ով ամռան ամիսների ընթացքում երկու անգամ մեկուսացվել է պատժախցում՝ 5-ական օրով: Պատժախուցը գտնվում է մեկուսարանի շենքում՝ անմխիթար վիճակում, ունի վերանորոգման կարիք: Ինքնին, նման հաճախականությամբ կնոջ պատժախցում գտնվելը առաջացնում է հարցեր: Խմբի անդամները զրուցել են թե՞ կնոջ, թե՞ ՔԿՀ աշխատակիցների հետ, դիտարկել բժշկական մատյանում առկա գրառումները: ՔԿՀ հոգեբանի հավաստմամբ կինը հաճախ է կոնֆլիկտներ հրահրում, գտնվում է անկայուն վիճակում, նույնիսկ՝ բուժանձնակազմի հետ վեճի բռնվում՝ ատամնաբույժի, գինեկոլոգի հետ: Պնդում, որ առողջական խնդիրներ ունի՝ դաշտանային ցիկլի խանգարումներ, ատամնացավ: Խոսելով բժշկական անձնակազմի հետ և դիտարկելով մատյանները՝ Խումբը պարզել է, որ թեև կինն իր առողջական խնդիրներով բազմիցս դիմել է բուժանձնակազմին, սակայն գրավոր հրաժարվել է ատամնաբույժի և գինեկոլոգի ծառայությունից, պատճառաբանելով, որ վախենում է:

Փաստացի, կնոջ նկատմամբ երեք տույժ է կիրառվել՝ առնվազն մեկի դեպքում բուժաշխատողին վիրավորելու համար հայտնվել է պատժախցում:

ԽԱԿ մոտեցումները տվյալ հարցի վերաբերյալ հստակ է: Բուժանձնակազմը չպետք է մասնակցի կարգապահական տույժերի որոշումների կայացման գործընթացին, որը կարող է հանգեցնել ցանկացած տեսակի մեկուսի բանտարկության, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջոցառումը կիրառվում է բժշկական նկատառումներով: Խմբի կողմից կարանտինային խցերը դիտարկումը ցույց է տվել, որ դրանք, գտնվելով պատժախցի հարևանությամբ, առանձնապես չեն տարբերվում, խիստ անմխիթար վիճակում են, ունեն նորոգման կարիք: Եթե հաշվի

առնենք, որ կանայք կալանավորվելուց և ՔԿՀ տեղափոխվելուց անմիջապես տեղափոխվում և մի քանի օր մնում են կարանտինային խցում, անընդունելի են ազատությունից անազատություն անցման նման սթրեսային պայմանները: Նաև՝ հաշվի առնելով, որ կալանքը կարող է լինեն ոչ երկարատև և անձը դեռևս դատապարտված չէ և նրա մեղավորությունն ապացուցված չէ, նման ծանր պայմաններում կալանավորված կանանց պահելը ևս ընդունելի չէ:

7-4. Կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ

Դիտորդների խումբը, իր մշտադիտարկման ընթացքում դիտարկել է նաև «Աբովյան» ՔԿՀ տեսակցության համար նախատեսված սենյակները: Հատկապես երկարատև տեսակցությունների վերաբերյալ Խումբը իր նախորդ զեկույցներում նշել է, որ կանայք և անչափահասները քիչ են օգտվում տեսակցություններից[27]: Երբեմն, դատապարտյալ կանանց լքում են ամուսինները, իսկ երեխաներին հենց կանայք չեն ցանկանում սթրեսի ենթարկել և հանդիպել ճաղերի հետևում: Այդ իսկ պատճառով

կարևորվում է տեսակապի առկայությունը, որից հաճախակի օգտվում են կանայք՝ չկորցնելով կապը ընտանիքների հետ: Ինչ վերաբերում է անչափահասներին, ապա նրանցից շատերը անապահով ընտանիքներից են և ընտանիքի անդամները դժվարանում են այցելել նրանց: Ըստ հավաքագրված տվյալների, որոնք ձեռք են բերվել կանանց հետ առանձնազրույցների ու ընդհանուր դիտարկումների արդյունքում, կանայք ավելի քիչ են տեսակցություններ ունենում հարազատների հետ, և այդ տեսակցությունների հիմնական մասը կարճատև հանդիպումներն են: Երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակները նույնպես հարմարավետ կահավորված չեն:

[27] http://pmg.am/hy/library/annual-reports/2018

Խումբն իր առանձնազրույցների ընթացքում պարզել է նաև այն, որ կանայք և անչափահասները, որոնք պահվում են մեկուսարանում, հաճախ խուսափում են զբոսանքից: Նրանք փաստում են, որ կալանավորների համար նախատեսված զբոսանքի տարածքը նման է թռչնաբնի, որտեղ իրենք իրենց շատ ավելի վատ են զգում, քան խցերում: Չկա անձրևի և ձյան ժամանակ, ինչպես նաև արևի ճառագայթներից պատսպարվելու, ֆիզիկական վարժություններ կատարելու հնարավորություն:

Անազատության մեջ գտնվող երեխաների բացառիկ խոցելիությունը պահանջում է խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի կանխարգելման առումով ավելի բարձր չափորոշիչներ ու ավելի ընդգրկուն երաշխիքներ: Այս առումով վերոնշյալ խնդիրները միջազգային չափորոշիչներին համահունչ հրատապ լուծումներ են պահանջում[28]:

7-5. Կրթություն և զբաղվածություն

Դիտորդների խումբը բազմիցս բարձրաձայնել է ազատությունից զրկված անչափահասների կրթության իրավունքի խախտման մասին: Կարևոր առաջընթաց է, որ 2019 թվականի սեպտեմբերից ազատությունից զրկված անչափահասները սկսել են ստանալ միջնակարգ կրթություն: Առանձնազրույցների ժամանակ անազատության մեջ գտնվող անչափահասները հավաստիացրել են, որ դասերով զբաղվելը լցնում է նրանց օրը, բարերար ազդեցություն է ունենում իրենց հոգեբանական վիճակի վրա:

[28] https://www.unicef.org/armenia/sites/unicef.org.armenia/files/2018-12/DCI%20guide%20_%20armenian.pdf

Ինչ վերաբերում է դատապարտյալ կանանց զբաղվածությանը, ապա ի տարբերություն այլ ՔԿՀ-ների «Աբովյան»-ում կանայք որոշակիորեն ապահովվում են վճարովի աշխատանքով, ունեն հնարավորություն մասնակցելու օտար լեզվի ուսուցման դասընթացների, զբաղվել ձեռքի աշխատանք կատարելով, նկարչությամբ ու խեցեգործությամբ, ինչպես նաև ստանալ համակարգչային հմտություններ ու գիտելիքներ՝ հատուկ կահավորված տարածքներում:

7-6. ՔԿՀ աշխատակազմի աշխատանքային պայմանները

Դիտորդների խումբը իր նախորդ զեկույցներում անդրադարձել է ՔԿՀ աշխատակիցների սոցիալական երաշխիքների համակարգի ներդրման անհրաժեշտությանը ևս: Կարևոր է խնդրի լուծման ուղղությամբ շարունակական գործողությունների իրականացումը: Ինչ վերաբերում է աշխատանքային պայմաններին, ապա «Աբովյան» ՔԿՀ մեկուսարանի շենքում աշխատակիցների սենյակները գտնվում են խիստ անմխիթար վիճակում, ունեն վերանորոգման կարիք:

Դատապարտյալների հետ դասընթաց

7-7. Խտրականության դրսևորումները ԼԳԲՏ ազատազրկված անձանց նկատմամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում

Նույնասեռական անձանց նկատմամբ խտրականության դրսևորումներին նույնպես Խումբը պարբերաբար անդրադարձել է նախորդ տարեկան զեկույցներում և ընթացիկ հաշվետվություններում: 2019թ.-ի ընթացքում Դիտորդների կողմից արձանագրված փաստերը լրացուցիչ անգամ հավաստում են, որ քրեակատարողական հիմնարկներում շարունակվում է խոցելի խմբերի նկատմամբ տարբերակված վերաբերմունքը և խտրականությունը, ինչը դրսևորվում է տարբեր ոլորտներում:

Խումբը, ինչպես նախորդ տարիների ընթացքում, այնպես էլ 2019թ. բազմաթիվ ահազանգեր է ստացել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ԼԳԲՏ անձանցից, որոնք հիմնականում վերաբերել են պահման պայմաններին, առողջության հետ կապված խնդիրներին, այլ ազատազրկվածների և հիմնարկի վարչակազմի կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքի դեպքերին, դրանց հիման վրա կատարել այցեր և ներկայացրել գրություններ ՀՀ ԱՆ:

Նույնասեռական անձինք ներկայումս ևս քրեական ենթամշակույթի հիերարխիայում զբաղեցնում են ամենացածր դիրքը՝ անկախ այլ որակներից: Նույնասեռականներին են հավասարեցվում քրեական ենթամշակույթի կանոնները կոպտորեն խախտած դատապարտյալները՝ «թռածները»: Իսկ պրակտիկան, որը նույնասեռականներին էր հավասարեցնում սեռական բնույթի հանցագործությունների (բռնաբարություն, մանկապղծություն) համար դատապարտվածներին, ներկա պահին ենթադրաբար չի գործում:

Նույնասեռականների և քրեական ենթամշակույթի կանոնները խախտողների՝ թռածների նկատմամբ ավելի հաճախ կիրառվում են ոչ թե բռնության, այլ մեկուսացման, ստորացման և շահագործման մեթոդներ:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 31-րդ կետի համաձայն՝ կարգապահական զանցանքների համար իբրև պատժաձևեր պետք է արգելել մարմնական պատիժները, չլուսավորվող խցում բանտարկելը և

պատժի դաժան, անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը ստորացնող ձևերի կիրառումը:

ԼԳԲՏ անձանց խցերը օրինակներ.





Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 8-րդ կետի համաձայն՝ բանտարկյալների տարբեր կատեգորիաները պահվում են առանձին հիմնարկներում կամ միևնույն հիմնարկի առանձին մասերում, հաշվի առնելով նրանց սեռը, տարիքը, նախնական դատվածությունը, բանտարկության իրական պատճառները և նրանց հետ նախատեսված վարվեցողությունը:

Վերոնշյալ կարգավորումը չի նախատեսում նույնասեռական անձանց հետերոսեքսուալ անձանցից առանձին պահելու պայման:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ԼԳԲՏ ազատազրկված անձանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը հակասում է նաև Ձյոկարտյան 9–րդ սկզբունքին, որի համաձայն՝ պետությունները հնարավորինս ապահովում են բոլոր դատապարտյալների մասնակցությունն իրենց պահման մասին որոշումների կայացմանը, որը կհամապատասխանի իրենց սեռական կողմնորոշմանն ու գենդերային ինքնությանը, ապահովում են պաշտպանության միջոցներ բոլոր դատապարտյալների համար, ովքեր կարող են խոցելի լինել բռնության կամ անթույլատրելի վերաբերմունքի դրսևորման տեսանկյունից սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով, ինչպես նաև ողջամիտ սահմաններում ապահովում են, որպեսզի այդ պաշտպանության միջոցները չուղեկցվեն ավելի շատ սահմանափակումներով, քան դրանք սովորաբար կիրառվում են այլ ազատազրկվածների նկատմամբ:

ԼԳԲՏ անձինք ներգրավվում են մյուս ազատազրկված անձանց կողմից նվաստացուցիչ համարվող այնպիսի աշխատանքներում, ինչպիսիք են, օրինակ՝

զուգարանի, լողասենյակի, աղբահանության, կոյուղու և տարածքի մաքրման աշխատանքները: Հիմնարկի աշխատակիցները հավաստիացնում են, որ նրանք նման աշխատանքներում ներգրավվում են իրենց դիմումների համաձայն: Մինչդեռ նման իրավիճակը համատարած բնույթ է կրում, ինչը հիմք է տալիս կարծելու, որ այդ դիմումները սեփական նախաձեռնությամբ չեն ներկայացվում:

ԼԳԲՏ ազատազրկված անձանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը հակասում է միջազգային չափանիշներին:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 71-րդ կետի համաձայն[29]՝ բանտարկյալների աշխատանքը չպետք է տառապանք պատճառի նրանց: Բոլոր դատապարտված բանտարկյալները պարտավոր են աշխատել բժշկի կողմից հաստատված մարմնական և հոգեկան ընդունակություններին համապատասխան: Բանտարկյալների համար ապահովվող աշխատանքը հնարավորության սահմաններում պետք է լինի այնպիսին, որ բարձրացնի նրանց որակավորումը կամ որակավորում տա նրանց, ինչը թույլ կտա ազատվելուց հետո զբաղվել ազնիվ աշխատանքով: Բանտարկյալները պետք է հնարավորություն ունենան աշխատել իրենց հայեցողությամբ, եթե դա համատեղելի է արհեստների կանոնավոր ընտրության, վարչության պահանջների և հիմնարկի կարգ ու կանոնի հետ: Կանոնների 76-րդ կետի համաձայն՝ իրենց աշխատանքի դիմաց, որոշակի համակարգի շրջանակներում բանտարկյալները պետք է արդարացի վարձատրություն ստանան:

[29]Հասանելի է Խմբիկայքի հետևյալ հղումովhttp://pmg.am/images/bantarkyalneri_het_varvecoxutyun.pdf

8. ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄՆԵՐԸ

Խմբի բնականոն և օրենքով սահմանված աշխատանքները առանձին դեպքերում խոչընդոտվել են քրեակատարողական ծառայության և համապատասխան ՔԿՀ-ների կողմից, որոնց հիմքերն ու բացառությունները իրավաչափ չեն եղել:

Այսպես, 2019թ. հուլիսի 9-ի թիվ 19-40 ընթացիկ հաշվետվությամբ, Խումբը ՀՀ արդարադատության նախարարությանը տեղեկացրել էր, որ ՀՀ ԱՆ <<Երևան-Կենտրոն>> ՔԿՀ կատարած այցելության ժամանակ Խմբի անդամների մուտքը ՔԿՀ ձգձգվել է, պատճառը հանդիսացել է այն, որ ՔԿՀ-ի մուտքն անցնում է ՀՀ ԱԱԾ-ի կենտրոնական մասնաշենքով և թույլտվությունը տրվում է ԱԱԾ-ի աշխատակիցների կողմից, բացի այդ իրենց մոտ առկա ցուցակում բացակայում էին խմբի փորձագետների անունները, որի պատճառով մուտքը ՔԿՀ ավելի է ձգձգվել՝ մինչև լրացուցիչ ճշտումներ են կատարվել:

Հաշվետվությանն ի պատասխան 09.08.2019թ. թիվ 07/12.0.01/17852-19 գրությամբ, նախարարությունից տեղեկացրել են, որ Խմբի անդամների և փորձագետների ցուցակի թարմացված տարբերակը պարբերաբար տրամադրվում է ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներին: Սակայն, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ժամանակին ցուցակ չտրամադրելու պատճառով դիտորդները հանդիպում են խոչընդոտների:

2019թ. նոյեմբերի 6-ի թիվ 19-70 ընթացիկ հաշվետվությամբ, Խումբը ՀՀ արդարադատության նախարարությանը տեղեկացրել էր, որ Խմբի անդամները 2019թ. նոյեմբերի 1-ին, ՀՀ ԱՆ <<Վարդաշեն>> ՔԿՀ կատարած այցելության ժամանակ ցանկացել են հանդիպել կալանավորված անձ Արսեն Բաբայանին: Սակայն քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները չեն թույլատրել հանդիպել նշված կալանավորված անձին՝ պատճառաբանելով, որ քննիչի կողմից առկա է արգելանք՝ նշված անձի հետ տեսակցությունների վերաբերյալ:

Հաշվետվությանն ի պատասխան 26.11.2019թ. թիվ 12.0.03/27558-19 գրությամբ, նախարարությունից տեղեկացրել են, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ տեսակցությունն արգելելու վերաբերյալ որոշման առկայության պայմաններում ազատությունից զրկված անձանց հետ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական

վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբին տեսակցություն չտրամադրելու հարցի շուրջ ՀՀ արդարադատության նախարարությունը բազմիցս ներկայացրել և ներկայումս վերահաստատում է իր դիրքորոշումը. <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված բացառությունները վերաբերելի են միայն փաստաբաններին, Մարդու իրավունքների պաշտպանին, Պաշտպանի ներկայացուցչին, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողին, կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանման պետական ծառայողներին և փորձագետներին, որոնց Պաշտպանի գրավոր որոշմամբ սահմանված կարգով և ծավալով վերապահվում են Պաշտպանի լիազորությունները: ՄԻևնույն ժամանակ, խնդրի առարկա հարցը ներկայացվել է ՀՀ քրեակատարողական նոր օրենսգիրքը մշակող աշխատանքային խմբի դիտարկմանը:

Նշվածի կապակցությամբ ցանկանում ենք կրկին տեղեկացնել, որ նախկինում Խմբի աշխատանքները այդ հիմքով չէին խոչընդոտում, խոչընդոտները սկսվել են 2016 թվականին՝ քաղաքական հնչեղություն ունեցող գործերով անցնող անձանց նկատմամբ, հետագայում տարածվել նաև մյուս անձանց վրա (մանրամասն տես Դիտորդների Խմբի 2016թ., 2017-2018թթ գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները[30]):

[30]Հասանելի է հետևյալ հղումով՝ http://pmg.am/hy/library/annual-reports

9. ԱՄՓՈՓՈՒՄ

Դիտորդների Խմբի տարեկան հաշվետվության մեջ ամփոփված տվյալները թույլ են տալիս փաստել ինչպես քրեակատարողական համակարգի դրական փոփոխությունները, այնպես էլ դեռևս առկա և հրատապ լուծում պահանջող խնդիրները:

Այսպես, Խումբը դրական է գնահատում սննդի մատակարարման հետ կապված փոփոխություններն ու ազատազրկված անձանց որակյալ և զանազանություն ապահովող սննդով ապահովելու գործընթացը: Մասնավոր անձի կողմից օրինական և կոռուպցիոն ռիսկերից զերծ ընթացակարգով ազատազրկված անձանց սննդով ապահովելը 2019 թվականի համակարգի կարևորագույն ձեռքբերումների է:

Դրական է գնահատվում նաև քրեական մշակույթի դեմ որդեգրված պայքարը, սակայն արդյունքի հասնելու համար օրենսդրական մակարդակում ձեռնարկված քայլերը պետք է զուգորդվեն պրակտիկ քայլերով՝ վերասոցիալականացման արդյունավետ ու համալիր միջոցառումների ներդնմամբ, աշխատակիցների սոցիալական երաշխիքները բարձրացնելով ու կարողությունները ուժեղացնելով, ինչպես նաև համակարգի ներսում ինքնին մտածողության փոփոխությամբ:

Սրան զուգահեռ, սակայն դեռևս առկա են խնդիրներ և մարտահրավերներ, որոնք ՀՀ ԱՆ-ից և ոլորտում ներգրավված պետական մարմիններից պահանջում են գործուն քայլեր: Խոսքը առաջին հերթին վերաբերում է ազատազրկված անձանց առողջության իրավունքի արդյունավետ ապահովմանն ու Քրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ի արդյունավետության բարձրացմանը:

Չնայած ձեռնարկված շինարարավերանորոգման աշխատանքներին, Խումբը դեռևս բավարար չի գնահատում ՔԿՀ-ների պահման պայմանները՝ ինչպես ազատազրկված անձանց, այնպես էլ ադմինիստրացիայի համար:

Ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանությունն ու համակարգում առողջ մթնոլորտի ձևավորումը պահանջում է նաև մահացության և ինքնավնասումների պրակտիկայի ուսումնասիրություն, պատճառների վեր հանում ու դեպքերի նվազմանն ուղղված գործուն քաղաքականություն:

Այս և վեր հանված այլ հարցերի լուծման համար ստորև ներկայացվում են համապատասխան առաջարկություններ:

10. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր առաջարկներ

- Քրեակատարողական համակարգում վերականգնողական արդարադատության կոնցեպտի ներդրման համար ուշադրություն դարձնել մարդկային ռեսուրսներին; քայլեր ձեռնարկել պատժողական մտածողության փոփոխության ուղղությամբ ՝ շարունակական վերապատրաստումների ու դասընթացների միջոցով, մշակել և կիրառել վերականգնողական նոր ծրագրեր ազատազրկված անձանց համար:
- Պատժի կրումից պայմանական ազատման վաղաժամկետ ազատման գործընթացում կիրառվող չափորոշիչները դարձնել առավել իրատեսական և ազատազրկված անձանց համար կանխատեսելի:
- Պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում դրվող չափորոշիչների ներքո միավորներ ստանալու համար քրեակատարողական հիմնարկներում կազմակերպել համալիր սոցիալ-վերականգնողական միջոցառումներ:
- Քրեական մշակույթի դեմ տարվող օրենսդրական պայքարը զուգորդել պրակտիկ քայլերով՝ կարիքների և ռիսկերի գնահատման գործիքակազմի զարգացմամբ և կիրառմամբ, ազատազրկվածների անհատական գնահատման իրականացմամբ, ՔԿՀ-ների կադրային քաղաքականության վերանայմամբ:[31]

Պահման պայմաններ

- Բոլոր ՔԿՀ-ները հարմարեցնել և պայմաններ ստեղծել հենաշարժողական խնդիրներ ունեցող ազատազրկված անձանց ազատ տեղաշարժի համար

[31] Խումբը այս հարցի առնչությամբ հանդես է եկել բազմաթիվ առաջարկներով ինչպես առանձին գրություններով, այնպես էլ տարեկան հաշվետվություններում

- Հենաշարժողական խնդիրներ ունեցող Ազատազրկված անձանց ՔԿՀ-ից մեքենայով տեղափոխելիս մեքենաներում ստեղծել համապատասխան պայմաններ
- Դատապարտյալների հիվանդանոց ՔԿՀ-ն ապահովել սարքին ռենտգեն սարքով
- Բոլոր ՔԿՀ-ներում պայմաններ ստեղծել ազատազրկված տեսակցության իրավունքի արժանապատիվ իրականացման համար, Երևան-Կենտրոն ՔԿՀ-ում առանձնացնել երկարատև տեսակցության պայմաններ
- ՀՀ ԱՆ Արմավիր ՔԿՀ օդափոխության համակարգի բացակայությանը տալ շուտափույթ լուծում
- ՀՀ ԱՆ Արմավիր ՔԿՀ բոլոր մասնաշենքերում ապահովել սանհանգույցներ աշխատողների համար
- Նուբարաշեն ՔԿՀ շահագործման ընթացքի համար իրականացնել 6-րդ մասնաշենքի կոյուղաջրերի նորոգումը
- Նուբարաշեն ՔԿՀ բոլոր մասնաշենքերում աշխատակիցների համար ապահովել արժանապատիվ սանհանգույցներով

Ինքնասպանություններ և ինքնավնասումներ

- Ապահովել աջակցություն տրամադրող բաժնի աշխատակիցների հոգեբանական և ֆիզիկական բարեկեցությունը՝ բարելավել աշխատանքային ֆիզիկական պայմանները՝ օրինակ, ընդմիջում ունենալու համար հարմարեցված պայմաններ և հնարավորություններ, հաճախակի կազմակերպվող նեղ մասնագիտական վերապատրաստումներ, որոնց իրականացման համար հաշվի առնել նաև մասնագետների կողմից առանձնացված հիմնախնդիրներն ու առաջարկները մասնագիտական այրումից խուսափելու համար՝ վերահսկող հանդիպումների կազմակերպում՝ թե՞ ըստ մասնագետի պահանջի, և թե՞ ըստ ընթացակարգի, վերանայել աշխատանքային երաշխիքները՝ առողջության ապահովագրություն, աշխատավարձ, աշխատաժամեր:
- Քրեակատարողական հիմնարկներում հոգեթերապեվտիկ աշխատանքները պատշաճ իրականացնելու համար բացակայում են

հոգեբանին անհրաժեշտ պայմանները, որոնք նպաստում են հոգեբանի ու այցելուի միջև փոխվստահելի ու ապահով միջավայր ստեղծելուն: Նման պայմաններից են հոգեբանի համար նախատեսված առանձնասենյակը, որտեղ հոգեբանը կիրականացնի հոգեթերապեվտիկ աշխատանքները, սենյակը պետք է կահավորված լինի անհրաժեշտ գույքով, գտնվի անաղմուկ վայրում, ապահով լինի և միևնույն ժամանակ սահմանափակի կողմնակի անձանց մուտք ու ելքը:

- Ապահովել մասնագիտական աշխատանքի կատարման պայմանները՝ հենվելով միջազգային փորձի վրա և մշակել համապատասխան ընթացակարգ՝ հենվելով մասնագիտական էթիկայի և մասնագիտական գործունեության առանձնահատկությունների վրա. թղթաբանության կազմակերպում, այցելուների/շահառուների ընդունման թվային սահմանափակումներ, հստակ սահմանել մասնագետի պարտականություններն ու գործողությունները հենվելով մասնագիտական էթիկայի վրա, օրինակ, բացառել հոգեբանի՝ դրական կամ բացասական եզրակացություն տալը. Հոգեբանը կարող է տալ մասնագիտական կարծիք՝ հենվելով միմիայն մասնագիտական էթիկայի և հնարավորությունների վրա:
- Սահմանել հոգեբանի դերը քրեակատարողական հիմնարկում և ընթացակարգային հստակ նկարագրություն ունենալ, թե որ դեպքում հոգեբանը կարող է գնալ խուց, որ դեպքում սոցիալական աշխատողը: Հոգեբանի պարագայում շեշտը դնել ճգնաժամային միջամտության վրա:
- Ավելացնել հոգեբանների քանակը՝ տվյալ հիմնարկում պահվող անձանց քանակին համապատասխան:
- Առանձնացնել ինքնավնասում կատարած անձանց վիճակագրական տվյալները՝ օրինակ՝ առանձնացնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ սոցիալ-դեմոգրաֆիկ գործոններ (տարիք, էթնիկ պատկանելիություն, կրթական մակարդակ, ամուսնական կարգավիճակ, ապրելու վայրի պայմաններ մինչ դատապարտվելը), կալանքի հետ կապված գործոններ (ազատազրկվելուց հետո սկզբնական շրջանը ավելի բարձր ռիսկայնություն ունի ինքնավնասումների համար), հոգեբանա-հոգեբուժական գործոններ, ինքնավնասման հետևանքով առաջացած ֆիզիկական հետևանքներ և այլն,

որոնք էլ իրենց հերթին հնարավորություն կտան առանձնացնել ինքնավնասման ռիսկային գործոնները և ունենալ ինքնավնասման հետ աշխատանքի հստակ մշակված ռազմավարություն բազմամասնագիտական թիմի կողմից:
Իրականացնել ինքնավնասում կատարած անձանց ռիսկի գնահատման գործիքների ադապտացում և մշակում, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա առանձնացնել ինքնավնասման դրդապատճառները, նպաստող գործոններն ու դրսևորման առանձնահատկությունները:

Սոցիալական վերաինտեգրում

- Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների համար պարբերաբար կազմակերպել վերապատրաստումներ ազատազրկված անձանց սոցիալական վերաինտեգրման հարցի շուրջ, զինել պրակտիկ հմտություններով ու կարողություններով:
- ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ներում ներդնել սոցիալական վերաինտեգրման կրթական ու զբաղվածություն ապահովող ծրագրեր՝ ներգրավելով հնարավորինս մեծ թվով ազատազրկված անձանց:
- ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ները ապահովել երկարատեւ տեսակցության սենյակներով
- Ձեռնարկել օրենսդրական և պրակտիկայի փոփոխություններ, որոնք հնարավորություն կտան ազատազրկվածին և նրա ընտանիքի անդամներին ու մերձավոր ազգականներին երկարատև տեսակցությունների ժամանակ գտնվել ՔԿՀ բացօթյա տարածքում և զբոսանքի համար նախատեսված վայրերում:
- Կարճատեւ մեկնումների իրավունքը դարձնել առավել կիրառելի:
- Քայլեր ձեռնարկել ազատազրկված անձանց տրված խրախուսանքները դատախազության կողմից վերացման պրակտիկան նվազեցնելու ուղղությամբ:

Խոցելի խմբեր[32]

- Զարգացնել և ընդլայնել անչափահաս ազատազրկված անձանց կրթության իրավունքի լիարժեք իրականացումն ու հնարավորությունները
- Պրակտիկայում քայլեր ձեռնարկել և խրախուսել կին ազատազրկվածների երկարատև տեսակցությունները, այդ նպատակով սոցիալ-իրավական բաժինների կողմից կայուն կապեր ստեղծել ընտանիքի ու ընկերների հետ
- Այստեղ կարելի է օրինակ բերել Վրաստանի փորձը, որ նույնիսկ մինչև որոշակի տարիքի մանկահասակ երեխաներ ունեցող կանայք շաբաթ-կիրակի օրերին վերադառնում են տուն
- ՔԿՀ-ներում գտնվող ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների համար հասանելի դարձնել կազմակերպվող բոլոր միջոցառումները՝ կրթական, զբաղվածության, մշակութային ու սպորտային
- Վերացնել ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների վերաբերյալ ազատազրկված անձանց և աշխատակիցների մոտ առկա կարծրատիպային մոտեցումները՝ պարբերական քննարկումների, զրույցների ու վերապատրաստումների կազմակերպման միջոցով

[32]Տես նաև 201-2018թվականների Խմբի տարեկան հաշվետվությունների համապատասխան բաժինների առաջարկությունները

11-1 Հավելված 1

Օրենսդրական և իրավակիրառական խնդիրներ

1. Քրեակատարողական հիմնարկի պետի գործողությունը և անգործությունը վարչական դատարանների կողմից քննելու վերաբերյալ.

ՀՀ Սահմանադրական դատարանը 22.01.2019թ. Թիվ ՍԴՈ-1439 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ <<...**մինչև Ազգային ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից**>>:

ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշումից հետո ընդհանուր իրավասության դատարանների կողմից քննվող բազմաթիվ գործեր կարճվեցին: Այդ գործերի քննության համար անհրաժեշտ էր հայցադիմում ներկայացնել վարչական դատարան: ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են դարձել այնպիսի գործեր ինչպիսիք են օրինակ՝ ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու, համաներման ակտի վերաբերյալ, բնութագրում փոփոխություններ կատարելու և քրեակատարողական հիմնարկի ցանկացած գործողության կամ անգործությանն առնչվող վեճերը, եթե քրեական դատավարության օրենսգրքով հատուկ նախատեսված չէ այդ գործի քննությունը ընդհանուր իրավասության դատարանի կողմիդ, նույնիսկ եթե անձը ստացել է կարգապահական տույժ՝ պատժախուց, այն նույնպես դարձել է վարչական դատարանի քննության ենթակա (Ընդհանուր իրավասության դատարանին ենթակա են մնացել են միայն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատ արձակման և **պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության հիմքով ազատման վերաբերյալ** գործերը):

ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշումից հետո գործնականում առաջացել են բազմաթիվ լուրջ խնդիրներ.

- Վարչական դատարանում գործի քննության ժամկետները կարող են տևել նաև տարիներ (եթե քրեական դատավարությամբ որոշ վեճերի

քննության համար սահմանված է օրինակ 10-օրյա ժամկետ, ապա վարչական դատավարությամբ նման ժամկետներ սահմանված չեն), չկան հատուկ ընթացակարգեր գործերի արագ քննության համար,

- Վարչական դատարանները ստիպված պետք է կատարեն քրեական օրենսդրության մեկնաբանություններ, այն էլ, երբեմն, այնպիսի, որը կարող է դառնալ նախադեպային և կարիք ունենա քրեական օրենսդրության բազմածավալ մեկնաբանության: Օրինակ՝ պայմանական վաղաժամկետ ազատ արձակման ժամկետի հաշվարկում՝ սկսված քրեական օրենսգրքով նախատեսված հոդվածի մեկնաբանությունից մինչև խստացնող օրենքի հետադարձ ուժի կիրառումը,
- Վարչական դատարան դիմելու համար պետք է ներկայացնել հայցադիմում՝ պահպանելով մի շարք ընթացակարգեր, այսինքն՝ դատապարտյալը պետք է տիրապետի վարչական դատարան հայց ներկայացնելու հմտություններին, այն դեպքում, երբ ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության համար հիմք էր հանդիսանում դատապարտյալի պարզ դիմումը կամ բողոքը: Այս հանգամանքը բարդացնում է իրավական պաշտպանության հնարավորությունը:
- Վարչական դատարան դիմելու համար անհրաժեշտ է վճարել պետ. տուրք, լավագույն դեպքում դատարանները կարող են հետաձգել պետ. տուրքի վճարումը, սակայն ամբողջովին կարող են ազատել միայն կոնկրետ դեպքերում, որոնք ոչ բոլոր դատապարտյալներին են վերաբերվում,
- Մյուս խնդիրը, որն ավելի շատ տեխնիկական է, կայանում է նրանում, որ վարչական դատարանները հարմարեցված չեն ազատազրկման մեջ գտնվող անձանց գործերը քննելու համար (չկան խցեր, դատարանի դահլիճները անվտանգության տեսակետից հարմարեցված չեն):

Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ ընդհանուր իրավասության դատարանների կողմից նման գործերի քննության ժամանակ նույնպես առկա են եղել

լուրջ խնդիրներ: Քանի որ նշված գործերը հանդիսացել են քրեաիրավական հարաբերություններից ծագող գործեր, ապա <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի դրույթները այդ իրավահարաբերությունների վրա չեն տարածվել, որի պատճառով կարգավորումից դուրս են մնացել այնպիսի հարցեր ինչպիսիք են՝

- Ապացուցման բեռի բաշխումը,
- Իրավական ակտի (օրինակ՝ որոշման) բովանդակության պահանջի բացակայությունը,
- Վարչարարության օրինականությունը կարգավորող նորմերը, այդ թվում անձի իրավունքների և պարտականությունների պարզաբանումը և նման այլ հարցեր,
- Գործողության/անգործության բողոքարկման կարգի պարզաբանման պարտավորության բացակայությունը:

Առաջարկություն.

Անհրաժեշտ է հնարավորինս շտապ նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ՝ գործերի արագ և արդյունավետ քննությունը ապահովելու համար՝ հաշվի առնելով վերոգրյալ նկատառումները:

2.Դատախազության կողմից խրախուսանքի միջոց կիրառելու վերաբերյալ որոշումների բողոքարկման հետ կապված խնդիրները.

ՀՀ ԱՆ 2020թ. փետրվարի 5-ի թիվ 07/12.0.03/2211-20 գրության համաձայն, 2019թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ կիրառվել է 2219 տույժ, նույն ժամանակահատվածում կիրառվել է ընդամենը 93 խրախուսանքի միջոց, որից 40-ի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից ներկայացվել է միջնորդություն՝ կասեցնելու և վերանայելու պահանջով: Արդյունքում 37 խրախուսանքի միջոց վերացվել է:

<<Դատախազության մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է դատախազական հսկողությունը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: Նույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն, իր լիազորություններն իրականացնելիս դատախազն իրավունք ունի ստուգելու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին: Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած մարմին կամ ակտը վերացնելու միջնորդագիր է ներկայացնում ակտն ընդունած մարմնի համապատասխան վերադաս մարմին կամ պաշտոնատար անձին, իսկ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը՝ նաև իրավասու հանրապետական գործադիր մարմնի ղեկավարին:

Հոդվածի բովանդակությունից հետևում է, որ դատախազությունը կարող է ստուգման ենթարկել իրավական ակտերի որոշակի շրջանակ, մասնավորապես նրանք, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին: Նույն կետով դատախազությանը իրավունք է վերապահվում միջնորդել և վերանայել իրավական ակտը, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները.

1) լրացուցիչ կարճատև կամ երկարատև տեսակցության տրամադրում, բայց տարվա ընթացքում երկու կարճատև կամ երկու երկարատև տեսակցությունից ոչ ավելի.

2) փակ տեսակի ուղղիչ հիմնարկում պահվող դատապարտյալի զբոսանքի տևողության ավելացում մինչև երկու ժամ՝ մեկ ամիս ժամկետով.

3) նախկինում նշանակված տույժի վաղաժամկետ հանում:

Տվյալ դեպքում, գտնում ենք, որ նույնիսկ տեսականորեն դժվար է պատկերացնել մի իրավիճակ, երբ խրախուսանքի միջոցը կարող է առաջացնել ծանր հետևանքներ, հետևաբար դատախազության կողմից խրախուսանքի միջոցների կասեցումը դիտում ենք ոչ իրավաչափ:

Մյուս կողմից, մեր գնահատմամբ քննարկման առարկա է այն հանգամանքը, թե արդյոք դատախազությունն իրավունք ունի վիճարկել խրախուսանքի միջոց կիրառելու վերաբերյալ որոշումը, թե ոչ: Հարցը քննարկելով կոնկրետ դեպքով, օրինակ՝ խրախուսանքի միջոց կիրառելու որոշումը, որով նախկինում նշանակված տույժը վաղաժամկետ հանվել է, ցանկանում ենք հարց բարձրացնել, արդյոք տվյալ դեպքում նշված իրավական ակտը վերաբերում է պատժի ենթարկված անձի հիմնական իրավունքներին (որը նախատեսված է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածով) կամ պատժի կրման օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին: Մեր գնահատմամբ այդ իրավական ակտը չի մտնում այն ակտերի շրջանակի մեջ, որոնք կարող են վիճարկվել դատախազության կողմից:

Մյուս կողմից գտնում ենք, որ նույնիսկ, եթե դատախազությունն ունի այդ իրավունքը, ապա տվյալ դեպքում օրենսդրորեն պետք է հստակեցվեն այն ժամկետները, երբ դատախազությունը կարող է ներկայացնել համապատասխան միջնորդությունը, պետք է հստակ սահմանվի այն անձի (տվյալ դեպքում կալանավորված անձի կամ դատապարտյալի) իրավունքների շրջանակը, որի վերաբերյալ որոշումը վիճարկում է դատախազությունը, որպեսզի վերջինս հնարավորություն ունենա դատախազության դիրքորոշման վերաբերյալ ներկայացնել իր փաստարկները:

Նշվածից բացի <<Դատախազության մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով դատախազությանը տրված լիազորությունները հակասում են <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի պահանջներին [33] և դատախազության գործունեությունը չի տեղավորվում նշված օրենքի շրջանակների մեջ:

Այս համատեքստում ցանկանում ենք նշել, որ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքն ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին, իսկ <<Դատախազության մասին>> ՀՀ օրենքը ընդունվել է ավելի ուշ՝ 2017 թվականի նոյեմբերի 17-ին:

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝

1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը.

2) ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը, սակայն եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, ապա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը.

3) ավելի վաղ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը.

4) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

Սույն հոդվածի տրամաբանությունից ելնելով, գտնում ենք, որ խրախուսանքի միջոց կիրառելու որոշումը վիճարկելու դեպքում չի կարող կիրառվել <<Դատախազության մասին>> ՀՀ օրենքը, այլ պետք է կիրառելի լինի <<Նորմատիվ

[33] ՀՀ Սահմանադրական դատարանը 22.01.2019թ. որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ <<…**մինչև Ազգային Ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից**>>: Հետևաբար նշված իրավահարաբերության նկատմամբ կիրառելի են <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի պահանջները:

իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի դրույթները (<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի հիմքով):

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

1. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Նույնիսկ, եթե ընդունենք, որ դատախազությունն իրավունք ունի վիճարկելու խրախուսանքի որոշումները, ապա միևնույն ժամանակ պետք է ապահովվեր դատապարտյալների ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով ամրագրված իրավունքները, որը տվյալ դեպքում չի արվել, նաև օրենսդրորեն նման ընթացակարգ նախատեսված չէ, ինչի արդյունքում ակնհայտորեն խախտվել են նշված անձանց սահմանադրական իրավունքները:

Առաջարկություն.

Նախատեսել հստակ օրենսդրական մեխանիզմներ դատախազության կողմից հիմնարկի որոշումների բողոքարկման համար՝ երաշխավորելով անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և այլ օրենքներով ամրագրված իրավունքների պահպանումը:

3. Դատապարտյալի բնութագրում մինչև դատապարտվելը ընկած ժամանակահատվածում ստացած տույժերի ներառումը.

ՀՀ արդարադատության նախարարի կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին 2016թ. հուլիսի 13-ի N 279-Ն հրամանի 32-րդ կետի 1-ին մասի համաձայն, դատապարտյալի հետ կատարված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները գրանցվում են «Կալանավորված անձի և դատապարտյալի անհատական քարտում», որից հետո կազմվում է դատապարտյալի ուղղման գործընթացի ծրագիր: 37-րդ կետի համաձայն

դատապարտյալը բնութագրվում է ըստ նպատակայնության և վարքի փոփոխման դինամիկայի: Բնութագիրը լրացվում է ըստ նպատակայնության՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման ներկայացնելու, ուղղիչ հիմնարկի տեսակը մեկուսացվածության առավել ցածր (բարձր) աստիճանի փոխելու, կարճաժամկետ մեկնում տրամադրելու, տեխնիկատնտեսական աշխատանքներում ընդգրկելու և այլ անհրաժեշտ նպատակներով, **դատապարտյալի դրսևորած վարքագծի և նրա հետ իրականացված ուղղման գործընթացի ծրագրի աշխատանքների արդյունքների հիման վրա**՝ հաշվի առնելով Հիմնարկի այլ ստորաբաժանումների կարծիքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն դատապարտյալ է կոչվում այն անձը, որի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատարանի դատավճիռ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն մեղադրական է:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

Նշվածից հետևում է, որ բնութագիրը պետք է հիմնվի բացառապես **դատապարտյալի** դրսևորված վարքագծի և նրա հետ իրականացված ուղղման գործընթացի ծրագրի աշխատանքների վրա, սկսված այն պահից, երբ նրա վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ:

Սակայն գործնականում խնդրահարույց է այն հարցը, որ շատ հաճախ քրեակատարողական հիմնարկների կողմից դատապարտյալներին տրված բնութագրերում ներառվում է նաև վերջիններիս՝ կալանքի ընթացքում գտնվելու ժամանակ ստացված տույժերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015
Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 12.2/23655
«21» 10 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ
ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՋԱԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ջալյան,

Ի պատասխան Ձեր՝ 2019 թվականի օգոստոսի 3-ի թիվ 20-45 գրության՝ կից ներկայացնում ենք ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի 2019 թվականի տարեկան հաշվետվության վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության մեկնաբանությունները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,

10/20/2020

X

Suren Galstyan

Signed by: GALSTYAN SUREN 1111911555

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Նանե Մելքոնյան
ՀՀ ԱՆ քրեական օրենսդրության, քրեակատարողական
և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչություն
Հեռ.՝ 59-39-43

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի (այսուհետ նաև՝ Խումբ) 2019 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) համալիր ուսումնասիրությունից հետևում է, որ Հաշվետվությամբ անդրադարձ է կատարվել քրեակատարողական համակարգի մի շարք ոլորտներին, մասնավորապես՝ կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմաններին, տրամադրվող բժշկական օգնությանն ու սպասարկմանը, կալանավորված անձանց և դատապարտյալների սննդի կազմակերպմանը և սննդի որակին, քրեակատարողական հիմնարկներում վերասոցիալականացման հնարավորություններին, «խտրականության» դրսևորումներին և այլն:

Ստորև ներկայացնում ենք Հաշվետվության մեջ ընդգրկված՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներին առնչվող դիտարկումների վերաբերյալ համապատասխան մեկնաբանությունները:

ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ

ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1717-L որոշմամբ (այսուհետ՝ Ռազմավարություն) քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավման և քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման շրջանակներում նախատեսվում է.

- **փակել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկները,** որի արդյունքում Երևան քաղաքի տարածքում կկառուցվի շուրջ **1200 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկ**: Նախաձեռնության իրականացման արդյունքում կկառուցվի միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր քրեակատարողական հիմնարկ՝ **ընդգրկելով նաև ստացիոնար հիվանդանոց:** Երևանի կենտրոնից (մամուլի շենքի հարևանությունից) կհանվի ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկը.
- **ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենքից տեղափոխել նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի մասնաշենք[1].**
- **ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկը լուծարել և ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի վարչական տարածքում կառուցել ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի համար սահմանված լրակազմով՝ փակ, կիսափակ ռեժիմների և կալանավորվածների պահելու վայր, այդ թվում՝ կալանք պատժատեսակի համար նախատեսված մասնաշենք.**
- **ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ապահովել կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար անհրաժեշտ պայմաններ, որոնք կհամապատասխանեն միջազգային չափանիշներին, և կառուցել օդափոխության համակարգ:**

ՀՀ կառավարությունը քաջ գիտակցում է, որ օրինակ՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում առկա չեն բավարար պայմաններ ազատությունից զրկված անձանց պահման համար: Զուգահեռ, ՀՀ կառավարությունը նաև արձանագրում է, որ վերոգրյալ փոփոխություններն ամբողջությամբ հնարավոր չէ իրագործել մեկ տարում: Ըստ այդմ՝ ռազմավարական այս ուղղությունները կկենսագործվեն մինչև 2023 թվականը: Հենց այդ հանգամանքով էլ պայմանավորված՝ ՀՀ կառավարությունը տրամադրում է որոշակի ֆինանսական միջոցներ հատկապես ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում բավարար պայմանների ապահովման համար:

---

[1] Խմբի կողմից արձանագրվել էր նշված հիմնարկի սահմանափակ պայմանների հետևանքով երկարատև սենյակցությունների սենյակների բացակայության հանգամանքը: Հատկանշական է, որ ռազմավարական նշված միջոցառման արդյունքում բարձրացված խնդիրն ամբողջովին կլուծվի: Այդուհանդերձ, հարկ է փաստել, որ սենյակի բացակայությունը չի հանգեցնում ազատությունից զրկված անձանց իրավունքների սահմանափակմանը: **ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում գտնվող ազատությունից զրկված անձանց երկարատև տեսակցությունն առանց որևէ խոչընդոտի ապահովվում է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում:**

Մինչ ռազմավարական նշված միջոցառումների լիարժեք իրականացումը, հատկացված բյուջեի շրջանակներում քրեակատարողական հիմնարկներում իրականացվել են վերանորոգման և հարդարման աշխատանքներ: Այսպես.

- **ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ**

  Բուժական մասնաշենք

  Բուժմասի 16 հիվանդասենյակների համար պատրաստվել և տեղադրվել են ճաղավանդակներ, իսկ միջանցքներում՝ տարանջատող մեկուսիչ ճաղավանդակներ: 4 սենյակներում իրականացվել է կոտրված ապակեփաթեթների փոխարինում, 2 խցում տեղադրվել են մեկական նոր պատուհաններ:

  Իրականացվել է բուժական կետի աշխատասենյակների համար նախատեսված սանհանգույցի վերանորոգում: Մեկ աշխատասենյակի համար անցկացվել է տաք ջրամատակարարման նոր ջրագիծ: Վերանորոգվել է 5 սենյակների ջեռուցման համակարգը:

  Ռեժիմային գոտի

  Իրականացվել է 24 սանհանգույցների վերանորոգում, որից 7-ն իրականացվել է խցերի ընդհանուր հարդարումով (կոյուղու խողովակներ, լվացարաններ, ասիական զուգարանակոնքեր, ծորակներ, ցնցուղներ և այլն):

  Փոխարինվել են 4 խցերի ապակե փաթեթները:

  Իրականացվել է քրեակատարողական հիմնարկի սպասասրահի սանհանգույցի կապիտալ վերանորոգում, ինչպես նաև վարչական մասնաշենքի կանանց և տղամարդկանց մեկական սանհանգույցների վերանորոգում:

  Վերանորոգվել է հիմնարկի արտաքին ջրամատակարման ցանցը՝ շուրջ 125 գծամետր:

  Բացի այդ, քրեակատարողական ծառայողների (աշխատակիցների) համար հիմնարկի 2-րդ մասնաշենքն արդեն իսկ ապահովված է սանհանգույցով:

- **ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում**

  Իրականացվել է ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի մասնակի վերանորոգում, ինչպես նաև 3 աշխատասենյակների հարդարման աշխատանքեր:

- **ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում**

  Իրականացվել են հիմնարկի պահպանությունն իրականացնող ստորաբաժանման մասնաշենքի ամբողջական վերանորոգում, ներքին և արտաքին ջրամատակարարման, ջրահեռացման ցանցի վերանորոգում, ինչպես նաև ասֆալտապատման աշխատանքներ՝ հիմնարկի տարածքում՝ շուրջ 1236 քառակուսի մետր:

- **ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում**
  Իրականացվել է ռեժիմային գոտու 6 սանհանգույցների վերանորոգում:
  Իրականացվել է նաև ներքին և արտաքին ջրահեռացման ցանցի մասնակի վերանորոգում:
  Մասնակի վերանորոգվել է ներքին ջրամատակարարման ցանցը:
- **ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում**
  Ռեժիմային գոտում վարակակիրների սենյակի սանհանգույցում տեղադրվել է ջրատաքացուցիչ:
  Փոխարինվել են հիմնարկի ինֆեկցիոն և թերապևտիկ բաժանմունքներում լվացարանները և ծորակները:

<u>Ներկայումս իրականացվում են.</u>

- **ՀՀ ԱՆ «Հրազդան»** քրեակատարողական հիմնարկում իրականացվում է ռեժիմային գոտում 3 սանհանգույցների վերանորոգում, ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի մասնակի վերանորոգում:
- **ՀՀ ԱՆ «Կոշ»** քրեակատարողական հիմնարկում ընթացքի մեջ են արտաքին տարածքի ասֆալտապատման աշխատանքները:
- **ՀՀ ԱՆ «Նուբարաշեն»** քրեակատարողական հիմնարկի մեկուսարանի մասնաշենքի 27 խցերում իրականացվում են սանհանգույցների և լոգասենյակների վերանորոգման աշխատանքներ, ներքին ջրամատակարարման ցանցի վնասված խողովակների վերանորոգում:
- **ՀՀ ԱՆ «Վանաձոր»** քրեակատարողական հիմնարկում իրականացվում են 3 լոգասենյակների վերանորոգում:
- **ՀՀ ԱՆ «Գորիս»** քրեակատարողական հիմնարկում իրականացվում է ճաշարանի մասնաշենքի ամբողջական վերանորոգում, ռեժիմային գոտում 6 սանհանգույցների և 3 աշխատասենյակների վերանորոգման աշխատանքներ:

Անդրադարձ կատարելով նաև Խմբի կողմից մատնանշված մասնավոր դեպքերին՝ հարկ է արձանագրել հետևյալը.

- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով՝ դեռևս 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1391-Ն որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված ֆինանսական միջոցներով կազմակերպված գնման ընթացակարգերի արդյունքում **2020 թվականին բոլոր քրեակատարողական հիմնարկներում տեղադրվել և արդեն իսկ շահագործվում են նորագույն սերնդի անվտանգության «Rapiscan ORION 920CX»**

ռենտգեն սարքեր և «SECUPLUS» մակնիշի անցումային մետաղի դետեկտորներ: Հիմնարկում անազատության մեջ պահվող անձանց փոխանցվող հանձնուքների (սնունդ, իրեր, առարկաներ) ստուգումն իրականացվում է «Rapiscan ORION 920CX» սարքի միջոցով, որը ցուցադրում է ստուգվող իրերի և առարկաների բաղադրությունը: **Հարկ է փաստել նաև, որ վերոնշյալ սարքավորումների ներդրումից առաջ պրակտիկ խնդիրներ էին առաջացել.** անազատության մեջ պահվող անձանց փոխանցվող հանձնուքների մեջ արգելված իրերի կամ առարկաների առկայության վերաբերյալ կամ հիմնավոր կասկածի (օրինակ՝ օպերատիվ տեղեկությունների, սարքի տեխնիկական հնարավորությունների անբավարարության և այլն) բացակայության դեպքում կրկին զննելը արդարացված չէր ու կրում էր ձևական բնույթ:

Ըստ այդմ, 2020 թվականի հունիսի 4-ին N 882-Ն որոշմամբ ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշումը (սույն գլխում այսուհետ՝ Որոշում): Որոշման արդյունքում կալանավորված անձանց, դատապարտյալների և վերջիններիս մոտ հանձնուքներ, ծանրոցներ և անձնական իրեր բերող անձանց համար ստեղծվել են իրենց իրավունքի իրացման համար ավելի բարենպաստ պայմաններ, քրեակատարողական հիմնարկներում բացառվել են արհեստական հերթեր առաջանալու ռիսկերը, իսկ քրեակատարողական ծառայողները ազատվել են ձևական բնույթի գործողություններ կատարելու ավելորդ ծանրաբեռնվածությունից:

- Ազատությունից զրկված անձանց հարմարեցված տրանսպորտային միջոցներով տեղափոխման հարցի առնչությամբ հարկ է փաստել, որ նման տեխնիկայի ձեռքբերման հարցը հնարավոր է քննարկել հավելյալ ֆինանսական միջոցների հատկացման պարագայում, որը COVID-19 համավարակի պատճառով առաջացած տնտեսական իրադրության պայմաններում ներկայումս օբյեկտիվորեն հնարավոր չէ: Բացի այդ, խնդրում ենք ընդունել ի գիտություն, որ **ներկայումս քննարկման փուլում է գտնվում ազատությունից զրկված անձանց ուղեկցումների կազմակերպման առկա մոդելի փոփոխման հարցը, որի շրջանակներում քննարկման առարկա է դարձվել նաև ազատությունից զրկված անձանց ուղեկցման համար անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսների բաշխման հարցը:**
- Անդրադարձ կատարելով ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի **օդափոխության** հարցին՝ հարկ է նկատել, որ այն գտնվում է ՀՀ արդարադատության նախարարության դիտակետում: Հաշվի առնելով նշված հարցի կարևորությունը՝ Ռազմավարության առանձին

կետով, այն է՝ 11-րդ կետի 6-րդ ենթակետի շրջանակներում նախատեսվել է ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկն ապահովել օդափոխության համակարգով:
Այս համատեքստում հարկ է փաստել, որ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի (սույն գլխում այսուհետ՝ Հիմնարկ) կառուցման սկզբնական նախագծահաշվային փաստաթղթերի համաձայն՝ Հիմնարկը պետք է ունենար ջեռուցմամբ, հովացմամբ և օդափոխությամբ համատեղված ընդհանուր օդորակման համակարգ: Սակայն ելնելով ֆինանսական միջոցների սղությունից՝ Հիմնարկի նախահաշվից պակասեցվել էր օդորակման համակարգը, և 2015 թվականին Հիմնարկը շահագործման հանձնվեց առանց օդորակման համակարգի, որը ներկայումս մեծ բարդություններ է առաջացնում հիմնարկի բնականոն աշխատանքային և կենցաղային սպասարկման ոլորտում, քանի որ շատ սենյակներում լուսամուտները բացակայում են: Հիմնարկի աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ տվյալ տարածաշրջանը գտնվում է ջերմային բարձր գոտում և բարձր ջերմային եղանակներն ավելի երկար են տևում, իսկ օդափոխության համակարգի բացակայությունը ավելի է բարդացնում թե՛ դատապարտյալների կեցության, թե՛ աշխատակիցների աշխատանքային պայմանները: Ուստի, հաշվի առնելով նաև եղանակային պայմանները՝ ներկայումս օրհասական խնդիր է «Արմավիր» ՔԿՀ-ի՝ ջեռուցման հետ համատեղված օդափոխության համակարգի ներդրման հարցը:
Ի կատարումն Ռազմավարության վերը նշված կետի պահանջի՝ **ՀՀ արդարադատության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել** «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությանը գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման **նախագիծը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությանը հատկացնել 489 496 752 ՀՀ դրամ:**

Վերոգրյալի համատեքստում հարկ է փաստել, որ արդեն իսկ իրականացվել են նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմման աշխատանքներ:

- Ինչ վերաբերում է ազատությունից զրկված անձանց **լոգանքի** հարցին, հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի (այսուհետ նաև՝ Կանոնակարգ) 36-րդ կետի համաձայն. «Յուրաքանչյուր կալանավորված անձ կամ դատապարտյալ պատասխանատու է իր բնակելի խցի կամ կացարանի մաքրության պահպանման համար: Նա պետք է մաքուր և առանձնացված պահի իրեն հատկացված հիգիենայի անհրաժեշտ պարագաները, հագուստն ու կենցաղային իրերը, լոգանք կամ ցնցուղ պետք է ընդունի կլիմային համապատասխան ջերմաստիճանի պայմաններում՝ **[առնվազն յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, իսկ հնարավորության դեպքում՝ ավելի հաճախակի, եթե դա անհրաժեշտ է ընդհանուր հիգիենայի պահպանման համար],** հետևի իրեն, ունենա կոկիկ արտաքին տեսք և մաքուր քնելատեղ»: Միաժամանակ, Կանոնակարգի 47-րդ կետի համաձայն. «Կալանավորված անձի կամ դատապարտյալի՝ յուրաքանչյուր շաբաթ առնվազն մեկ անգամ ցնցուղով լոգանք ընդունելու տևողությունը պետք է կազմի առնվազն 15 րոպե»: **Նշված կետում ամրագրված «առնվազն» բառը նախատեսում է լոգանքի նվազագույն քանակը, այսինքն՝ հնարավորության դեպքում կալանավորված անձինք կամ դատապարտյալները կարող են օգտվել նաև մեկից ավելի լոգանքից:**

ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ

2020 թվականի հունիսի 1-ից սկսված ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց սննդի տրամադրման գործընթացն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից: Պատրաստի սննդից օգտված շահառուների թվաքանակը կազմել է 100%, որն ինքնին հանգեցրել է փոխանցվող հանձնուքների թվի նվազմանը, ինչի արդյունքում թեթևացել է նաև անազատության մեջ պահվող անձանց հարազատների հոգսը:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի ապահովման գործառույթը մասնավոր կազմակերպություններին պատվիրակելու հաշվին հնարավոր է լինելու էականորեն բարձրացնել պետության կողմից մատուցվող ծառայությունների որակը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին, ինչպես նաև կատարել ևս մեկ քայլ ազատությունից զրկված անձանց շրջանում խտրականությունը բացառելու ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, ազատությունից զրկված անձանց շրջանում վերջին տարիների ընթացքում առավել տարածված սիրտ-անոթային, աղեստամոքսային տրակտի, շաքարային դիաբետի, խրոնիկական հեպատիտների, լյարդի ցիռոզի հիվանդությունների բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակված **միջինացված դիետիկ սննդակարգերը ներառվել են ազատությունից զրկված անձանց ճաշացանկերում**:

Հարկ է նշել, որ **դիետիկ սննդակարգերն ազատությունից զրկված անձանց ճաշացանկերում ընդգրկելու արդյունքում ներկայումս շուրջ 60 անձ օգտվում է այդպիսի սննդակարգերից:**

Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ **Խմբի կողմից դրական է գնահատվել 2019 թվականին նախաձեռնված սննդի ոլորտի փոփոխությունները:**

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Ինչպես բազմիցս նշվել է, կարևորելով բանտային բժշկության ոլորտում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 19-ի նիստի N 2 արձանագրային որոշմամբ հաստատվել է «ՀՀ քրեակատարողական հիմնարկներում բժշկական ծառայությունների արդիականացման» հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ):

Հայեցակարգի մշակման համար հիմք են եղել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները, ԽԿԿ հանձնարարականները, Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցները և որոշումները, Խմբի հաշվետվությունները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների դիրքորոշումները:

Այս համատեքստում հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքների երաշխավորման խնդրի արդյունավետ լուծումը մեծապես կախված է նաև քրեակատարողական առողջապահության առկա համակարգի ինստիտուցիոնալ արդյունավետության ապահովումից:

Ըստ այդմ՝ Հայեցակարգով նախատեսվել են քրեակատարողական առողջապահության ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխման հայեցակարգային լուծումներ, որոնք ուղղված են՝

1) բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող անձնակազմի մասնագիտական անկախության ապահովմանը,

2) բուժանձնակազմի հանդեպ ազատությունից զրկված անձանց վստահության ամրապնդմանը,

3) քրեակատարողական համակարգ որակյալ բուժաշխատողների ներգրավմանը,

4) բժշկական անձնակազմի անհրաժեշտ որակավորման ապահովմանը և հանրային առողջապահական համակարգին ինտեգրելու արդյունավետ հնարավորությունների ստեղծմանը:

Ստորև՝ հայեցակարգի հիման վրա արձանագրված քայլերը՝ ըստ ոլորտների:

❖ **ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

Հայեցակարգով առաջարկվող մոտեցումներին համահունչ՝ ՀՀ կառավարությունը 2018 թվականի մարտի 1-ին ընդունեց «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ N 204-Ն որոշումը, որով, ըստ էության, մեկնարկեց քրեակատարողական բուժօգնության ծառայության՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ենթակայությունից տարանջատման և ՀՀ արդարադատության նախարարության ենթակայության հանձնման, դրանց՝ ՀՀ առողջապահական ընդհանուր համակարգին ինտեգրման գործընթացը: Նշված որոշման ուժով **հիմնադրման միջոցով ստեղծվել է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (սույն գլխում այսուհետ՝ ՊՈԱԿ): ՊՈԱԿ-ի գործունեությունն արդեն իսկ իրողություն է:**

Ըստ այդմ՝ մասնագիտացված ՊՈԱԿ-ի ստեղծման առավելություններն են՝

1) մասնագիտական անկախության ապահովումը,

2) հանրային առողջապահական համակարգին ինտեգրվելու հնարավորության ստեղծումը,

3) որակյալ բուժանձնակազմ ներգրավելու հնարավորության ստեղծումը:

Հարկ է նշել, որ արդեն իսկ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կարգավորվել են կալանավորված անձանց և դատապարտյալներին բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ լիցենզավորման պահանջները, ինչպես նաև տեխնիկական և

մասնագիտական որակավորման պահանջները: Ըստ այդմ՝ քրեակատարողական ոլորտի համար մշակված բուժօգնության և սպասարկմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջներին և պայմաններին համապատասխան՝ **ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող՝ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող միավորները լիցենզավորվել են**, որպիսի պահանջ նախկինում առկա չի եղել:

Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անկախությունից ի վեր կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումն էական բարեփոխումների չէր ենթարկվել, ինչը բերել էր նրանց՝ ոչ լիարժեք, ոչ բավարար ծավալների բժշկական օգնության և սպասարկման տրամադրմանը, **վերանայվել և ամբողջությամբ նոր խմբագրությամբ հաստատվել է կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնությունը և սպասարկումը կանոնակարգող մայր փաստաթուղթը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշումը:**

❖ **ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ**

Անդրադառնալով բժշկական անձնակազմի կադրային հագեցվածությանը՝ հարկ է փաստել, որ ՊՈԱԿ-ի հաստիքացուցակով նախատեսված 171 հաստիքները գրեթե ամբողջությամբ համալրված են:

Բացի այդ, մշակվել և 2020 թվականի մարտի 12-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության N 294-Ն որոշումը, **ինչի արդյունքում ՊՈԱԿ-ի աշխատակիցների սոցիալական երաշխիքները վերականգնելու, աշխատանքային արդյունավետությունը և գրավչությունը բարձրացնելու, ինչպես նաև կադրերի արտահոսքը կանխելու նպատակով վերջիններս ընդգրկվել են սոցիալական փաթեթի շահառուների ցանկում:**

ՊՈԱԿ-ի ստեղծումը և դրա գործարկումը ազատությունից զրկված անձանց տրամադրվող բժշկական օգնությունն ու սպասարկումը տեղափոխել է որակական նոր փուլ:

ՀՀ կառավարությունը ռազմավարական միջոցառումների շրջանակում ընդգծում է, որ պետք է շարունակել քայլեր ձեռնարկել՝ ամրապնդելու այս ոլորտում արդեն իսկ ձեռք բերված հաջողությունները և կատարելագործելու ազատությունից զրկված անձանց տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակը: Ձեռնարկվող քայլերը հնարավորություն կտան

կարճաժամկետ և երկարաժամկետ պլանում լուծելու ոլորտում տարիներ շարունակ կուտակված խնդիրները:

ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությանը համահունչ ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվում է «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագիրը (սույն գլխում այսուհետ՝ Ծրագիր):

2019 թվականի նոյեմբերից մեկնարկած Ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ առանցքային քայլերը.

- **«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարողությունների զարգացում**, առողջապահական ծառայությունների մասնագիտացված բժշկական կարիքների գնահատում և **սարքավորումների ձեռքբերում**.
- «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ում բժշկական փաստաթղթերը թվայնացված եղանակով պահպանելու համար **էլեկտրոնային կառավարման համակարգի** (e-health) մշակում, փորձարկում և ներդրում.
- **Հեռաբժշկության** մշակում և առողջապահական ծառայություն ներդրում.
- **Ազատությունից զրկված անձանց հոգեկան առողջության** գնահատման համար անհրաժեշտ գործիքակազմի մշակում, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկ նոր ընդունված ազատությունից զրկված անձանց մոտ **առաջին մուտքի ժամանակ հոգեկան առողջության խնդիրների բացահայտման** հստակ պայմանների և գործընթացն ապահովելու նպատակով ստուգման գործիքակազմի և կարգավորումների մշակում.
- **Ինքնասպանությունների, ինքնավնասումների** կանխման, ճգնաժամի դեպքում միջամտության գործողությունների ծրագրի և գործիքակազմի մշակում.
- **Վերապատրաստումների իրականացում**, այդ թվում՝ Ստամբուլյան արձանագրության հիման վրա հաստատված **խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեպքերի բժշկական արձանագրության ձևի և դրա լրացման ուղեցույցի վերաբերյալ:**

ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՄԱՀՎԱՆ ԵՎ ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Քրեակատարողական հիմնարկներում կատարված ինքնավնասման յուրաքանչյուր դեպքով կազմվել են նյութեր, անցկացվել է հետաքննություն, ինչպես նաև իրականացվել են սոցիալ-հոգեբանական բնույթի աշխատանքներ, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկների հոգեբանների կողմից կատարվել են հոգեբանական աշխատանքներ, որի արդյունքում կազմվել են հոգեբանական եզրակացություններ ինքնավնասման հնարավոր դրդապատճառների և վարքի հետագա կանխատեսումների վերաբերյալ, ինչպես նաև իրականացվել են համապատասխան աշխատանքներ՝ հետագայում անձի կողմից ինքնավնասման փորձերը կանխելու ուղղությամբ:

Հարկ է փաստել, որ ՀՀ արդարադատության նախարարության համար թեկուզև ինքնասպանության կամ ինքնավնասման մեկ դեպքը մտահոգությունների տեղիք է տալիս: Ուստի, այս հարցը գտնվում է նախարարության հոգածության ներքո:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի (սույն գլխում այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2020-2023 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2020-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագծերի փաթեթը (սույն գլխում այսուհետ՝ Փաթեթ), որի ընդունմամբ անհրաժեշտություն կառաջանա Կարգը ամբողջությամբ վերանայելու՝ այդպիսով այն համապատասխանեցնելով առաջարկվող իրավակարգավորումներին և միջազգային չափանիշներին:

Հատկանշական է, որ Փաթեթը և Կարգը դիտարկվել են Ծրագրի շրջանակներում ընդգրկված միջազգային և ներպետական փորձագետների կողմից:

Հարկ է նկատել, որ Փաթեթը և Կարգը գտնվում են օրգանական կապի մեջ՝ հատկապես հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների դեմ պայքարում Փաթեթով նոր

մեխանիզմների և ընթացակարգերի ներդրման հանգամանքը, որը ուղղակիորեն ենթադրում է Կարգում փոփոխությունների կատարման անհրաժեշտություն:

Փաթեթի վերաբերյալ շահագրգիռ բոլոր մարմինների կարծիքներն ստանալուց և Փաթեթի վերջնական տարբերակի վերաբերյալ միջազգային փորձագետի եզրակացությունը կրկին քննարկելուց հետո հնարավոր կլինի Կարգի վերանայման նախագիծը բերել վերջնական տեսքի և շրջանառել:

Ծրագրի շրջանակներում **գնահատվել է նաև ազատությունից զրկված անձանց հոգեկան առողջական վիճակի գնահատման առումով գործնական առկա միջոցները և ներկայացվել հնարավոր այն լուծումները, որոնք կօգնեն քրեակատարողական հիմնարկ առաջին մուտքի ժամանակ գնահատել անձի կողմից ինքնավնասման կամ ինքնասպանության ռիսկի աստիճանը**՝ ըստ այդմ ստեղծելով անհրաժեշտ նախադրյալներ տվյալ անձի հետ թիրախավորված աշխատանքներ տանելու ուղղությամբ:

Ծրագրի շրջանակներում **նախատեսվում է մշակել համապատասխան գործիք, որի միջոցով կարանտինում գտնվելու ընթացքում իրավասու անձը կգնահատի ազատությունից զրկված անձի հոգեկան առողջական վիճակը, վեր կհանի ինքնավնասման և ինքնասպանության ռիսկերը:**

Ինչ վերաբերում է հոգեբանների հաստիքների համալրմանը, հարկ է փաստել, որ խնդրո առարկան ՀՀ արդարադատության նախարարության թիրախային հարցերից մեկն է: Նշվածի մասին է վկայում Ռազմավարության 42-րդ կետը, որով սահմանված միջոցառման շրջանակներում նախատեսվում է վերանայել քրեակատարողական հիմնարկներում հոգեբանների հաստիքները՝ հնարավորինս համապատասխանեցնելով այնտեղ պահվող ազատությունից զրկված անձանց լրակազմին, ինչպես նաև անհրաժեշտ հոգեբանական աջակցության ծավալին՝ նախապես գնահատելով մատուցվող ծառայությունների կարիքները:

Քրեակատարողական համակարգի թափուր հաստիքների համալրման հարցը լուծելու նպատակով թափուր հաստիքների, այդ թվում՝ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումների թափուր հաստիքային միավորների (հոգեբանների) համալրման նպատակով պարբերաբար հայտարարություններ են հրապարակվում զանգվածային լրատվամիջոցներով, ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական www.moj.am[2] և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պաշտոնական www.penitentiary.am կայքէջերում[3], ինչպես նաև կապ է հաստատվում

[2]Տե՛ս http://moj.am/article/2613?fbclid=IwAR1r4RcxS8oUB7ZKj-uVi4hoprpUo4gmo1bG4Z2I9IQ_4A6oIIIyO3PGcpY

[3]Տե՛ս http://penitentiary.am/news/%C2%AB%D4%B1%D6%80%D5%B4%D5%A1%D5%BE%D5%AB%D6%80%C2%BB-%D5%94%D4%BF%D5%80-%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D5%BC%D5%AF%D5%A1-%D5%A5%D5%B6-%D5%B0%D5%B8%D5%A3%D5%A5%D5%A2%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A9%D5%A1%D6%83%D5%B8%D6%82%D6%80-%D5%B0%D5%A1%D5%BD%D5%BF%D5%AB%D6%84%D5%B6%D5%A5%D6%80

բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Միաժամանակ, ներկայումս դիտարկվում է քրեակատարողական համակարգում հոգեբանական աշխատանքի գրավչությունն ապահովելու նպատակով թափուր հաստիքները համալրելու հնարավոր դիմողների համար խրախուսական այլ կառուցակարգերի ներդրման հնարավորության հարցը:

Հընթացս քրեակատարողական ծառայողներին ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխատեսման առնչությամբ համապատասխան հմտություններ փոխանցելու նպատակով «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը **քրեակատարողական ծառայողների 2020 թվականի վերապատրաստումների ծրագրերում ներառել է «Կյանքի իրավունք» թեմայով դասընթաց:**

ՎԵՐԱՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց զբաղվածության ապահովման, ազատ ժամանակի արդյունավետ օգտագործման վերասոցիալականացման համար մշտապես ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ:

2019 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող 617 անձ ընդգրկվել են տարբեր բնույթի աշխատանքներում, մասնավորապես՝ աշխատանքներ կատարելու համար դատապարտյալներն ընդգրկվել են քրեակատարողական հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման վարձատրվող և չվարձատրվող աշխատանքներում, պայմանագրային հիմունքներով աշխատել են «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամում, ընդգրկվել են ինքնագործ միավորումներում, ինչպես նաև բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալներն աշխատել են հիմնարկի սահմաններից դուրս այլ գործատուի մոտ:

Հ/Հ	Աշխատանքային գործունեություն	2019թ.
1.	«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներ	91
2.	Տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներ	144
3.	այլ գործատուների մոտ աշխատող դատապարտյալներ	27
	Ընդամենը վճարովի աշխատող	262
4.	Իրենց համաձայնությամբ ոչ վճարովի աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներ	175

5.	ինքնագործ միավորումներում ընդգրկված դատ.	180
6.	**Ընդհանուր զբաղվածություն**	**617**

Հաշվետու ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվել են ընդհանուր առմամբ 192 տարաբնույթ միջոցառումներ, որից՝ մարզական 132 միջոցառումներ (մասնակցել է 1446 անձ), լուսավորչական 17 միջոցառում (մասնակցել է 453 անձ), մշակութային 43 միջոցառում (մասնակցել են 908 անձ):

Կալանավորված անձանց և դատապարտյալների հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով Հայ Առաքելական եկեղեցու կողմից պարբերաբար կատարվել են այցելություններ, մկրտություններ, պատարագներ, տոնական օրերին՝ տոնակատարություններ:

Անցկացվել է ընդհանուր առմամբ 155 կրոնական միջոցառում, որին մասնակցել են 1496 անձ:

Պատժի կրումից ազատ արձակված դատապարտյալների վերինտեգրումը դեպի հասարակություն ապահովելու ուղղությամբ, մինչև վերջիններիս ազատ արձակվելն, իրականացվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- հարցում է ուղարկվում տարածքային ոստիկանություն,
- ազատվող դատապարտյալի վերաբերյալ տվյալները վերջինիս համաձայնությամբ ուղարկվում է «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն, ազատվելուց հետո աշխատանքի տեղավորման հարցում աջակցելու համար,
- կազմակերպվում են մասնագիտական դասընթացներ՝ դատապարտյալներին որոշ մասնագիտական հմտություններ ուսուցանելու համար:

Դատապարտյալների շրջանում ֆիզկուլտուրայի ու սպորտի զարգացման, առողջ ապրելակերպի դրսևորման, ինչպես նաև զբաղվածության, անձնական, մշակութային, կրթական զարգացման պատշաճ պայմանների ապահովման համար տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ կազմակերպվել են հետևյալ միջոցառումները՝

1. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի և Աբովյանի քաղաքապետարանի հետ համատեղ նախաձեռնել էր դատապարտյալ կանանց մասնակցությամբ զանգվածային մարզական միջոցառում կազմված յոթ մարզաձևից՝ վազք, շաշկի, հեռացատկ, բազկամարտ, սեղանի թենիս, տեգախաղ (դարթս) և վոլեյբոլ:

2. Համերգային ծրագրով ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ են այցելել «Կոմիտասի անվան ազգային քառյակ» ՊՈԱԿ-ը, «Տարոն» գեղագիտական կենտրոնի սաները, «Գեղարվեստական դաստիարակության և մշակույթի մանկապատանեական

կենտրոն» ՊՈԱԿ-ի «Նուբար», «Սասնա ծռեր», «Տոնիկա» անսամբլների, «Թաթուլ Ալթունյանի» երգի-պարի համույթի, «Երևանի էստրադային և ջազային արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի, «Փարվանա» համույթի ներկայացուցիչները:

3. ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից բեմադրվել է «Ժամանակի վարագույր» մենաներկայացումը, «Կ.Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնի» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է «Ձեզ եմ դիմում» ներկայացումը, «Կամերային թատրոն»-ի կողմից ցուցադրվել է «Անկոչ հյուրը» ներկայացումը, «Հովհաննես Թումանյան» ՊՈԱԿ-ի կողմից ցուցադրվել է Հովհաննես Թումանյանի կյանքի և գործունեության մասին պատմող «Ես միշտ ձեզ հետ եմ, ձեր մեջ եմ» փաստավավերագրական ֆիլմը, Երևանի խամաճիկների թատրոնի կողմից ներկայացվել է «Կարապի լիճը» բեմադրությունը, Երևանի մնջախաղի պետական թատրոնի կողմից իրականացվել է բարեգործական ներկայացում, «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է կինոդիտում, «Սերգեյ Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է Սերգեյ Փարաջանովի բանտում ստեղծած աշխատանքների լուսանկարներով տուն-թանգարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է միջոցառում նվիրված Ե. Չարենցի կյանքին և ստեղծագործական գործունեությանը, «Օրբելի եղբայրներ տուն-թանգարան», «Ալեքսանդր Սպենդարյան տուն-թանգարան», «Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ների կողմից ներկայացվել են Օրբելի եղբայրների գիտական, հասարակական գործունեությունը, Սպենդարյան ընտանիքի կյանքից ու անցած ուղուց, Խ. Աբովյանի բանասիրական գաղափարները, «Ազգային արժեք» մշակույթի համահայկական հիմնադրամի կողմից անցկացվել է մշակութային միջոցառում, «Գոյ» կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է մշակութային միջոցառում:

4. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը 2019 թվականի ընթացքում «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագրի շրջանակում ՀՀ ԱՆ «Աբովյան» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում իրականացրել է հետևյալ դասընթացները՝

- «Բիզնես գրագիտություն»,
- «Անգլերեն լեզու»,
- «Դեկորատիվ կիրառական արվեստ/վիտրաժ, խեցեգործություն, բատիկա, գծանկար, զարդակիրառական արվեստ»,
- «Համակարգչային հմտություններ»,
- «Հայոց լեզու և գրականություն»:

Դասընթացներին մասնակցել են ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս դատապարտյալ և/կամ կալանավորված անձինք:

5. Շարունակում է գործել ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ, «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից իրականացվող «Վերականգնողական արդյունավետության և թափանցիկության մշակույթի հիմնում» ծրագրի շրջանակներում հիմնարկում «Կանանց զարգացման ռեսուրս կենտրոն» հիմնադրամի աջակցությամբ բացված ձեռքի աշխատանքների (բրդյա թելերի մանածագործություն, հելունագործություն, գորգագործություն և կարպետագործություն) ակումբը, որոնք նպաստում են մասնակիցների կարողությունների և հմտությունների զարգացմանը:

6. «Ֆորտե», «Սասնա ծռեր» և «Նուբար» երաժշտական համույթները «Կոշ» քրեակատարողական հիմնարկում անցկացրել են համերգային միջոցառումներ:

7. ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ը կազմակերպել է «Քրիստոնյա Հայաստան» ֆիլմի ցուցադրում, «Երվանդ Քոչարի տուն - թանգարան» ՊՈԱԿ-ը՝ «Երվանդ Քոչարի կյանքն ու գործունեությունը» ֆիլմի ցուցադրում, «Արամ Խաչատրյանի տուն - թանգարան» ՊՈԱԿ-ը՝ «Գայանե բալետի» ցուցադրում:

8. «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում կազմակերպվել է Սերգեյ Փարաջանովի նկարների ցուցահանդես:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ.

1. Դատապարտված և/կամ կալանավորված անձանց օգտակար զբաղվածության (կրթություն, սպորտ, աշխատանք և այլն) ընդլայնման նպատակով ՊՈԱԿ-ը «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագիրը» 2020 թվականից՝ «Արմավիր», «Աբովյան» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներից բացի իրականացնում է նաև «Սևան» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում: Միևնույն ժամանակ ՊՈԱԿ-ը՝ Ռազմավարության շրջանակում՝ 2021-2023թթ.-ի միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներառել է դատապարտված և/կամ կալանավորված անձանց օգտակար զբաղվածությունն ապահովող մի շարք նոր միջոցառումներ (կրթական, մշակույթային և վերասոցիալականացման այլ միջոցառումներ):

2. Հարկ է փաստել, որ ՊՈԱԿ-ը **2019 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր իրականացնում է մինչև 19-ը տարեկան դատապարտված և/կամ կալանավորված անձանց հանրակթությունը և ներկայումս հանրակրթություն ստանալու ցանկություն հայտնած վերոնշյալ բոլոր անձինք հանրակթություն են ստանում ՊՈԱԿ-ի կողմից:**

Հարկ է նշել, որ ՊՈԱԿ-ը 2019 թվականի սեպտեմբերից իրավախախտում կատարած մինչև 19 տարեկան անձանց համար իրականացնում է Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագիրը (սույն գլխում այսուհետ՝ Ծրագիր) ՀՀ ԱՆ «Աբովյան» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում:

Նախորդ տարվա ընթացքում ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում դասընթացներն իրականացվում էին խցային պայմաններում, իսկ ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարության ենթակայության ներքո գտնվող ուսումնարանը և համապատասխան դասասենյակները չէին շահագործվում, քանի որ սենյակներում ի պահ էին տրված սնանկության գործով վաճառքի ենթակա՝ նշված ուսումնարանի գույքը: Հաշվի առնելով նոր կորոնավիրուսային համավարակի պայմաններում կրթական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները՝ շահագործվել է մի քանի դասասենյակ: Ներկայումս անխափան իրականացվում է հանրակրթությունը:

2020-2021 ուսումնական տարվա համար կազմվել է 5 դասարան՝ 8 սովորող (9-րդ դասարան՝ 1, 10-րդ դասարան՝ 3, 11-րդ դասարան՝ 1, 12^1-րդ դասարան՝ 3, 12^2-րդ դասարան՝ 1 սովորող): Ընդ որում, 12-րդ դասարանում սովորողները անհամատեղելի են՝ տարբեր սեռի ներկայացուցիչներ լինելու հանգամանքով պայմանավորված:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատմանն է ներկայացվել նաև ՊՈԱԿ-ի կողմից ազատազրկման ձևով պատիժ կրող և (կամ) կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության 2020-2021 ուսումնական տարվա ուսումնական պլանը:

Վերոգրյալի համատեքստում **փաստենք, որ ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման միջոցառումների կայունության ապահովումը ռազմավարական նպատակներից մեկն է: Ուստի, նախատեսված են մի շարք միջոցառումներ, որոնք միտված են այդ նպատակի իրացմանը:** Զուգահեռաբար, հարկ է նշել, որ վերասոցիալականացման միջոցառումների իրականացումը պետք է լինի թիրախավորված՝ հիմնվելով ազատությունից զրկված անձի ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) վրա: Ըստ այդմ՝ մշակվել է «Փի-էյչ Ինթերնեշնլ» կազմակերպության հայկական մասնաճյուղի, ինչպես նաև ՊՈԱԿ-ի հետ համագործակցությամբ իրականացված «Աջակցություն ՀՀ-ում նորաստեղծ պրոբացիայի ծառայությունում երեխայանպաստ մոտեցումների և կառուցակարգերի ձևավորմանը» ծրագրի շրջանակներում մշակվել է «Անչափահասի ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման գործիքը» (սույն կետում այսուհետ՝ Գործիք):

Նշված Գործիքը փորձարկվել է ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող 10 անչափահասի հետ աշխատանքում, որի արդյունքում կազմվել է դրա լրամշակված տարբերակը:

Այնուհետև, իրականացվել է ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի անձնակազմի 15 ծառայողների (աշխատակիցների) համար 3 դասընթաց՝ ուղղված մասնագիտական բարեվարքությանը, ռիսկերի և կարիքների գնահատման գործիքի կիրառման հմտությունների ձևավորմանը:

Ներկայումս Գործիքը շարունակվում է կիրառվել ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում: Միաժամանակ ներկայումս ուսումնասիրվում է

ազատությունից զրկված չափահաս անձանց ռիսկերի և կարիքների գնահատման հնարավորությունները, որի հիման վրա նախատեսվում է մշակել առանձին գործիք:

ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ԿԱՊԸ

Սույն գլխի շրջանակներում Խմբի բարձրացրած հարցերի և դրանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված մեկնաբանությունների պարզ համադրման հիման վրա հարկ է արձանագրել հետևյալը.

- Խումբը նշում է, որ ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կարճատև տեսակցությունների սենյակների դռների վրա առկա են անցքեր, որոնք թույլ չեն տալիս ազատությունից զրկված անձին տեսակցել քրեակատարողական ծառայողի լսողության սահմաններից դուրս: ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված պարզաբանումից հետևում է, որ անցքերը ապակեպատվել են: Այսինքն՝ **Խմբի կողմից բարձրացված խնդիրը լուծված է:**
- ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված վիճակագրության վերլուծության հիման վրա Խումբն արձանագրում է, որ «2019թ. ընթացքում երկարատև տեսակցություն չի տրամադրվել «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի ազատազրկված անձանց: Ավելին, 2019թ. հուլիսին «Երևան-Կենտրոն» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ Խումբը արձանագրել է, որ հիմնարկում չկան երկարատև տեսակցության սենյակներ: (...)»: ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված պարզաբանման հիման վրա ակնհայտ է, որ ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում երկարատև տեսակցությունների սենյակների բացակայությունը չի խոչընդոտում ազատությունից զրկված անձանց իրավունքի իրացմանը, քանի որ նշված ՔԿՀ-ում գտնվողները երկարատև տեսակցություն ունենալու դիմումի դեպքում տեսակցությունն իրականացնում են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում: **Խումբը կարծես չի վիճարկում նշված իրողությունը, հետևաբար, պետք է արձանագրել, որ անգամ սենյակների բացակայության պայմաններում ազատությունից զրկված անձանց համար ստեղծված են անհրաժեշտ նախադրյալները արտաքին աշխարհի հետ կապի արդյունավետ իրացման համար:**
- Արտաքին աշխարհի հետ կապի իրացման միջոցների մեկի՝ հեռախոսակապի ապահովման համատեքստում անհրաժեշտ ենք

համարում տեղեկացնել, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից ստացված տեղեկության համաձայն՝ **«ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը վերանայել է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց համար քարտային հեռախոսներից դեպի հանրային շարժական բջջային կապի ցանցեր զանգերը մատչելի դարձնելու հնարավորության հարցը:** Հաշվի առնելով, որ քարտֆոններից զանգերը կատարվում են որոշակի խոսելաժամանակ պարունակող տարբեր արժողությամբ հատուկ քարտերի միջոցով և տեխնիկական ու ծրագրային լուծումներով պայմանավորված՝ ընկերությունը ներկայումս հնարավորություն չունի փոխելու դրանցում ներառված րոպեների չափաքանակը, ուստի որոշում է կայացվել 50 տոկոսով նվազեցնել նշված քարտերի վաճառքի գինը՝ անփոփոխ թողնելով գրանցում ներառված րոպեները, այն է՝ 960 դրամ արժողությամբ քարտերը կվաճառվեն 480 դրամով, իսկ 1920 դրամանոցը 960 դրամով, և փաստացի զանգի 1 րոպեի արժեքը կկազմի 32 դրամ: Նոր գներով քարտերի վաճառքը նախատեսվում է օգոստոսի վերջին:

- Անդրադարձ կատարելով **թարգմանչի** առկայությանը՝ հարկ է փաստել, որ քրեակատարողական հիմնարկներ մուտք գործած օտարերկրյա քաղաքացիները հնարավորինս իրենց հասկանալի լեզվով ծանոթացվում են իրենց իրավունքներին և պարտականություններին, հիմնարկի ներքին կանոնակարգին: Բացի այդ, կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքները և պարտականությունները թարգմանվել են ռուսերեն, պարսկերեն և անգլերեն, փակցվել տեսանելի վայրերում, ինչպես նաև տրամադրվել վերջիններիս: Ընդ որում, Հայաստանում օտարերկրյա պետությունների դեսպանատների և հյուպատոսական ծառայությունների հետ առկա է համագործակցություն և նրանց ներկայացուցիչներ հետ համատեղ իրականացվում են ստացված դիմումների թարգմանությունները:
- Ինչ վերաբերում է ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում գրաքննության հնարավոր դրևորումներին, ապա հարկ է ընդգծել, որ ցանկացած նամակ, սահմանված կարգին համապատասխան, ներկայացվում է դրա հասցեատիրոջը: Հետաբար, «անհաճո նամակ-բողոքները» չուղարկելու մասին խոսք անգամ լինել չի կարող:

2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ ԽՐԱԽՈՒՍԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԸ

Խումբը խրախուսանքի և տույժի միջոցների կիրառմանն առնչվող թվային վիճակագրական տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ այն «(...) խիստ մտահոգիչ է և թույլ է տալիս եզրահանգել, որ ՔԿՀ-ներում ուղղիչ գործառույթը գրեթե բացակայում է, տարվում է պատժողական քաղաքականություն, ինչը չի նպաստում դատապարտյալների ուղղվելուն»:

Նշված արձանագրման համատեքստում պետք է պարզապես նկատի ունենալ, որ **վիճակագրական տվյալների պարզ համադրումը չի կարող դիտվել որպես դատապարտյալների վերասոցիալականացման, նրանց հետ տարվող քաղաքականության ստուգման օբյեկտիվ և միակ ցուցիչը: Խրախուսանքի և տույժի միջոցի կիրառումը հայեցողական լիազորություն է և կախված է ազատությունից զրկված անձանց դրսևորած վարքագծից:**

Ինչ վերաբերում է Խմբի կողմից դատախազության կողմից խրախուսանքների վիճարկման վերաբերյալ միջնորդությունները ոչ օրինական որակելուն, ապա հարկ է նշել հետևյալը.

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի (սույն գլխում այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածով ամրագրված են դատախազի գործառույթները պատիժների և հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ընթացքում: Այսպես, Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազը հսկողություն է իրականացնում **պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման** օրինականության նկատմամբ:

Բացի այդ, հարկ է նկատել, որ Օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասով հստակ նախատեսված է դատախազի այն իրավունքների սահմանափակ շրջանակը, որն իրականացնում է վերջինս՝ բացառապես **պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման** օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու իր լիազորությունն իրացնելու նպատակով: Նույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ իր լիազորություններն իրականացնելիս դատախազն իրավունք ունի՝ **ստուգելու** Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց կազմում գործող ստորաբաժանումների, ինչպես նաև պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի **պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն իրավական ակտերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը,** որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված **անձի հիմնական իրավունքներին**, պատժի կրման կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ օրենքով սահմանված **կարգին, հիմքերին ու պայմաններին**: Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը **միջնորդում է վերանայել** այն, իսկ այն դեպքերում, երբ, դատախազի կարծիքով, հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնելու ակտն ընդունած

մարմին կամ ակտը վերացնելու միջնորդագիր է ներկայացնում ակտն ընդունած մարմնի համապատասխան վերադաս մարմին կամ պաշտոնատար անձին, իսկ գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը՝ նաև իրավասու հանրապետական գործադիր մարմնի ղեկավարին:

Նշված դրույթից բխում է, որ դատախազն իրավասու է ստուգելու **պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող** իրավական ակտերի՝ գործող օրենսդրությանը համապատասխանությունը, որոնք վերաբերում են՝

1. պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական իրավունքներին,
2. **պատժի կրման** կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ **օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին:**

Այսինքն՝ Օրենքով նշված կոնկրետ մարմնի կողմից ընդունված իրավական ակտի՝ գործող օրենսդրությանը համապատասխանությունը ստուգելու հարցը դատախազի հսկողության առարկայի շրջանակներում լինելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ նշված ակտը վերաբերվի պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը, այնուհետև այն առնչվի կա՛մ պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված **անձի հիմնական իրավունքներին**, կա՛մ **պատժի կրման** կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման՝ **օրենքով սահմանված կարգին, հիմքերին ու պայմաններին:**

Վերոգրյալի համատեքստում հարկ է անդրադառնալ ազատազրկված անձի նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժի միջոցների վերաբերյալ կարգավորումներին: Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի (սույն գլխում այսուհետ՝ Օրենսգիրք) «Ազատությունից զրկելու հետ կապված պատիժները կատարելը» վերտառությամբ 3-րդ բաժնում կարգավորվում են պատիժների կրման կարգի, պայմանների, հիմքերի, ժամկետների հետ կապված հարաբերությունները: Այս առումով հատկանշական է, որ խրախուսանքի և տույժի միջոցների վերաբերյալ կարգավորումները սահմանված են Օրենսգրքի «Որոշակի ժամկետով կամ ցմահ **ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժի միջոցները**» վերտառությամբ 17-րդ գլխում, որն ընդգրկված է պատիժների կրման **կարգի, պայմանների, հիմքերի, ժամկետների հետ կապված հարաբերությունները կարգավորող 3-րդ բաժնում:**

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել նաև, որ թե՛ խրախուսանքի, թե՛ տույժի միջոցները կազմում են մեկ տրամաբանական ամբողջություն, որի հիմքում դրված է դատապարտյալի վարքագիծը, և դրանք, կախված վերջինիս դրական կամ բացասական լինելուց, համապատասխանաբար կիրառվում են Օրենսգրքով սահմանված կարգով: Այլ կերպ՝ Օրենսգրքի 17-րդ գլխում սահմանվում են այն բոլոր հիմքերը, որոնց դեպքում կիրառվում են խրախուսանքի կամ տույժի միջոցները, ինչպես նաև այն պայմանները, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատապարտյալի վարքագիծը խրախուսելու կամ օրինապահ դարձնելու համար:

դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքները, որով պատասխանատվություն է սահմանվել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու համար, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու համար, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու համար, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու համար:Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ խտրականությունը կանխարգելող օրենսդրություն մշակելու, ինչպես նաև խտրականության դեմ համապատասխան այլ մեխանիզմներ ստեղծելու նպատակով ՀՀ արդարդադատության նախարարության կողմից արդեն իսկ մշակվել է «Ազգային փոքրամասնությունների մասին», «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և հարակից օրենքների նախագծեր, որոնց նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Ամրագրելով խտրականության համընդհանուր արգելքը՝ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը սահմանում է խտրականության հասկացությունը և տեսակները, ինչպիսիք են՝ ուղղակի խտրականությունը, անուղղակի խտրականությունը, խտրականության հրահրումը, հետապնդումը և սեգրեգացիան: Անկյունաքարային նշանակություն ունի խտրականության վերաբերյալ բողոքների քննության համար Նախագծով սահմանված ապացուցման բեռի բաշխումը: Նախագծով ամրագրվում են խտրականության հասկացությունը և տեսակները, կանոնակարգվում են խտրականության վերացմանն ուղղված և խտրականությունից պաշտպանվելու իրավական մեխանիզմները, ինչպես նաև Իրավահավասարության խորհրդի կարգավիճակը, խնդիրները և գործունեությունը:

Հարկ է նկատել, որ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է երաշխավորել Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր անձի իրավունքների ու ազատությունների իրականացման հավասար հնարավորությունները, կատարելագործել խտրականության դեմ պայքարի բնագավառի օրենսդրությունը, ապահովել խտրականության կանխարգելման, դրանից իրավական և դատական պաշտպանության իրավական հիմքերը:

Վերոգրյալի հաշվառմամբ այդուհանդերձ հարկ ենք համարում փաստել, որ առկա չէ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հաստատված

այնպիսի դեպք, որով կհավաստվի քրեակատարողական ծառայողների կողմից ազատությունից զրկված անձանց նկատմամբ խտրական մոտեցման ցուցաբերումը:

Անդրադառնալով ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պահման պայմանների հետ կապված հարցին՝ հարկ է ընդգծել, որ իրականացվել են հիմնարկի պահպանությունն իրականացնող ստորաբաժանման մասնաշենքի ամբողջական վերանորոգում, ներքին և արտաքին ջրամատակարարման, ջրահեռացման ցանցի վերանորոգում, ինչպես նաև ասֆալտապատման աշխատանքներ՝ հիմնարկի տարածքում՝ շուրջ 1.236 քառակուսի մետր:

Բացի այդ, վերանորոգվել է մեկուսարանի 2-րդ հարկի լոգարանը: Վերանորոգման և հարդարման աշխատանքներ են իրականացվել պահպանության ապահովման բաժնի մասնաշենքում: Սանհանգույցներում փոխարինվել են սարքեր և սարքավորումներ: Շինարարական աշխատանքների կատարման համար հայտարարած մրցույթում հաղթող ճանաչված «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից (համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման պարագայում) իրականացվելու է նաև բոլոր մասնաշենքերի լոգարանների, սանհանգույցների ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերանորոգման աշխատանքեր:

Անդրադառնալով ազատությունից զրկված անձանց զուգարանի, լոգասենյակի, աղբահանության, կոյուղու և տարածքի մաքրման աշխատանքներում ներգրավելուն՝ հարկ է նշել, որ **ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձինք և դատապարտյալները վարձատրվող և չվարձատրվող, ուղղիչ հիմնարկների կամ դրանց հարող տարածքների բարեկարգման, աշխատանքներում ընդգրկվում են բացառապես իրենց ցանկությամբ և գրավոր դիմումի հիման վրա:**

ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՄ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

➢ ՎԱՐՈՒՅԹՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԽՄԲԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉՏՐԱՄԱԴՐԵԼԸ

Քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից կալանավորված անձանց տեսակցությունների նկատմամբ արգելանքի առկայության դեպքում Դիտորդների խմբի իրավասությունների առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը վերահաստատում է նախկինում արտահայտած դիրքորոշումն առ այն, որ **ՀՀ օրենսդրությամբ Խմբին վերապահված է բացառապես**

քրեակատարողական հիմնարկներ անարգել մուտք գործելու (ելքի), այլ ոչ թե՝ անարգել տեսակցելու իրավունք:

ՀՀ արդարադատության նախարարությունը բազմիցս ներկայացրել և ներկայումս վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված բացառությունները վերաբերելի են միայն փաստաբաններին, Մարդու իրավունքների պաշտպանին, Պաշտպանի ներկայացուցչին, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողին, կանխարգելման ազգային մենանիզմի ստորաբաժանման պետական ծառայողներին և փորձագետներին, որոնց Պաշտպանի գրավոր որոշմամբ սահմանված կարգով և ծավալով վերապահվում են Պաշտպանի լիազորությունները:

Խումբը բազմիցս տեղեկացվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության դիրքորոշումը կիսում են նաև քրեական հետապնդման մարմինները: Խնդրում ենք ընդունել ի գիտություն, որ հարցը ներկայացվել է ՀՀ քրեակատարողական նոր օրենսգիրքը մշակող աշխատանքային խմբին: Ներկայումս ՀՀ քրեակատարողական նոր օրենսգիրքը գտնվում է լրամշակման փուլում, և արդյունքում հարցը կդիտարկվի տվյալ նախագծի շրջանակներում:

- **ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

Դատապարտյալներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի արդյունավետության բարձրացման նպատակով 2018 թվականի հունիսի 23-ին ընդունված օրենսդրական փաթեթով սահմանվեցին ամբողջովին նոր իրավակազմակերպական կառուցակարգեր՝ առաջին անգամ դատապարտյալներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու գործընթացին մասնակից դարձնելով նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնին և պրոբացիայի պետական ծառայությանը:

Իրավական նոր ինստիտուտի կայացման և վերջինիս կիրառման արդյունավետության շարունակական բարձրացման անհրաժեշտությամբ պայմանավորված, 2018 թվականի հուլիս ամսից ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և ՀՀ ԱՆ ղեկավարների, քրեակատարողական հիմնարկների բազմափորձ ծառայողների, հոգեբանների, սոցիալական աշխատողների, ինչպես նաև ՀՀ ԱՆ իրավաբան-գիտնականների կողմից իրականացվել են բազմաբնույթ ուսումնասիրություններ և առարկայական քննարկումներ՝ կապված պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցի կազմման համար դատապարտյալի անձնական գործի և վարքագծի փաստական նկարագրի

վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված տեղեկատվության միասնական և գնահատելի չափորոշիչներ սահմանելու հետ:

Ուսումնասիրությունների շրջանակներում հաշվի են առնվել ինչպես իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունները (այդ թվում՝ հոգեբանների կողմից տարիներ շարունակ իրականացված տարաբնույթ աշխատանքների արդյունքները), այնպես էլ բանտային հոգեբանության ոլորտին առնչվող գիտական-հոգեբանների մոտեցումներն ու դիտարկումները: Բացի այդ, աշխատանքային խմբերի կողմից իրականացված քննարկումների ընթացքում ուսումնասիրվել են պատժի կրումից պայմանական-վաղաժամկետ ազատման վերաբերյալ քրեակատարողական հիմնարկների և քրեակատարողական ծառայության կողմից հընթացս կազմված գրեթե բոլոր զեկույցները, ինչպես նաև դրանցում արված հետևությունների և եզրահանգումների հիմնավորվածության վերաբերյալ դատական ակտերում արձանագրված փաստարկներն ու հետևությունները:

ՀՀ արդարադատության նախարարի 12.07.2018 թվականի թիվ 336-Լ հրամանով սահմանվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցների կազմման կարգը և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Այնուհետև, գործնականում ի հայտ եկած բացթողումներն ու տարաբնույթ մեկնաբանությունները վերացնելու, ինչպես նաև զեկույցի կազմման համար դատապարտյալի անձնական գործի և վարքագծի փաստական նկարագրի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով նախատեսված տեղեկատվության օբյեկտիվ գնահատումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել, որ այդ հանգամանքների գնահատումը դարձվի հստակ ու չափելի:

Այս առումով հատկանշական է, որ գնահատման հստակ ու չափելի չափորոշիչների սահմանումը ըստ էության լուծում է շատ կարևոր երեք հարց.

1. այն ունի հակակոռուպցիոն ուղղվածություն և առավելագույնս սահմանափակում է հայեցողական լիազորությունները,

2. դատապարտյալի համար ստեղծվում է բավարար կանխատեսելի պայմաններ՝ գնահատելու ու գիտակցելու համար, թե ինչպիսի չափանիշներ է անհրաժեշտ ապահովել դրական զեկույցի արժանանալու համար,

3. գնահատման հստակ ու չափելի չափորոշիչների սահմանմամբ լիարժեք ապահովվում է զեկույցի կազմման օբյեկտիվությունը, հիմնավորվածությունն ու միատեսակությունը:

ՀՀ արդարադատության նախարարի 12.07.2018 թվականի թիվ 336-Լ հրամանում կատարված փոփոխություններով ու լրացումներով պատիժը կրելուց

պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցի կազմման համար դատապարտյալի անձնական գործի և վարքագծի փաստական նկարագրի վերաբերյալ ներկայացված տեղեկանքում ներառված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով նախատեսված տեղեկատվության գնահատման նպատակով սահմանվել են հստակ ու չափելի չափորոշիչներ:

Չափորոշիչները գնահատվում են 0-ից մինչև 5 միավորով՝ հաշվի առնելով կոնկրետ գնահատման ենթակա հանգամանքի (դատապարտյալի կողմից կոնկրետ դեպքում ցուցաբերված վարքագծի և կրկնահանցագործության հնարավոր ռիսկի վերաբերյալ ստացված տեղեկատվության) կարևորությունը: Չափորոշիչների միավորների գումարման արդյունքում ստացված առավելագույն միավորը կազմում է 43 միավոր:

Զեկույցը դրական գնահատելու համար անհրաժեշտ է, որ չափորոշիչների գումարման միջոցով հավաքված միավորների չափը կազմի 28 և ավելի միավոր, այսինքն՝ հնարավոր առավելագույն միավորների 65%-ը:

Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերջնական որոշում կայացնելու իրավասությունը ՀՀ օրենսդրությամբ վերապահված է բացառապես դատարանին, հետևաբար, **դատարանը չի կարող որևէ կերպ կաշկանդված լինել ՀՀ ԱՆ քրեակատարողական կամ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կողմից կազմված զեկույցով և դրանում արված հետևություններով:**

Բացի այդ, քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված են հստակ իրավական երաշխիքներ, ըստ որոնց՝ **դատապարտյալն իրավասու է դատական կարգով բողոքարկել և վիճարկել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հարցը դատարան չներկայացնելու մասին քրեակատարողական հիմնարկի պետի որոշումը:**

Դատարանի կողմից դատապարտյալի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հարցի մերժումից հետո հարցի կրկին քննարկման ժամկետը սահմանված է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդված 13-րդ մասով, այն է՝ դատարանի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում դատապարտյալի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կարող է կրկին քննարկվել վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամիս անց, եթե դատապարտյալը նշված ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան 40 օր առաջ ներկայացրել է դիմում, ինչպես նաև սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 434 հոդվածի 3-րդ մասով, այն է՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինումը

դատարանի կողմից մերժվելու դեպքում այդ հարցի կրկին քննարկում կարող է տեղի ունենալ ոչ շուտ, քան մերժման վերաբերյալ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամիս անց, իսկ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց դեպքում՝ երեք տարի անց:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ Ռազմավարությամբ նախատեսված՝ **պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի գործունեության առնչությամբ իրականացվել է մշտադիտարկում՝ ինստիտուտի գործունեությունը կատարելագործելու նպատակով: Նշված մշտադիտարկման արդյունքում ներկայացվել են մի շարք առաջարկներ, որոնք ընթացիկ լուծման ճանապարհին են:**

- **ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ**

Ներկայացված առաջարկներն ըստ էության համահունչ են Ռազմավարությամբ որդեգրված քաղաքականությանը: Ուստի, կձեռնարկվեն անհրաժեշտ քայլերը քրեակատարողական համակարգի կատարելագործման ուղղությամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ արդարադատության նախարարությունը հարկ է համարում ևս մեկ անգամ ընդգծել այն, որ տարիներ շարունակ քրեակատարողական համակարգում կուտակված ոլորտային խնդիրները շարունակում են մնալ ուշադրության կենտրոնում և, ըստ այդմ, նախաձեռնվում և նախաձեռնվելու են այդ խնդիրների լուծմանն ուղղված քայլեր. քրեակատարողական համակարգի բարեփոխմանն ուղղված՝ իր տեսակի մեջ եզակի փաստաթղթով՝ Ռազմավարությամբ թիրախավորվել են ոլորտային բոլոր խնդիրները՝ պահման պայմանների, ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորումից մինչև քրեակատարողական ծառայողների ծառայության համար պատշաճ պայմանների և սոցիալական երաշխիքների ապահովում:

Վերահաստատում ենք այն, որ ՀՀ արդարադատության նախարարությունը մշտապես բաց է համագործակցության համար և պատրաստակամ է խմբի հետ համատեղ ջանքերով հասնելու ոլորտային խնդիրների լուծմանը:

«Ա.Հ.Գրիգորյան»ՍՊԸ

ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 34,

099 92 77 99

www.pmg.am
prisonarmenia@gmail.com